Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝ https://grqaser.org/hy/donate

Ստուգված

Էստոնական գրականություն, Արձակ, Վիպակ

13+

Թարգմանիչ՝ Հարություն Հարությունյան

Էդուարդ Վիլդե

Լուսաբացին

1

Վ. կիսակայարանում, ինչպես և նրա շուրջն ամենուրեք, սովորաբար թմրած տաղտուկ էր տիրում: Կայարանապետը նստում էր իր սենյակում, թեյ էր խմում և հորանջելով կարդում «Սվետ» լրագիրը: Հերթապահ հեռագրիչը ժամերով ամսի քսանի մասին էր մտորում, հետո, վերջապես, նրա գլուխն իջնում էր սեղանի եզրին, հեռագրական ապարատի կողքին, և աչքերը փակվում էին: Պահակը ծանրոցային բաժնում կշեռքի վրա տեղավորվելով՝ իր տղայի կոշիկներն էր նորոգում, ճանապարհի վարպետը դանդաղորեն քայլելով զննում էր գիծը կայարանի մոտ, ինչ-որ հրաման էր տալիս սլաքավարին, ապա գնում էր տուն, կնոջ մոտ: Կայարանի փոքրիկ, դեղին տնակի ետևը, յասամանի թփերի մեջ ճնճղուկներն էին ճռվողում, մատղաշ լորենիների ու սնձենիների շուրջը բզեզներն էին դժժում, անտառից լսվում էր կկուի կանչը. Ամեն ինչ նիրհող թմրություն էր շնչում:

Բայց առավոտյան ու երեկոյան, երբ մարդատար գնացքներն էին ժամանում, Վ. կիսակայարանն աշխուժանում էր ինչպես մի խոշոր հանգույցային կայարան, թեև, ճիշտ է,միայն ամառները: Հյուսիսից ու արևելքից դեպի կայարան ձգվող բոլոր ճանապարհների վրա, իսկ դրանք քիչ չէին, թփերի ու ծառերի կանաչի մեջ երևում էին բաց գույնի հագուստներ, սպիտակ գլխարկներ, վառվռուն հովանոցներ, ամեն գույնի տղամարդու զգեստներ, և շուտով կառամատույցում սկսվում էր մի աշխույժ շարժում, լսվում էր ուրախ աղմուկ ու խոսակցություն: Կայարանի շենքի պատին

նորանոր հեծանիվներ էին երևում, լորենիների ու սնձենիների տակ՝ հեծնելու ձիեր ու սայլակներ: Բանն այն է, որ Վ. կիսակայարանից մի քանի վերստ հեռու վերջերս առաջացել էր մի ամառանոցային ավան: Հովեկների, մանավանդ երիտասարդների համար գնացքների ժամանումն ու մեկնումը մի տեսակ զվարճություն էր դարձել, մանավանդ, որ եղևնու անտառով ու կանաչ դաշտերի միջով դեպի կայարան ձգվող ճանապարհները կարծես հենց զբոսանքի համար էին ստեղծված:

Տ. ամառանոցային ավանում ամառն անց էին կացնում հարուստ քաղաքացիները. այդ ցույց էր տալիս կառամատույցում զբոսնող նրանց ուստրերի ու դուստրերի տեսքը: Նրանց դեմքերը, հագուստներն ու զարդարանքները, նրանց շարժուձևերն ու խոսակցությունը, նրանց վերաբերմունքը միմյանց և կողմնակի մարդկանց — նրանց ամեն ինչը բուրում էր այնպիսի մի բան, որը միավորում էր այդ շրջանակի մարդկանց և դրա հետ միասին գծում անտեսանելի, բայց և պարզ զգալի մի սահման, որը հասարակական այդ խմբավորումը բաժանում էր բոլոր նրանցից, ովքեր իրենց չեն պատկանում: Երիտասարդ կայարանապետը, որն իր սենյակում «Սվետ» կարդալով հորանջում էր տաղտուկից, այժմ ինչպե՜ս էր իրար անցնում, ինչպե՜ս էր հաճոյակատար գլուխ տալիս աջ ու ձախ, ինչպիսի՜ հարգանքով և ուշադրությամբ էր ունկնդրում ամեն մեկին, ով որևէ հարցով կամ խնդիրքով դիմում էր իրեն, ինչպե՞ս էր երջանկությունից շառագունում, եթե դեռահաս օրիորդներից որևէ մեկը մի սիրալիր խոսքի էր արժանացնում իրեն: Իսկ պահակն ու բեռնակիրը — սրանք արդեն դառնում էին այդ պարոնների խոնարհ ծառան: Հենց որ որևէ պարոն, տիկին կամ օրիորդ մոտենում էր նրանց, նրանք արդեն պատրաստ էին վազելու և նրանց հրամանը կատարելու: Քնեած հեռագրիչը, որ այնպես մոլեգին երազում էր ռոճիկ տալու օրը, այժմ թմրությունից ուշքի գալով հարգալից հետաքրքրությամբ դուրս էր նայում լուսամուտից և խտուտ տվող մի հրճվանք էր զգում, եթե իր վրա ուշադրություն չդարձնող այդ պարոնների մեջ գտնում էր մարդիկ, որոնց համարձակվում էր գլուխ տալ, թեկուզ և դա տիկին բժշկուհու սպասուհին լիներ:

Մայիսի վերջի այն անուշ երեկոյին, երբ Անդրեյ Պետրովիչին միանգամայն անսպասելիորեն մեծ պատիվ էր արվել,— նրան դիմավորելու համար գնացքի առաջն էին եկել Ռիզերման օրիորդներն իրենց եղբոր ու հյուրերի հետ,— Վ. կիսակայարանի կառամատույցը նորից լցվել էր աշխույժ բազմությամբ: Այստեղ մեծ ու փոքր խմբերով զբոսնում էին օրիորդներ՝ թեթև հագուստներով ու սանրված վերջին մոդայով, երիտասարդ պարոններ՝ սպիտակ շլյապաներով ու խայտաբղետ սպորտային գլխարկներով, բեղերը դեպի վեր սրած, փոքրիկ, փայլփլուն ձեռնափայտը ձեռքներին, ամեն հասակի աղջիկներ՝ կարճ շրջազգեստներով, ծամերը զարդարված վառ ժապավեններով, վերջապես տղաներ, պատանիներ ու մանուկներ՝ ոմանք դպրոցական տարազով, ուրիշները ամառային թեթև զգեստներով: Հասակավոր պարոններ այստեղ համեմատաբար քիչ կային. նրանք գերադասում էին գարնանային ջերմ, հիասքանչ երեկոն վայելել տանը, այգում:

Անդրեյ Պետրովիչ Կուրբատովը մի քանի օր առաջ հայտնել էր, որ գալու է այսօրվա գնացքով: Պարոն Ռիզեմանը սայլակ էր ուղարկել կայարան: Տանը այդ օրը տոնում էին ֆրոյլայն Ստելլայի ծննդյան տարեդարձը, շատ հյուրեր էին հրավիրված, ուստի և հասկանալի է, որ Ռիզեման ամուսինները չէին ցանկացել կայարան գնալ իրենց որդի Էբերհարդի ապագա ռեպետիտորին դիմավորելու: Ռեպետիտորին դիմավորելու ցանկություն ամենևին չուներ նաև հենց ինքը՝ Էբերհարդը, որովհետև, նախ, նա խիստ վախենում էր ամեն մի ուսուցչից, նույնիսկ եթե ամենահեզ մարդը լիներ նա, և երկրորդ, այդ ռեպետիտորը, որն անպայման ամառային արձակուրդների ժամանակ սահմանափակելու էր Էբերհարդի ազատությունը, և որին դրա համար էլ տղան հենց առաջուց ատում էր, եղած-չեղած՝ մի չքավոր ռուս ուսանող էր: Հարուստ գործարանատիրոջ միակ որդին այդ մարդուն կարող էր համարել միայն մի վարձու ծառայող: Բայց ֆրոյլայն Ստելլան, որ այսօր առանձնապես ուրախ էր շատախոսում իր գեղեցիկ փեսացուի հետ, հանկարծ գոչեց.

— Պարոնա՛յք, գնանք կայարան՝ Կուրբատովին դիմավորելու: Մորաքույր Ագատան Պետերբուրգից գրում է, որ նա, ինչ էլ լինի, շատ հետաքրքիր մարդ է:

Թե ինչ էին նշանակում այդ «ինչ էլ լինի» բառերը, ֆրոյլայն Ստելլան չբացատրեց, բայց նրա առաջարկությունն ընդունվեց: Ամենից առաջ, իհարկե, պարոն Գեբլերը, որն իր համար կանոն էր

դարձրել մինչև ամուսնանալը կուրորեն կատարել իր լավիկ հարսնացուի բոլոր քմահաճույքները, այնուհետև Հայնրիխ Բերգմանը, որ ինքն էլ էր սովորում համալսարանում և կցանկանար ծանոթանալ իր պետերբուրգյան կոլեգայի հետ, որին Ստելլան հետաքրքիր մարդ անվանեց: Հյուրերից ոմանք — մի քանի օրիորդ ու երիտասարդ նույնպես համաձայնեցին մասնակցել զբոսանքին, իսկ Էբերհարդը որոշեց նրանց հետ գնալ հետևյալ փիլիսոփայական նկատառումներով. որքան շուտ տեսնես թշնամուդ, այնքան շուտ կարող ես նրան ցույց տալ քո մագիլները. . . Հակառակվեց միայն ֆրոյլայլն Ռիտա Ռիզեմանը: Իր գեղեցիկ շուրթերը փքելով և կշտամբանքով քրոջը նայելով նա խոսեց սուր, խայթող տոնով, որ այնքան բնորոշ էր նրա համար.

— Բայց մի մտածեցեք, թե ինչպես իրեն մեծ բան կերևակայի այդ մարդը, եթե մենք գնանք նրան դիմավորելու: Մենք միանգամից կփչացնենք նրան:

— Տա՛ — տա՛ — տա՛ — տա՛,— ձայնեց Ստելլան:— Չէ՞ որ նա մեզ հետ պիտի ապրի, միևնույն սեղանին պիտի ճաշի, մենք միշտ հանդիպելու ենք նրան: Եվ, վերջապես, նա ուսանող է, և ինչպես մորաքույր Ագատան է գրում, լավ ընտանիքից, թեպետև չունևոր է:

— Բացի դրանից նա կարող է տուն գալ մենակ, սայլակով, իսկ մենք ոտքով կվերադառնանք,— ավելացրեց պարոն Գեբլերը:

Ռիտան հարցական հայացքով նայեց Հայնրիխ Բերգմանին, որ իր երկրպագուն էր: Սա կարծես տատանվում էր: Նա սղալեց իր վերին շրթունքին հազիվ դուրս եկած աղվամազը, գլխի վրա փոքր-ինչ թեքեց կանաչ գագաթով եռագույն կորպորանտական[1], որ ամառանոցում կրում էր առանց ծածկոցի և դանդաղ, իր սովորական մեծամիտ-անփույթ տոնով ասաց.

— Դե նա հո պետք է իմանա, թե ում հետ գործ ունի: Իսկ եթե ինքը չգիտե, մենք այդ լավ գիտենք:

— Հարկավոր է գոնե մայրիկին հարցնել, տեսնենք ինչ կասի,— շարունակեց պնդել Ռիտան, թեև ավելի հաշտվողաբար: Բայց որովհետև Ստելլան ու Օսվալդ Գեբլերն արդեն թևանցուկ արած ճանապարհ էին ընկել, և մյուսներն էլ հետևում էին նրանց, ապա կրտսեր օրիորդ Ռիզեմանին էլ, որն ընդհանրապես դեմ չէր ոտքով ճանապարհ գնալուն, ոչինչ չէր մնում անելու, քան Հայնրիխ Բերգմանի հետ միասին միանալ բոլորին:

Այժմ նրանք զբոսնում էին կառամատույցում, ողջույններ փոխանակելով ծանոթների հետ, դիտելով ու քննադատելով անծանոթներին և անտարբեր շատախոսելով զանազան դատարկ բաների մասին: Գնացքն արդեն դուրս էր եկել հարևան կայարանից, սեմաֆորը բաց էր:

Ստելլա Ռիզեմանը, երևում է, այսօր իսկապես լավ տրամադրության մեջ էր: Նա, որ իր քրոջ համեմատությամբ սովորաբար ավելի զուսպ էր, լուրջ և նույնիսկ չոր, հանկարծ մի չարաճճի ժպիտով գոչեց.

— Երեխանե՛ր, ո՞վ է ուզում ինձ հետ գրազ գալ: Ես ասում եմ, որ նա թխահեր է:

— Ո՞վ,— հարցրեց Գեբլերը:

— Անդրեյ Պետրովիչն, իհարկե:

— Էբերհարդի ապագա ռեպետիտո՞րը:

— Այո, այո:

— Բայց, Ստելլա, մեզ համար մեկ չէ, թե ինչ գույնի են նրա մազերը:— Ռիտայի ձայնը հնչեց ինչպես ճիպոտի թեթև շրխկոց:— Դու կարծես մի առանձին հետաքրքրություն ունես դեպի այդ մարդը:

---

[1] Կորպորանտ — գերմանական համալսարաններում ուսանողական կազմակերպության անդամ, կորպորանտկա՝ նրա գլխարկը: Ծ. Թ.:

— Հենց այդպես էլ կա, ծիծաղեց Ստելլան։— Գիտե՞ք ինչ. այս բոլոր դեմքերը, որ մենք այստեղ տեսնում ենք ամեն օր, բոլոր մեզ երևացող սփաթները մինչև այստեղ ձանձրացրել են ինձ։— Եվ նա ցուցամատը կոկորդին քսեց։— Ինձ ձեր դեմքերն էլ են ձանձրացրել, դուք թողություն արեք ինձ։

— Իմը նույնպե՞ս,— շինծու վախով հարցրեց պարոն Օսվալդ Գեբլերը՝ հարսնացուի կողմը դարձնելով իր գեղեցիկ, աղայական գիրգ դեմքը և իր խոշոր, դարչնագույն աչքերով կշտամբանքով նայելով աղջկան։

— Կարող է պատահել... Քեզ նույնպես, ինչպես և մյուսներին, ես խիստ հաճախ եմ տեսնում,— պատասխանեց Ստելլան, և նրա կապուտակ աչքերի հայացքը խորամանկաբար և դրա հետ միասին քնքշանքով սահեց փեսացուի դեմքի վրայով։— Ես ձեղ չափից դուրս հաճախ եմ տեսնում, դա բթացնում է իմ տեսողությունը, և ես, բնականաբար, հետաքրքրքրությամբ եմ նայում ամեն մի նոր դեմքի, որ երևում էի իմ հորիզոնում. . . Ես պնդում եմ, որ Անդրեյ Պետրովիչը թխահեր է։ Ո՞վ է ուզում գրազ գալ ինձ հետ։

Պարոն Օսվալդ Գեբլերը, որ իր համար կանոն էր դարձրել մինչև հարսանիք կուրորեն կատարել իր հարսնացուի բոլոր քմահաճությունները, հասկանալի է, իր պարտքը համարեց գրազն ընդունել։

— Ես պնդում եմ, որ նա շիկահեր է, որ նրա մազերը վուշագույն են, ճիշտ ինչպես հորդ ձիապան Յանկիինը։ Կուրբատովի նույնիսկ թարթիչներն սպիտակ են, ինչպես...— Պարոն Օսվալդ Գեբլերը, խոսքը կիսատ թողնելով, բարձր քրքջաց, և նա ու Ստելլան իրար ձեռք սեղմեցին որպես գրազի նշան։ Պայմանավորվեցին, որ գրազը տանողը որևէ անուշ բան է ստանում. մի կողմը պիտի տար երկու ֆունտ շոկոլադ, երկրորդը՝ ըստ շշուկով կնքված համաձայնության — որոշ թվով համբույրներ։

— Իսկ գիտե՞ք ինչ,— բազմանշանակ դանդաղկոտությամբ խոսեց Տարտուի կորպորանտ Հայնրիխ Բերգմանը, որ քայլում էր Ռիտայի կողքին,— եթե դուք, ֆրոյլայն Ստելլա, ցանկանում եք ստույգ տեղեկություն ստանալ այդ Անդրեյ Պետրովիչի արտաքինի մասին, ես կարող եմ նկարագրել նրան։

— Դո՞ւք։ Բայց չէ՞ որ դուք նրան չեք ճանաչում։

— Ճանաչում եմ։ Համենայն դեպս այնքան ճանաչում եմ, որ կարող եմ պատմել, թե ինչ տեսք ունի նա։ Ես շատ Անդրեյ Պետրովիչների եմ ճանաչում, և նրանք բոլորն էլ իրար նման են։ Մեր Տարտուն, ինչպես հայտնի է, հիմա լիքն է նրանցով... Դե ուրեմն լսեցեք, ֆրոյլայն Ստելլա. Անդրեյ Պետրովիչը կարմիր վերնաշապիկ է հագնում՝ փեշերը կախ և կարկատած շալվար, իսկ եթե հագին համազգեստային բաճկոն կա, ապա նրանից կարելի է հաջողությամբ օճառ եփել։ Եթե դրան ավելացնենք նաև շինելը, ապա այնքան օճառ դուրս կգա, որ ձեր լվացարարուհին մի տարում էլ սպառել չի կարող։ Իսկ ինչ վերաբերում է Անդրեյ Պետրովիչի հոյակապ վարսերին, ապա նրա մազերը, որոնց գույնը ես, դժբախտաբար, որոշել չեմ կարող, բանաստեղծական խոպոպներով իջնում են մինչև ուսերը։ Այդ մազերն այնքան խիտ են, որ նույնիսկ փոցխով սանրել չի լինի, և դա մասամբ էլ այն պատճառով, որ արդեն մի երեք տարի է, ինչ նրանց ոչ սանր է դիպել, ոչ փոցխ։

Ամբողջ խումբը, բացառությամբ Ստելլայի, ծիծաղեց։ Առանձնապես անկեղծ քրքջում էր Ռիտա Ռիզեմանը՝ գոհունակությամբ ու հիացմունքով նայելով իր սրամիտ երկրպագուի աչքերին։ Կուրբատովի արտաքինի այն արհամարհական — սուր, նույնիսկ կոպիտ նկարագրությունը, որ տվեց Հայնրիխ Բերգմանը, թերևս կարող էր անհաճո տպավորություն թողնել, բայց այդ երիտասարդը կարողանում էր նույնիսկ ծաղրելիս այնպիսի բարեհոգի ու միամիտ տեսք պահպանել, որ նրա խոսքերի կծուությունը հարթվում մեղմանում էր։ Ստելլան նույնպես չբարկացավ, բայց քանի որ նա մի անգամ հակադրվել էր մյուսներին, ապա այժմ էլ չուզեց պարտական մնալ։

— Ես գիտեմ, Հայնրիխ, թե որքան ճիշտ նկարագրեցիք դուք պարոն Կուրբատովին,— ասաց նա լրջորեն, բայց մեղմ,— սակայն դուք պետք է ընդունեք, որ ողորկ սանրած մազերը և անբասիր սերթուկը դեռ ամեն ինչ չէ, նրանցով չի կարելի դատել մարդու արժանիքների մասին, դրանք դեռ նրան չեն դարձնում ո՛չ իսկական տղամարդ, ո՛չ առավել հետաքրքիր:

Հայնրիխ Բերգմանը խոր գլուխ տվեց:

— Անձնատուր եմ լինում,— հնազանդորեն պատասխանեց նա:

Բայց Ռիտան չուզեց այդպես հեշտությամբ զիջել քրոջը: Նա արհամարհաբար ծռմռեց իր բարակ, բայց վառ շուրթերը, ինչպես սովորաբար անում էր այդպիսի դեպքերում և կծու տոնով վրա բերեց.

— Գիտե՞ս, ինչ վերաբերում է ինձ, ես ավելի շուտ կգերադասեի դուրեկան ու բարեկիրթ մի հիմարի ընկերակցություն, քան կիսավայրենի հանճարի: Ես չէի կարող հարգել փնթի ու գզգզված մարդուն:

— Ճաշակի հարց է, սիրելի Ռիտա,— քմծիծաղ տվեց Ստելլան:— Ես գիտեմ, դու մարդկանց գնահատում ես միայն ըստ հագուստի, իսկ խելքն, ընդհանրապես, բոլորովին ավելորդ բան ես համարում:

Գնացքի ժամանումը նրանց վեճն ընդհատեց: Կայարանի զանգի սուր ձայնը խլացրեց Ռիտայի պատասխանը: Ուղեկիցորդները սանդղակներից ցած էին ցատկում և վագոնների դռները բացում: Լուսամուտներից դուրս էին նայում փոշոտված դեմքեր: Կիսակայարանում իջնող ուղևորները քիչ էին:

Ռիզեման օրիորդները և նրանց ուղեկիցները նայում էին երկրորդ կարգի վագոններին: Միայն Հայնրիխ Բերգմանն էր, որ, ըստ երևույթին, կարծում էր, թե Անդրեյ Պետրովիչը դուրս կգա երրորդ կարգի վագոնից, և այդպես էլ եղավ: Ճիշտ է, բավական ժամանակ անցավ, մինչև վագոնի դռան մեջ երևաց մի ուղևոր, և նրա ուսանողական բաճկոնով կարելի էր իմանալ, որ դա Էբերհարդի ապագա ռեպետիտորն է: Այդ ուղևորը դժվարությամբ բերում էր մի խոշոր, ծանր ճամպրուկ, որը նա պետք է քարշ տար հարթակի վրայով և վագոնի սանդուղքով ցած իջեցներ: Եվ քանի որ գնացքից իջնողների մեջ դա միակ ուսանողն էր, ապա տարակույս չէր կարող լինել, որ ծանր ճամպրուկի տերը հենց ինքը՝ Անդրեյ Պետրովիչ Կուրբատովն է:

Նրան դիմավորողներն անվճռական կանգ առան ու խորհրդակցում էին՝ բոլորը միասի՞ն մոտենան նրան, թե՞ այդ թողնեն միայն տղամարդկանց և կամ, վերջապես, հանձնարարեն միայն Էբերհարդին: Բայց դեռ նրանք չէին կարողացել որևէ որոշման հանգել, երբ անծանոթ ուսանողը ճամպրուկը կառամատույցին դնելով մոտեցավ Էբերհարդին — տղան ռելական դպրոցի նշան կրող գլխարկ ուներ ծածկած — և գերմաներեն լեզվով, թեթևակի ռուսական առոգանությամբ հարցրեց.

— Դուք գործարանատեր Ռիզեմանի որդի՞ն եք:

Տղան զարմացած նայեց նրան և դրական պատասխան տվեց:

— Շատ ուրախ եմ,— արդեն ռուսերեն շարունակեց եկվորը և մտերմաբար ձեռքը մեկնեց նրան:— Ես Անդրեյ Պետրովիչն եմ, քո ապագա ընկերն ու բարեկամը: Ինձ հետ ուղղակի «դու»-ով խոսիր, ինչպես ես եմ խոսում քեզ հետ: Իսկ հիմա ցույց տուր ինձ, որտե՞ղ է կանգնած սայլակը, որպեսզի կարողանամ ճամպրուկս տանել այնտեղ: Եթե հեռու չենք գնալու և դու հոգնած չես, ոտքով տուն գնանք: Համաձա՞յն ես:

Էբերհարդն, ինքն էլ չիմանալով ինչու, այնքան էր շփոթվել իր ապագա ուսուցչի ողջույնից, որ նույնիսկ չկարողացավ որևէ պատասխան տալ և ասես խորհուրդ ու օգնություն ստանալու հույսով նայեց քույրերի ու նրանց ուղեկիցների կողմը, որոնք կանգնած էին քիչ հեռու:

— Կամ գուցե դու մենա՞կ չես,— հարցրեց Անդրեյ Պետրովիչը նայելով նույն ուղղությամբ: Այդ ժամանակ ամբողջ խումբը Ստելլայի գլխավորությամբ ուղղվեց նրա կողմը:—Եթե չեմ սխալվում,

դու շատ ուղեկիցներ ունես,— ավելացրեց Կուրբատովը ժպտալով և, գլխարկը վերցնելով, արագ քայլեց օրիորդներին ու երիտասարդներին ընդառաջ:

Եկվոր ուսանողը ներկայանալով Ռիզեման օրիորդներին ու նրանց հյուրերին՝ Ստելլային գրազը տանելու հնարավորություն տվեց. Անդրեյ Պետրովիչի մազերը թուխ էին, քունքերում փոքր-ինչ ճերմակած և ուներ նույնպիսի մորուք, որի մեջ էլ սպիտակին էին տալիս արծաթափայլ մազեր: Բայց նրա արտաքինի այն նկարագրությունը, որ տվել էր Հայնրիխ Բերգմանը, շատ քիչ չափով էր համապատասխանում իրականությանը: Պարոն Կուրբատովի մազերը կարճ էին, թավ մորուքը խուզված էր կիսաշրջանաձև, հագուստը թեպետև հնամաշ էր ու խունացած, բայց ոչ կեղտոտ էր, ոչ կարկատված: Նա չուներ նաև փեշերը կախ վերնաշապիկ. Ուսերին գցված վերարկուի տակ սպիտակ պարուսինե բաճկոն ուներ հագին: Չափից ավելի խստապահանջ մարդը թերևս միայն նրա գլխարկից գոհ չմնար. արևը, անձրևն ու քամին վաղուց արդեն նրա սկզբնական գույնի հետքն էլ չէին թողել և բոլորովին անորոշ ու անձև տեսք էին տվել նրան:

Եկվորին առավել մեծ հետաքրքրությամբ զննեց Ֆրոյլայն Ստելլան և գտավ, որ Անդրեյ Պետրովիչը գեղեցիկ չէ: Նրա դեղնագունատ դեմքը ծածկված էր ծաղկի թեթև հետքերով, բերանը մեծ էր, շրթունքները՝ հաստ, քիթը՝ խոշոր ու բութ: Բայց այդ ո՛չ գեղեցիկ դեմքը աշխուժացնում ու պայծառացնում էին խոշոր, մուգ աչքերը, որոնք զրուցակիցներին նայում էին հանգիստ, սևեռուն ու դյուրահավատ, ասես ի պատասխան պահանջելով նույնպիսի վստահություն: Անդրեյ Պետրովիչը միջահասակ էր, բայց ամրապինդ ու բարեկազմ, նրա շարժումներն ազատ էին ու վստահ: Երբ նա ողջունելիս աջ ձեռքը մեկնեց, փոքրիկ խմբի մեջ մի անհարմար շփոթություն ընկավ. Ֆրոյլայն Ռիտան վախեցած մի ճիչ արձակելով ետ քաշվեց, Ստելլան նույնպես միայն հազիվ դիպավ այդ ձեռքին:

— Դուք պետք է սրան վարժվեք,— ասաց Անդրեյ Պետրովիչը: Ես համոզվել եմ, որ սրան բավական շուտ են վարժվում:

Պարոն Կուրբատովի աջ ձեռքը, ամբողջ դաստակը, բացառությամբ երկու մատների ծայրերի, ծածկված էր բնածին կարմրակապույտ մի խալով: Այդ ձեռքը հանկարծակի տեսնելով, իսկապես կարելի էր վախենալ. թվում էր, թե մաշկի տակ լերդացած արյուն է հավաքվել:

— Նա պետք է ձեռնոց հագներ... Դա սարսափելի է,— զզվանքով երեսը շուռ տալով շշնջաց Ռիտան Հայնրիխ Բերգմանին:

Անդրեյ Պետրովիչը ասես նրա խոսքերը լսելով գրպանից հանեց մի զույգ սպիտակ գործվի ձեռնոց և քաշեց ձեռքերին:

— Ամառը ես սիրով չեմ հագնում ձեռնոցները, ներեցեք,— հանգիստ ասաց նա դառնալով բոլորին:

Մինչ այդ կառամատույցի վրա երևաց Ռիզեմանի կառապանը և օրիորդ Ստելլայի ցուցումով պարոն ուսուցչի բեռը տարավ սայլակ:

— Մենք ոտքով ենք կայարան եկել և ոտքով էլ կվերադառնանք. մենք ամեն օր այսպիսի զբոսանք ենք կատարում: Իսկ դուք, պարոն Կուրբատով, երևի սայլակո՞վ կգնաք, որ ուղարկվել է ձեզ համար,— հարցրեց Ստելլա Ռիզեմանը, որը, ըստ երևույթին, որոշել էր իր վրա վերցնել տանտիրուհու դերը:

Բայց պարոն Կուրբատովը նայեց իր ապագա աշակերտին և ասաց.

— Այդ թող որոշի իմ երիտասարդ բարեկամը, որից ես բաժանվել չէի ուզի: Էբերհարդ, սայլակո՞վ գնանք, թե՞ ոտքով:

— Ես սրանց հետ կգնամ,— պատասխանեց տղան աչքի տակով նայելով իր ուսուցչին, իսկ հետո հենց այնպես, տարածությանը:

— Դե, ուրեմն ես էլ ձեզ հետ կգամ,— եզրակացրեց Անդրեյ Պետրովիչը:

Ֆրոյլայն Ռիտան հոնքերը կիտեց, բարկությամբ ուսերը թոթվեց, դեպի Հայնրիխ Բերգմանը դառնալով գլուխն օրորեց և մի քանի քայլ առաջ անցավ, ասես ցանկանում էր խմբից անջատվել: Հայնրիխ Բերգմանը երևի նրա զգացմունքին համամիտ՝ հետևեց աղջկան: Օսվալդ Գեբլերը իր գեղեցիկ աչքերով հարցական նայեց իր հարսնացուին, ապա մյուս օրիորդներին ու նրանց ուղեկից պարոն Ջոն Մյուլբախին: Բայց Ստելլա Ռիզեմանը արագ որոշում ընդունեց առանց ուշադրություն դարձնելու մյուսների վրա.

— Հիանալի: Պարոն Կուրբատով, գնանք միասին: Յուրի, պարոն ուսուցչի ծանրոցը տուն տար, պարոն ուսուցիչը մեզ հետ ոտքով կգա:

Զարմանալի ոչինչ չկար, որ Ռիտա Ռիզեմանն Հայնրիխ Բերգմանը մյուս ուղեկիցներից առաջ ընկնելով՝ աշխատում էին մի քանի տասնյակ քայլ հեռավորության վրա մնալ: Մյուսները հետևում էին նրանց, այնպես որ Անդրեյ Պետրովիչի մոտ մնացին միայն Ստելլան, Գեբլերը և Էբերհարդը, որը հնազանդվել էր քրոջ գաղտնաբար տված նշանին: Երբեմն նույնիսկ պատահում էր, որ Ստելլան Կուրբատովը մենակ էին մնում, որովհետև Գեբլերը հաճախ մոտենում էր Ջոն Մյուլբախին՝ նրանից ծխախոտը կպցնելու և խոսքի էր բռնվում նրա հետ, իսկ Էբերհարդը հեռու էր փախչում օգտվելով որոպեներից, երբ քույրն աշխույժ զրուցում էր ռուս ուսանողի հետ:

Համարյա անծանոթ այդ մարդու հետ Ստելլայի սիրալիր վերաբերմունքը ոչ ոքի առանձնապես չէր զարմացնում: Դա նրա «քմահաճույքներից» մեկն էր, իսկ Ռիզեմանի ընտանիքի բոլոր բարեկամները գիտեին, որ Ստելլան քմահաճ է: Քմահաճ է ու ինքնակամ, իսկ հաճախ էլ՝ կամակոր: Նա երբեմն այնպիսի մտքեր էր արտահայտում ու դատողություններ անում, իսկ երբեմն էլ այնպիսի բաներ էր անում, որ շրջապատի մարդիկ, առանձնապես քնքուշ սեռի մեծահասակ ներկայացուցիչները, ժպիտով կամ նույնիսկ բարկությամբ գլուխներն էին օրորում: Ստելլային ասես բավականություն էր պատճառում գովաբանել հենց այն, ինչ ուրիշները դատափետում էին: Ասում էին, թե նա հակաճառելու նոպայով է բռնված, և որովհետև նա կարողանում էր շատ հմտորեն հակաճառել, խուսափում էին նրա հետ վիճաբանության մեջ մտնել, ջանում էին առանց դրան յոլա գնալ: Այդպես էր վարվում նախ և առաջ պարոն Գեբլերը, որն իր համար կանոն էր դարձրել մինչև ամուսնություն կուրորեն կատարել իր հարսնացուի բոլոր քմահաճույքները, ինչպես նաև ուրիշ շատ երիտասարդներ: Բոլորը ներում էին ֆրոյլայն Ստելլայի քմահաճությունն ու կամակորությունը:

Ինչ վերաբերում է Էբերհարդին, ապա նրան ոչ մի կաթիլ դուր չէր գալիս իր նոր տանջիչը, իսկ տանջիչ նա համարում էր ամեն մի ուսուցչի: Նա գտնում էր, որ իր ռեպետիտորը տգեղ է ու գռեհիկ և դրա համար արհամարհում էր նրան: Նոր ուսուցչին նա ատում էր նրա ազատ, անբռնազբոսիկ վերաբերմունքի համար, որը, ի միջի այլոց, արտահայտվեց նաև նրանով, որ Անդրեյ Պետրովիչը նրա՝ Էբերհարդ Ռիզեմանի, գործարանատեր Ռիզեմանի որդու հետ առաջին իսկ խոսքից սկսեց «դու»-ով խոսել: Իսկ Կուրբատովը նույնիսկ նրա իսկական ուսուցիչն էլ չէր, այլ եղած-չեղած՝ ամառային արձակուրդների ժամանակ հրավիրված մի ռեպետիտոր էր: Այն, որ Անդրեյ Պետրովիչը թույլատրել էր իր հետ էլ «դու»-ով խոսել, տղան դա պարզապես համարում էր մի անհեթեթ կատակ: Էբերհարդ Ռիզեմանն ատում ու արհամարհում էր Անդրեյ Պետրովիչին, ուստի և այժմ իր անմիտ գլուխն էր կոտրում այն հարցի վրա, թե ինչպես առաջին իսկ քայլերից նրան ցույց տա իր մագիլները: Եվ շուտով նա որոշեց սկսել այդ:

— Դուք եկաք երրորդ կարգի վագոնով, պարոն Կուրբատով,— ասաց նա,— այնինչ հայրիկս ձեզ համար երկրորդ կարգի վագոնով գալու փող էր ուղարկել:

Էբերհարդն այս խայթն իր տանջիչին ուղղեց այնպիսի մի ժամանակ, երբ խմբի մեծ մասը մոտիկ էր և ամեն մի խոսք կարող էր լսել:

Լռություն տիրեց: Ստելլան աչքերը չռելով վախեցած նայեց տղային, բայց հնար չգտավ, թե ինչպես կշտամբի նրան կամ նրա խոսքերի տպավորությունը հարթի: Մյուսները շփոթված ժպիտով գաղտուկ փսփսում էին իրար հետ: Ափսոս, որ Ռիտան ու Հայնրիխ Բերգմանն այնքան հեռացել էին. Ռիտան սրտանց կուրախանար եղբոր հնարամտությունից: Բայց, թերևս, միայն առաջին որոպեին, որովհետև Անդրեյ Պետրովիչն իսկույն պատասխանեց.

— Ես երրորդ կարգի վագոնով եկա նրա համար, որ ուզում էի ճանապարհին զրուցել իմ ուղեկիցների հետ: Իսկ այն փողով, որ մնացել էր քո հոր ուղարկած գումարից, ես քեզ համար մի ընծա եմ գնել, Էբերհարդ, մի շատ օգտակար գրքույկ: Դու գիրք սիրո՞ւմ ես, բարեկամս:

Օ՛, ո՛չ, այդ «բարեկամը» *ատում էր* գիրքը, բայց որովհետև նա զգաց, որ ինքը պարտություն կրեց և աշխատում էր չար դիտավորությունը ծածկել հնազանդության քողով, ուստի պատասխանեց, թե գիրք սիրում է:

— Դա ինձ ուրախացնում է,— ասաց պարոն Կուրբատովը՝ ձեռքը մտերմաբար դնելով տղայի ուսին:— Ես էլ գրքեր շատ եմ սիրում, նրանք իմ ամենալավ բարեկամներն են և երբեք ես նրանցից չեմ բաժանվում: Դրա համար էլ հետս շատ գրքեր եմ բերել. իմ ծանր ճամպրուկը լիքն է նրանցով, և դու կարող ես կարդալ բոլորը, որոնք ցանկանաս ու հասկանաս: Ես ունեմ մի քանի գրքույկ, որ իմ նախկին աշակերտները մեծ հափշտակությամբ էին կարդում և օգուտ ստացան:

Էբերհարդը մի վախեցած հայացք գցեց այդ վտանգավոր գրքասերի վրա և առաջին իսկ հարմար առիթից օգտվեց, որ հեռու փախչի նրանից: Ստելլա Ռիզեմանը նորից Անդրեյ Պետրովիչի կողքին մենակ մնալով շարունակեց խոսակցությունը՝ վերադառնալով նույն նյութին, բայց արդեն այլ կողմով:

— Դուք երրորդ կարգի վագոնով եք եկել, որովհետև ցանկանում էիք զրուցել ձեր ուղեկիցների հետ,— ասաց նա այնպիսի մի տոնով, որի մեջ ասես խնդրանք էր լսվում՝ ներել իր եղբոր անտակտությունը:— Ինչպե՞ս պետք է հասկանալ այդ, Պարոն Կուրբատով: Չէ՞ որ երկրորդ կարգում էլ կարելի է զրուցակիցներ գտնել:

— Ինձ համար ավելի ուսանելի և հետաքրքիր է խոսել ժողովրդի մարդկանց հետ, իսկ նրանց կարելի է գտնել միայն երրորդ կարգում,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը:

«Ա՛, ժողովրդի բարեկամ է»,— մտածեց Ստելլա Ռիզեմանը և փոքր-ինչ ծաղրաբար ժպտաց:

— Բայց դուք, երևի, այնքան էլ շատ չէիք զրուցի ժողովրդի հետ, չէ՞ որ գնացքը Նարվայից անցնելուց հետո երևի ձեզ համար լեզվական դժվարություններ ծագեցին:

— Այնքան էլ չէ, ֆրոյլայն Ռիզեման: Ես էստոներեն բավական ազատ խոսում եմ: Երեք տարի տնային ուսուցիչ եմ եղել Վիլյանդի գավառում, և քանի որ ես լեզուներ հեշտ եմ սովորում, շրջապատիս օգնությամբ էստոներեն սովորեցի... Դուք երևի էստոնուհի՞ եք, ֆրոյլայն Ռիզեման:

Ստելլան արագ նայեց Կուրբատովին:

— Դուք այդ ինչի՞ց եզրակացրիք:

— Ձեր դիմագծերից: Բայց գուցե և սխալվում եմ,— հանգիստ պատասխանեց Անդրեյ Պետրովիչը, մինչդեռ ֆրոյլայն Ստելլայի դեմքը կաս-կարմիր կտրեց, քանի որ եկվորը, ինքն էլ առանց զգալու, ծանր վիրավորել էր նրան:

— Որքան ինձ հայտնի է, ես գերմանուհի եմ,— պատասխանեց ֆրոյլայն Ռիզեմանը բավական կտրուկ, բայց ո՛չ բոլորովին վստահ և աչքի տակով նայեց Կուրբատովին, ասես վախենալով, թե նրա դեմքին թերահավատության արտահայտություն կնկատի:

Բայց Անդրեյ Պետրովիչի դեմքը հանգիստ ու անտարբեր էր, այնտեղ ոչինչ չէր կարելի կարդալ:

Երբեմն որքա՜ն ուժեղ տպավորություն է գործում պատահաբար ասված մի աննշան խոսք: Անդրեյ Կուրբատովը հազիվ թե կարողանար ենթադրել, որ պատահաբար լեզվից թռած մի հասարակ խոսքով բարկացրել և իր դեմ է հանել ամբողջ խմբի մեջ այն միակ մարդուն, որն իրեն մոտեցել էր առանց կանխակալ կարծիքի, համարյա բարեկամական հետաքրքրությամբ ու կարեկից սրտով: Ստելլա Ռիզեմանն իրեն վիրավորված էր զգում: Չէ՞ որ այս ռուսը պետք է իմանար,— ցասումի առաջին պոռթկումին այսպես էր մտածում մատաղահաս աղջիկը,— որ էստոնացիներն ընդհանրապես գեղեցիկ չեն համարվում, այնինչ Կուրբատովն ըստ արտաքինի էստոնուհու տեղ է դրել իրեն՝ Ստելլա Ռիզեմանին, որն ամենայն իրավամբ իրեն ամենագեղեցիկ աղջիկների շարքն

էր դասում: Սա առաջին հարվածն էր: Ստելլան այդ մարդուն համարեց առնվազն կոպիտ, անտակտ: Բացի դրանից, եթե Կուրբատովն իսկապես, մի քանի տարի ապրել է Մերձբալթիկայում, ապա նա պետք է իմանա, որ այստեղ ունևոր ու կրթված մարդկանցից ոչ ոք չի ուզում էստոնացի լինել, որ դա համարվում է ստորացուցիչ, վիրավորական, և երբ ասում են «էստոնացի», հասկանում են միայն ռամիկ կամ ընդհանրապես ստորին խավի տգետ կամ կիսագրագետ մարդ: Իսկ եթե Կուրբատովն այդ գիտեր, նշանակում է նա դիտավորյալ ցանկացել է ստորացնել ու վիրավորել Ստելլա Ռիզեմանին: Բնականաբար ուրիշ ոչ մի եզրակացության գալ չէր կարող գործարանատեր Ռիզեմանի դուստրը, որի մտահորիզոնը սահմանափակված էր իր հասարակության նեղ շրջանակով: Բայց այդ րոպեին Ստելլա Ռիզեմանի մեջ Անդրեյ Պետրովիչի նկատմամբ թշնամական զգացմունք արթնացավ նաև մի երրորդ պատճառով: Աղջիկը նրա պատճառով խիստ անհարմար դրության մեջ էր ընկել. նա վախենում էր, թե իր սուտը կբացվի: Եթե Կուրբատովը գեթ մի փոքր գիտեր Մերձբալթիկայի մարդկանց ու պայմանները, իսկ նա, ըստ երևույթին, այդքան գիտեր դրանք, ապա նա շուտով պիտի հասկանար, որ գործարանատեր Մարտին Ռիզեմանն էստոնական այն կարգի գերմանացիներից է, որոնք չեն ցանկանում էստոնացի լինել: Գործարանատեր Ռիզեմանը ոչ միայն հիանալի խոսում էր էստոներեն, այն էլ հյութալի գյուղացիական լեզվով, այլև գերմաներեն ու ռուսերեն խոսում էր այնպիսի զուտ էստոնական առոգանությամբ ու դարձվածքներով, այդ լեզուներով խոսելիս այնպիսի դավաճանող բնորոշ քերականական սխալներ էր անում, որ նրա ինչ ազգության պատկանելը կարող էր կասկածել միայն այն մարդը, որ ընդհանրապես չգիտե, թե աշխարհում գոյություն ունեն էստոնացիներ: Իսկ Ստելլա Ռիզեմանը Կուրբատովին առարկում էր, պնդելով, թե ինքը գերմանուհի է:

Նրանց զրույցը մի դադար առավ, որը, սակայն, անհարմար էր թվում միայն դեռատի աղջկան: Անդրեյ Պետրովիչը բոլորովին անվրդով տեսքով բնությունն էր դիտում: Արեգակն իջնում էր անտառի ետևը, այն ուղղությամբ, դեպի ուր գնում էին նրանք, և մայրամուտի բոսորագույն ֆոնի վրա երևում էր մուգ կանաչավուն եղևնուտը, որի եզրին խառնվել էին կեչիներ, լաստենիներ ու սնձենիներ: Ալ վերջալույսը ծառերի միջով թափանցում էր ինչպես մի փայլփլուն ոսկեցանց, և նրա ճառագայթները գագաթների շուրջը շիկավուն շողշողուն պսակներ էին հյուսում: Օդը հագեցած էր մարգագետինը ծածկող ծաղիկների ու թարմ կանաչի բուրմունքով: Ցածում գալարվող գետակի վրա սպիտակ մշուշ էր կանգնել: Մենավոր մի թռչնակ ողբաձայն ճռվողում էր մի ինչ-որ տխուր բան, որը թախիծ էր հարուցում, իսկ անտառի թավուտից սոխակի երգն էր լսվում: Այդ երգի մեջ ողբ էր հնչում, որին երբեմն փոխարինում էր ուրախության ու հույսի բուռն դայլայլ, որ ասես երգչի կրծքից էր դուրս թռչում: Չէ՞ որ նորից եկել էր գարունը, օ՜, թող ուրեմն նա ճանապարհ բացի սիրելի, շոգ ու առատաբուխ ամառվա համար:

— Է՜հ, մայրաքաղաքցի կոլեգա, ինչպե՞ս է հիմա քաղաքականության վիճակը:

Անդրեյ Պետրովիչն ասես մոռացումից սթափվելով նայեց խոսողին: Նրա հայացքն ընկավ Հայնրիխ Բերգմանի գունավոր գլխարկի վրա, որի տակին սպիտակին էր տալիս երիտասարդի նուրբ, արևախանձությունից պաշտպանված դեմքը: Նա ժպտում էր համարյա ծաղրաբար, կիսամեծամտաբար, կիսաբարեկամաբար, ինքնավստահ բարեհաճությամբ, և նրա անփույթ ու փոքր-ինչ բարձր տոնի մեջ երևում էին միևնույն գծերը:

Պատանի ուսանողը ետ էր մնացել խմբից, ասես ուզում էր լսել, թե ինչի մասին են զրուցում այդ ռուսը և Ստելլա Ռիզեմանը:

— Քաղաքականությո՞ւնը,— հարցրեց Կուրբատովը:— Բայց դա երևի ձեզ հայտնի է:

Բերգմանը սաթե մուշտուկի մեջ դրված բարակ, դեղնավուն սիգարը վառելով արհամարհաբար գլուխն օրորեց:

— Մենք քաղաքականությամբ չենք զբաղվում, դա հո հայտնի է, — պատասխանեց նա շեշտելով «մենք» բառը:

— Այդ դեպքում, նշանակում է, ձեզ չի էլ հետաքրքրում այն, ինչի մասին հարցնում եք:

— Դե հենց այնպես, զվարճության համար կուզեինք իմանալ, թե երբ տեղի կունենան հերթական խլրտումները: Այդպիսի բաների մասին հետաքրքիր է լսել:

— Դժբախտաբար, պարոն Բերգման, դրա մասին ես ձեզ ոչինչ ասել չեմ կարող: Ավելի լավ է սպասեցեք:

Հայնրիխ Բերգմանը մի արագ հայացք սահեցրեց ռուսի երեսով: Բայց Կուրբատովն անտարբեր ցած էր նայում, այնպես որ չէր կարելի հասկանալ՝ նրա պատասխանի մեջ որևէ ծակող բան կա՞ր, թե՞ ոչ: Երիտասարդը տեսնելով, որ խոսակցության համար իր ընտրած նյութը ամենևին չի օգնում մոտիկից ճանաչելու մայրաքաղաքցի կոլեգային, անցավ սովորական հարցերի: Նա հարցրեց, թե պարոն Կուրբատովը վաղո՞ւց է սովորում համալսարանում և արդյոք շուտով ավարտելու հույս ունի՞:

— Դատելով ըստ արծաթափայլ թելերի, որոնք զարդարում են ձեր մորուքը, ես պետք է հարգանքով ձեզ դասեմ համալսարանի սյուների շարքը,— ավելացրեց նա մի ժպիտով, որի մեջ արդեն հեգնանք չկար:— Կամ գուցե դուք համալսարան եք մտել արդեն հասո՞ւն տարիքում:

Անդրեյ Պետրովիչը մի կողմ քաշվեց, որպեսզի ճանապարհ տա անցնող երկու հեծանվորդներին ու ձիավորին, ապա մորուքը շոյելով պատասխանեց.

— Ես արդեն տասը տարի է համալսարանումն եմ: Իսկ մազերի վաղ սպիտակելը մեր ընտանիքում, ըստ երևույթին, ցեղական է: Իմ հանգուցյալ հայրը երեսունհինգ տարեկան հասակում ավելի շատ ճերմակ մազեր ուներ, քան հիմա՝ ես:

— Դուք տասը տարի համալսարանո՞ւմ եք: Եվ շարունակ միևնույն ֆակուլտետո՞ւմ,— գոչեց Հայնրիխ Բերգմանը:

— Ոչ, արդեն երրորդ ֆակուլտետում կամ, եթե կուզեք, նույնիսկ չորրորդ: Բանն այն է, որ ես համալսարան եմ փոխադրվել հոգևոր ճեմարանից, սկզբում իրավաբանական ֆակուլտետ, հետո զբաղվել եմ քաղաքատնտեսական գիտություններով, իսկ հիմա սովորում եմ բժշկականում:

— Իսկ դրան ինչ է հետևելու,— ժպտաց Բերգմանը:

— Դեռ չգիտեմ:

— Եվ հետո ո՞ւր կգնաք դուք ձեր այդ ամբողջ գերիմաստությամբ:

— Այնտեղ, ուր դրա անհրաժեշտություն կլինի, որտեղ ես կարող եմ առավել օգտակար ձևով կիրառել այն:

— Օգտակար ձե՞զ համար, թե՞ ուրիշների:

— Ե՛վ ուրիշների, և՛ ինձ:

— Ուզում եք ժողովրդի մե՞ջ գնալ, ինչպես ասում է հայտնի լոզունգը:

— Ես արդեն ժողովրդի մեջ եմ:

— Իսկ նախորդ դասընթացներից որևէ մեկը արդեն ավարտե՞լ եք դուք:

— Այո, ես իրավագիտության թեկնածու եմ:

— Եվ հիմա էլ ուզում եք գործնական բժի՞շկ դառնալ:

— Իսկ և իսկ:

Ստելլա Ռիզեմանը, հենց որ Բերգմանը միացել էր նրանց— իսկ այդ հենց իսկը ժամանակին էր եղել— մի քանի քայլ հեռացել էր Կուրբատովից, բայց ո՛չ այնքան, որ չլսի ուսանողների խոսակցությունը: Այժմ նա նորից մոտեցավ նրանց, ըստ երևույթին մոռացության էր տվել իր սրտնեղությունը կամ խեղդել էր այն:

Հայնրիխ Բերգմանն աչքի տակով նայեց աղջկան, աչքով արեց նրան, և նրա գեղեցիկ, թարմ դեմքի վրայով սահեց մի ինչ-որ բռնազբոսիկ, նույնիսկ փոքր-ինչ նախանձոտ քմծիծաղ, որ կարծես ֆրոյլայն Ստելլային ասում էր. «Եվ մի՞թե ճիշտ է, ինչ որ սա դուրս է տալիս: Պարծենում է միայն, փորձում է տպավորություն գործել»: Բայց դառնալով դեպի Անդրեյ Պետրովիչը, բարեկիրթ կորպորանտը նույնքան հարգալից, որքան և պարզասիրտ տոնով հարցրեց.

— Իսկ ի՞նչ մշտական զբաղմունք կընտրեք դուք ձեզ համար, պարոն Կուրբատով. մե՞կը, թե՞ միանգամից մի քանիսը:

— Չգիտեմ,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը:— Ես սովորություն չունեմ իմ ապագան սահմանափակելու ինչ-որ նախապես մտածված նեղ ծրագրով: Ես կարծում եմ միայն, որ իմ ձեռք բերած բոլոր գիտելիքները կարող եմ կիրառել ամեն զբաղմունքի ժամանակ, մեկ մասնագիտությամբ աշխատելիս լինեմ, թե բոլորով միանգամից:

Այստեղ ֆրոյլայն Ստելլա Ռիզեմանը տեղին համարեց իր խոսքն ասել, որովհետև զգում էր, որ հանկարծակի իրեն համակած լռությունը կարող է կասկածելի թվալ: Երբ խոսել սկսեց, նրա աչքերը շողացին գրգռիչ կերպով.

— Բայց մի՞թե այն օգուտը, որ դուք ուզում եք բերել ուրիշներին և ձեզ, ավելի մեծ չէր լինի, եթե ուսումնասիրեիք գիտության միայն մեկ ճյուղ և հետո ձեզ նվիրեիք միայն մեկ զբաղմունքի, առանց ձեր ուժերը ջլատելու ոչ ուսման ժամանակ, ոչ էլ աշխատանքի:

— Անդրեյ Պետրովիչը դարձավ դեպի աղջիկը և մի րոպե լուռ նայեց նրա երեսին ուրախ ու խրախուսական հայացքով:

— Իմ կարծիքով ուրիշներին ես կարող եմ այնքան ավելի շատ օգուտ տալ, որքան ավելի ընդարձակ լինեն իմ գիտելիքները, որքան ավելի բազմակողմանի լինեմ ես: Որքան ավելի շատ բան կարողանամ տալ մեծ թվով մարդկանց, այնքան ավելի լավ: Ես ավելի շուտ կգերադասեի վատ փաստաբան ու վատ բժիշկ դառնալ, քան վատ իմանալ կյանքն ու մարդկանց, վատ խորհրդատու և քննադատ լինել... Իսկ ինչ վերաբերում է իմ անձնական շահին, իհարկե, զուտ կենսական իմաստով ինձ համար ավելի օգտակար կլիներ հիմնավորապես ուսումնասիրել մեկ մասնագիտություն և հիմնավորապես զբաղվել նրանով, առանց ուժերս ջլատելու: Բայց ես ամենևին գործնական մարդ չեմ, ֆրոյլայն Ռիզեման, ինչպես և համոզված չեմ, թե կարող եմ գործնական ծառայող լինել: Ես այնքան կայունություն, հաստատակամություն ու համբերություն չունեմ, որ նվիրվեմ միայն մեկ զբաղմունքի, միշտ միևնույն բանն անեմ, միևնույն բաների մասին մտածեմ, ամբողջ կյանքումս մնամ միևնույն կեղևի մեջ: Ես կարող եմ շատ աշխատել, բայց չեմ կարող շարունակ միևնույն բանն անել: Եթե ես բժիշկ կամ փաստաբան դառնայի, շուտով կնախանձեի փայտահատին կամ տանիքագործին և իմ ծառայությունը թողնելով կգնայի նրանց հետ աշխատելու:

— Բայց ո՛չ ընդմիշտ,— ժպտաց Ստելլան: (Նա արդեն նորից կարող էր ժպտալ):

— Այո՛, ո՛չ ընդմիշտ:

Հայնրիխ Բերգմանը նորից գաղտնաբար նայեց աղջկան, և այժմ նրա քմծիծաղը պարզ ասում էր. «Ճգնում է ինքնօրինակ երևալ»: Բայց Ստելլան այս անգամ երիտասարդի ոչ հայացքը նկատեց, ոչ քմծիծաղը, նա զբաղված էր միայն Անդրեյ Պետրովիչով:

— Իսկ դուք ինչպե՞ս ընկաք հոգևոր ճեմարան, պարոն Կուրբատով,— հարցրեց նա:

— Ինձ տվեցին այնտեղ:

— Տվեցի՞ն:

— Այո: Իմ հայրը հոգևոր բարձր կոչում ուներ և ուզում էր, որ ես էլ հասնեմ նույն բանին: Ես փորձեցի կատարել հորս ցանկությունը, որովհետև սիրում էի նրան:

— Բայց ձեր ապագա գործունեությունը ձեր սրտովը չէ՞ր:

— Ես չուզեցի միակողմանի մարդ դառնալ:

— Նշանակում է ձեր հոր կամքին հակառա՞կ վարվեցիք:

— Այո:

— Նրա մահից հետո՞:

— Ոչ, երբ նա դեռ ողջ էր: Նա ինձ ներեց:

— Իսկ եթե չներե՞ր:

— Ես իմ որոշումը չէի փոխի: Ես պետք է ապրեի ոչ թե հորս համար, այլ ինձ և հասարակության համար:

Ստելլայի հայացքն այժմ ավելի երկար կանգ առավ Կուրբատովի ծաղկատար դեմքի վրա: Մի պահ մտածելուց հետո նա հարցրեց.

— Իսկ որքա՞ն է դուր գալիս ձեզ ձեր այժմյան մանկավարժական գործունեությունը:

Անդրեյ Պետրովիչի դեմքով ասես արևի մի պայծառ շող սահեց, նրա դեմքը համարյա գեղեցկացավ, իսկ չոր ու խռպոտ ձայնը հնչեց զարմանալի ջերմ ու մեղմ:

— Այս աշխատանքը ես ամենից ավելի եմ սիրում: Երբեմն ինձ թվում է, թե սա միակ բեղմնավոր ու շնորհակալ աշխատանքն է:

— Բայց ասում են, որ հենց այդ աշխատանքն էլ ամենից ավելի համբերություն, տոկունություն ու հաստատակամություն է պահանջում:

— Միանգամայն ճիշտ է: Բայց այս գործի համար ես այդ հատկություններից բավական ունեմ, համենայն դեպս մինչև հիմա ունեցել եմ: Ես չեմ կարող պատկերացնել ավելի ուրախալի զգացմունք, քան, ահա, այս. դու նկատում, տեսնում ու լսում ես, թե ինչպես այն սերմը, որ ցանել ես հատիկ առ հատիկ, ծիլեր է տալիս պատանու հոգում, ինչպես են բողբոջներն ամրանում, ծաղկում ու պտուղ տալիս: Դու քեզ զգում ես ստեղծագործող: Չէ՞ որ ամեն ինչ, որ այնտեղ աճում ու հասունանում է, ստեղծվել է քո խոսքով, միայն քո խոսքով, Ֆրոյլայն Ռիզեման: Որքա՜ն հրապուրիչ ու հրճվալից բան է՝ խոսքով հրաշք կատարել, խոսքով կերպարանափոխել մարդկանց, խոսքով նվաճել մարդկանց:

Ֆրոյլայն Ստելլայի մեջ մի ինչ-որ տարօրինակ զգացմունք արթնացավ: Նա նորից նայեց եկվոր ուսանողին և զարմանքով ինքն իրեն հարց տվեց. առաջին հայացքից ինքնամփոփ, չոր ու ցամաք այդ մարդու գլխում ինչպե՞ս կարող է տեղ լինել այդպիսի գաղափարական ցնորքներին: Եվ ի՞նչ է զառանցում նա: Մանկավարժական աշխատա՜նք: Դա պարզապես անհերևակայելի է: Մինչև այժմ Ստելլան դպրոցական ուսուցիչներից, տղամարդ լինեն թե կին, լսել էր, որ աշխարհում չկա ավելի տաղտկալի, հոգնեցուցիչ, հոգեմաշ նյարդեր բզկտող աշխատանք, քան ուսուցչի աշխատանքը: Նրանցից ոչ ոք դեռ երբեք չէր ասել, թե ինքն իրեն ստեղծագործող է համարում, և առավել ևս ստեղծագործական հրճվանք չէր ապրել: Ամբողջ տարին նրանք տենչանքով սպասում էին ամառային արձակուրդին, իսկ ամբողջ առավոտն անհամբեր սպասում էին դասերից ազատվելու ժամին: Նրանք սիրով իրենց համարում էին նահատակներ, որոնց հասարակությունը դատապարտել է բզկտման, նրանք անդադրում գանգատվում էին իրենց ծանր ու պատասխանատու աշխատանքից: Դեռ երբեք Ստելլա Ռիզեմանը երջանիկ, ուրախ ու խանդավառ դպրոցական ուսուցիչ չէր տեսել:

Հայնրիխ Բերգմանը նույնպես չէր տեսել: Օսվալդ Գեբլերը, որն այդ ժամանակ նորից մոտեցավ իր հարսնացուին, նույնպես երբեք չէր տեսել: Հայնրիխն ու Օսվալդը Կուրբատովի զառանցանքները լսելով իրար նայեցին, քմծիծաղ տվին, և նրանց հայացքը բացահայտ թերահավատություն էր արտահայտում: Գեբլերը իր հարսնացուի հետ փոքր-ինչ առաջ անցնելով քնքշանքով թևանցուկ արեց նրան, զննաբար նայեց մտքի մեջ ընկած աղջկան և շշուկով ասաց.

— Մի՞թե դու հավատում ես այն ամենին, ինչ երգում է նա: Դա, երևում է, այնպիսի մի անձնավորություն է, որն աշխատում է իր տարօրինակությամբ լավ կողմից ներկայացնել իրեն: Այդ կարգի մարդկանց ես ճանաչում եմ:

Քաղաքային խոշոր վաճառականի որդի Օսվալդ Գեբլերը, որ ինքն էլ վաճառական էր և լինում էր միայն առևտրականների շրջանում, ինչպե՞ս և որտե՞ղ կարող էր ճանաչել «այդ կարգի մարդկանց», այդ նա ամենևին չպարզաբանեց: Ստելլան հեշտությամբ կարող էր նրա սուտը բռնել, բայց նա ուշադրություն էլ չդարձրեց փեսացուի խոսքերի վրա: Նրա մտքերը դեռ զբաղված էին Կուրբատովի ասածներով: Եվ նախքան Գեբլերը կկարողանար խանգարել, աղջիկը նորից մոտեցավ ռուս ուսանողին, որպեսզի խոսակցությունը վերսկսի:

— Ինձ հետաքրքրում է, թե դուք, որ մարդկային հոգիների ստեղծագործող եք, կարո՞ղ եք որևէ բանի հասնել մեր Էբերհարդի հետ,— ասաց նա քմծիծաղ տալով, բայց, որքան էլ տարօրինակ է, թերևս նույնիսկ հակառակ իր կամքի, նրա ձայնի մեջ ոչ մի կծու բան չկար, ոչ մի բան, որ ցույց տար նրա թերահավատությունը: «Մարդկային հոգիների ստեղծագործող» բառերը նա արտասանեց այնքան բարեհոգի, համարյա սրտառուչ, որ ասես հոգու խորքում աղջիկն ամենևին չէր կասկածում, որ Անդրեյ Պետրովիչն իսկապես ստեղծագործող է և Էբերհարդի հետ մի բանի կհասնի:

— Իսկ ինչո՞ւ հաջողության չպիտի հասնեմ,— հարցրեց Անդրեյ Պետրովիչը:— Չէ՞ որ ձեր եղբայրը խելամիտ տղա է:

— Գուցե և նույնիսկ խիստ խելամիտ, պարոն Կուրբատով: Ա՛յ, կտեսնեք, ձեր գործը նրա հետ դյուրին չի լինի: Նրա աշխուժությունը հաճախ անտանելի չարաճճության է փոխվում: Բացի դրանից նա անփույթ տղա է, ծույլ ու կամակոր: Ձեզ դժվար խնդիր է բաժին ընկել, պարոն Կուրբատով, և ես ամենևին չեմ զարմանա, եթե այդ տղայի հետ դուք կորցնեք ձեր ամբողջ համբերությունը, հաստատակամությունն ու ամրությունը, և դրա հետ միասին նաև ձեր ստեղծագործական կոչումի հավատը: Ես վախենում եմ, որ այստեղ ձեր ցանած սերմերը քիչ ծիլեր կտան:

— Նշանակում է դուք այնքան էլ չե՞ք հավատում իմ մանկավարժական ընդունակությանը:

— Ես ճանաչում եմ իմ եղբորը:

— Նրա նախկին ուսուցիչներին նույնպե՞ս ճանաչում եք:

— Շատ քիչ:

— Այդ դեպքում դուք ձեր եղբորն էլ լրիվ չեք ճանաչում:

— Դե, աստված տա, որ դուք ձեր աշակերտի մեջ գտնեք այն լավ հատկությունները, որոնք նրա նախկին ուսուցիչները որոնել են ապարդյուն:

Այս խոսքերի մեջ արդեն հեգնանք էր հնչում: Դա Կուրբատովն էլ պարզ զգաց: Բայց նրա ինքնավստահությունը չսասանվեց, նա պատասխանեց հաստատորեն և միաժամանակ սրտանց.

— Ես դեռ չեմ հանդիպել մի մարդու, որի մեջ ոչ մի դրական գիծ չլինի: Հաճախ միայն թվում է, թե դրանք չկան, նրանք միայն թաքնված են լինում, և մարդիկ չեն գտնում, որովհետև *ինչպես հարկն է* չեն որոնում, ծուլանում են որոնել: Մարդն ավելի լավն է, քան թվում է, նույնիսկ ամենաճղճիմ, անպետք մարդն իրականում ավելի լավն է: Եվ եթե ձեր եղբայրը չնչին ու վատ մարդ է, որին ես դեռ չեմ հավատում, ապա ուրեմն ինձ համար ավելի հետաքրքիր կլինի նրա հետ աշխատել, ավելի հրապուրիչ կլինի նրա մեջ լավը գտնել: Իսկ որ ես այդ լավը կգտնեմ, դրանում դուք կարող եք վստահ լինել ինչպես ես:

Փոքրիկ խումբը եղևնու անտառով անցնելով մոտեցավ Ռիզեմանի ամառանոցին: Դա մի նոր երկհարկանի փայտաշեն տուն էր՝ խայտաբղետ ներկված և շրջապատված մի ընդարձակ մատղաշ այգիով: Ե՛վ տունը, և՛ այգին առաջին իսկ հայացքից զարմացնում էին իրենց աչքի զարնող շքեղությամբ, մանավանդ, որ շրջակայքի ամառանոցներն իրենց դեռ չկարգավորված այգիներով որքա՜ն ավելի մանր էին ու հասարակ: Նրանք չունեին նաև այնպիսի տպավորիչ և ակնհայտորեն տպավորության համար նախատեսված դեկորատիվ զարդեր, որոնք շրջապատում էին Ռիզեմանի ամառանոցը և որոնք մեծ մասամբ տեղադրված էին անճաշակ: Այսպես, վառ կարմիր ներկված չուգունե դարպասի երկու կողմերում գլուխները թաթերի վրա դրած նիրհում էին երկու փոքրիկ մարմարե առյուծներ: Նրանց տարօրինակ մռութները և օտարոտի ձգված մարմինները ակամա ժպիտ էին հարուցում. ըստ երևույթին պարոն Ռիզեմանն այդ գերոճավորված գիշատիչները պատվիրել էր նույնքան էժան, որքան և ապաշնորհ քանդակագործի: Դարպասի վերևը զարմանալի չուգունե զարդերի մի ամբողջ թավուտի մեջ երևում էր մի տախտակ, որի վրա խոշոր ոսկե տառերով գրված էր. «Վիլլա Մարտինի»: Ինչպես երևում է պարոն Մարտին Ռիզեմանն իր ամբողջ ընտանիքում և նույնիսկ ամբողջ աշխարհում ամենից ավելի իրեն էր սիրում ու հարգում, դրա համար էլ «վիլլային» իր անունն էր տվել: Տան առջևի հրապարակը և պատշգամբը առատորեն զարդարված էին բաղեղներով ու ծաղիկներով և տակառների մեջ աճեցրած արևադարձային ծառերով, բայց այստեղ էլ այդ զարդարանքների խիստ վառ գույներից ու անճաշակ համադրումից զգացվում էր սոսկ տպավորություն գործելու ձգտումը: Այգում, թփերի մեջ ու ծառուղիների երկարությամբ երևում էին գիպսե արձաններ ու խոշոր գույնզգույն մետաղե գնդեր, բայց դրանք այնքան շատ էին և դասավորված այնպիսի տարօրինակ կարգով, որ ճաշակ ունեցող մարդը նրանց նայելով միայն գլուխը կօրորեր:

Համարյա բոլոր հյուրերն այդ ժամին այգումն էին: Երիտասարդները մի քանի ծառաների հետ թելերով ապակե գունավոր լապտերներ էին կախում և հրավառության ձողեր ամրացնում ի պատիվ օրիորդ Ստելլայի, որն այդ օրը իր ծննդյան օրն էր տոնում. մութն ընկնելուն պես հրավառություն էր լինելու: Հասակավոր պարոնները նստել էին թղթախաղի կամ խմիչքներով ծանրաբեռնված փոքրիկ սեղանների շուրջը, իսկ տիկինները զրուցելով զբոսնում էին կամ նստել էին փոքր խմբերով: Հյուրերն այնքան էլ շատ չէին, որովհետև Ռիզեմանների ընտանիքի ծանոթների մեծ մասը ամառն անց էր կացնում կամ արտասահմանում, կամ հեռավոր ամառանոցներում ու ծովային կուրորտներում և ֆրոյլայն Ստելլային շնորհավորել էին նամակով:

— Դուք երևի՞ ք ճամփորդությունից հետո նախ ձեզ կարգի բերել ու հանգստանալ, իսկ հետո արդեն կգաք այգի՝ հայրիկի ու մայրիկի հետ ծանոթանալու,— ասաց Ստելլան Անդրեյ Պետրովիչին, երբ նրանք մոտեցել էին ամառանոցին:

Երիտասարդը դրական պատասխան տվեց: Դեռատի աղջիկն ուզում էր Էբերհարդին ուղարկել սպասուհու ետևից, որպեսզի նա Կուրբատովին առաջնորդի իր սենյակը, բայց Անդրեյ Պետրովիչը տղայի ձեռքը բռնելով ետ պահեց նրան ու սիրալիր նրա աչքերի մեջ նայելով ասաց.

— Գուցե իմ պատանի բարեկամը ինքը ցույց կտա ինձ իմ սենյակը: Իսկ մի ուրիշ անգամ ես նրան որևէ ծառայություն կմատուցեմ:

Էբերհարդը, որն ավելի մեծ սիրով կվազեր այգի, լապտերներ ու հրավառություն պատրաստող հյուրերի մոտ, անբավական հոնքերը կիտեց, բայց չհամարձակվեց ձեռքը դուրս քաշել և Կուրբատովի հետ գնաց տուն՝ ճանապարհը ցույց տալու: Իսկ այնտեղ, երևի պարոն Կուրբատովի սենյակում, տղան ուշացավ ամբողջ կես ժամ, և երբ եկավ այգի, պատահաբար Ստելլայի կողքով անցնելիս ուրախ-ուրախ ասաց նրան.

— Դու գիտե՞ս, նա իսկապես որ ինձ համար մի շատ լավ գիրք է բերել. շատ նկարներ կան և ընդհանրապես հետաքրքիր գիրք է:

— Որտեղի՞ց գիտես, դու հո դեռ չես կարդացել,— հարցրեց քույրը:

— Նա ինքը պատմեց ինձ, թե ինչ է գրված այնտեղ: Եվ, գիտե՞ս, նա շատ լավ է պատմում: Ես հենց վաղը կսկսեմ գիրքը կարդալ:

— Իսկ ի՞նչ գիրք է այն:

— Բնագիտության մասին: Բայց երևում է, այնպես ձանձրալի չէ, ինչպես իմ դասագրքերը: Նա ինձ խոստացավ նաև ամեն բան բացատրել: Իսկ նա այնպես է բացատրում, կարծես հենց այնպես, զրույց է անում: Եվ մեկ էլ խոստացավ ինձ հետ միասին դաշտ ու անտառ գնալ և բնության ինչ-որ հրաշքներ ցույց տալ: Եվ էլի գիտե՞ս ինչ ասաց:

— Ի՞նչ:

— Դու, ասում է, չվախենաս, թե ես քեզ շատ եմ տանջելու դասերով: Ես ինքս էլ, ասում է, գիտեմ, թե քեզ նման տղայի համար որքան դժվար ու ձանձրալի է սովորելը: Ստելլա, նա կարծես թե վատ մարդ չէ:

— Իհարկե, իհարկե, եթե քեզ նման ծույլին չի ուզում դասերով տանջել,— ժպտաց Ստելլան:— Բայց այդ ձևով նա ինչպե՞ս է մտածում այնպես անել, որ դու մաթեմատիկան և ռուսերեն քերականությունը սովորես, ա՛յ, այս չեմ հասկանում ես:

— Մտքովդ չանցնի նրան սրել իմ դեմ, — սպառնալից գոչեց տղան:— Նա խելացի մարդ է և ինքը գիտե, թե ինչ է անում:

Քառորդ ժամ անց Անդրեյ Պետրովիչը երևաց այգում: Նրա հագուստի մեջ որոշ փոփոխություն էր եղել. Սպիտակ բաճկոնի փոխարեն նա հագել էր ուսանողական երկար համազգեստ, որի վզին երևում էր նոր արդուկած ճերմակ օձիքը: Խունացած հին գլխարկին փոխարինել էր նորը՝ սպիտակ շապիկով:

Բնազդական թշնամական զգացմունքը, որ Էբերհարդը տածում էր դեպի նոր ուսուցիչը, ըստ երևույթին նվազել էր: Երբ Անդրեյ Պետրովիչն այգի դուրս գալով սկսեց հայացքով որոնել տղային, սա այդ նկատելով հնազանդորեն և նույնիսկ բավական արագ մոտեցավ նրան:

— Առաջնորդիր ինձ քո ծնողների մոտ, Էբերհարդ,— խնդրեց Կուրբատովը:

Նրանք շուռ եկան տան անկյունով և ուղղվեցին դեպի ընդարձակ պատշգամբը, որ ձգված էր տան դեպի այգին տանող պատի երկարությամբ: Նրա առջևի հրապարակը զարդարված էր մի քանի ծաղկաթմբերով: Պատշգամբում շարված էին սեղաններ ու աթոռներ, այնտեղից զվարթ խոսակցություն էր լսվում, երբեմն էլ տղամարդու բարձր ծիծաղ: Էբերհարդը կարծես հորը որոնում էր նրա ձայնով, որովհետև հենց որ պատշգամբից խռպոտ, թանձր ծիծաղ լսվեց, տղան ականջները սրեց. նրա դեմքից երևում էր, որ գտել է իր որոնածին: Ճանապարհին նրանց միացավ Ֆրոյլայն Ստելլան, որը տեսել էր, թե ինչպես Կուրբատովը դուրս եկավ այգի: Կուրբատովին թվաց, որ աղջկա դեմքին արտացոլվել է անհանգստություն, մի ինչ-որ լարվածություն:

— Տղամարդիկ թղթախաղով են տարված,— ասաց նա բռնազբոսիկ ժպիտով,— գուցե մենք նրանց կխանգարենք: Դուք, պարոն Կուրբատով, երևի կհամաձայնեք, որ ես նախ մորս հետ ծանոթացնեմ ձեզ: Նա այնտեղ, տաղավարի մեջ է:

— Բարի եղեք, ֆրոյլայն Ռիզեման,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը և կանգ առավ:

Նրանք ետ դարձան և շուտով արդեն հասմիկազարդ տաղավարի առաջ էին, որը քարանձավ էր հիշեցնում: Այնտեղ ծղոտահյուս բազկաթոռներին նստած էին երկու տարեց տիկին: Երբ Ստելլան Անդրեյ Պետրովիչին ներկայացրեց, տիկիններից մեկը դանդաղորեն, համարյա հանդիսավորությամբ բարձրացավ տեղից, նույնպես դանդաղ ու հանդիսավոր հյուրին մեկնեց իր դեղնավուն բարակ ձեռքը, ապա առանց շտապելու նորից նստեց բազկաթոռին:

Ստելլան այնքան էլ նման չէր մորը, Ռիտան՝ նույնպես, բայց Էբերհարդը շատ նման էր տիկին Ռիզեմանին: Աղջիկները բաց գույնի մազեր ունեին, երկնագույն աչքեր և կլորիկ դեմքեր, այնինչ Էբերհարդը մորից ժառանգել էր սև մազեր, երկարավուն թուխ դեմք, մանրիկ դարչնագույն աչքեր և բարակ սուր քիթ: Նրանք երկուսն էլ, և՛ մայրը, և՛ որդին, նման էին վախեցած զգոն գազանիկի, որն ամենուրեք վտանգ է տեսնում և ամեն րոպե պատրաստ է փախչելու:

Երբ Կուրբատովը ներկայացվեց տաղավարում նստած երկրորդ տիկնոջը ևս,— դա Ստելլայի ապագա սկեսուրն էր, տիկին Գեբլերը,— Ռիզեմանն ու Կուրբատովը մի քանի անկարևոր խոսք փոխանակեցին, որոնցից Անդրեյ Պետրովիչը նկատեց, որ տանտիրուհին լիովին տիրապետում է բարձրաշխարհիկ տիկնոջ շարժուձևերին և խոսքին: Թեև խոսակցությունը սին ու անբովանդակ էր, տիկինը խնամքով ընտրում էր բառերը և ամեն կերպ ուզում էր հասկացնել, թե հյուրը գործ ունի կրթված ու խելոք մարդու հետ:

— Դուք մտածում եք խի՞ստ վարվել իմ տղայի հետ:

Տիկին Ռիզեմանն այս հարցը տվեց ժպտալով, կատակի ձևով, բայց նրա հայացքի մեջ արտացոլվել էր որքան մայրական քնքշություն, նույնքան էլ մայրական հոգատարություն:

— Խի՞ստ: Կարծում եմ՝ ոչ,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը:

— Ա՜խ, ես շատ ուրախ եմ, որ դուք բոլորովին ջահել ուսանող չեք, այլ արդեն բավական հասուն մարդ եք,— շարունակեց Էբերհարդի մայրը կիսաերազական, կիսահանդիսավոր տոնով, ձեռքը կրծքին սեղմելով:— Ես հուսով եմ, որ դուք ավելի շատ համբերություն կունենաք, քան բոլորովին երիտասարդ մարդը: Գիտե՞ք ինչ, պարոն, պարոն...

— Կուրբատով,— հուշեց Ստելլան:

— Գիտե՞ք ինչ, պարոն Կուրբատով, իմ տղան դե հո չար տղա չէ, կոպիտ չէ, ոչ էլ փչացած... Էբերհարդ, դո՛ւրս գնա այստեղից... Նա մեծացել է քրիստոնեական տան մեջ, դաստիարակվել է քրիստոնեական սկզբունքներով և քրիստոնեական խստությամբ, նրան ներշնչված է պարտականության գիտակցությունը: Բայց ես այս հիմիկվա մանկավարժներին չեմ հասկանում: Նրանք չեն կարողանում ճիշտ մոտենալ իրենց սաներին, չեն կարողանում ազդել նրանց վրա, տեսնել նրանց հոգին, օգնել նրանց բարոյական զարգացմանը: Հաճախ նրանք անարդար են լինում, ուղղակի անարդար: Էբերհարդի ուսուցիչների մեջ կան այնպիսիները, որոնք նրան ատում են, ուղղակի ատում են իմ երեխային, դուք կարող եք հավատալ ինձ: Նրանք պարզապես նրան չեն թողնում ուսման մեջ առաջադիմել, դիտմամբ վատ թվանշաններ են դնում: Երեխան մի ինչ-որ ժամանակ բարկացրել է սրան կամ նրան, և նրանք այդ մոռանալ չեն կարողանում, նրանք տանել չեն կարող իմ տղային, իրենց սրտում ոխ են պահել նրա դեմ: Մի՞թե սա քրիստոնեաբար է, մի՞թե սա մանկավարժական մտածողություն է:

Այս ասելիս տիկին Ռիզեմանը սպասողաբար նայում էր Անդրեյ Պետրովիչին, ասես ցանկանալով, որ նա հաստատի իր խոսքերը, և ավելի համառորեն նայում էր տիկին Գեբլերին: Ըստ երևույթին հենց տիկին Գեբլերի համար էլ ասվել էին նրա եզրափակիչ խոսքերը, որոնց մեջ նա նորից կրկնեց նախկին միտքը: Բայց այդ նա ասաց միայն այն ժամանակ, երբ ուշադիր շուրջը նայեց և համոզվեց, որ Էբերհարդը մոտերքում չէ:

— Իմ որդին ծույլ չէ, հիմար չէ, և փչացած չէ, նա նույնպիսի երեխա է, ինչպես բոլորը: Բայց ի՞նչ կարող է անել խեղճը, եթե իրեն ատում են, եթե ոչ ոք նեղություն չի քաշում հասկանալ նրան, քրիստոնեական համբերությամբ թափանցել նրա հոգու մեջ: Եվ մի՞թե կարելի է այդպիսի բան սպասել. չէ՞ որ նրա ուսուցիչների մեծ մասը ուրիշ դավանանքի մարդիկ են:

Ստելլան շփոթմունքով նայեց նախ մորը, ապա Կուրբատովին. չէ՞ որ, անտարակույս, նա էլ «ուրիշ դավանանքի» մարդ էր: Այս բանը մայրը բոլորովին մոռացել էր, տարված լինելով իր գանգատով և խոսքն ուղղելով ավելի շուտ տիկին Գեբլերին, քան եկվոր ուսանողին: Նկատելով Ստելլայի հայացքը՝ տիկին Ռիզեմանը գլխի ընկավ իր սխալը, բայց մինչ նա նյարդային հուզումի մեջ համապատասխան խոսք կգտներ իր այդ սխալը հարթելու, Անդրեյ Պետրովիչը միջոց գտավ, թե ինչպես կարելի է շրջանցել այդ փափկանկատ հարցը:

— Քրիստոնեական համբերություն ասածը իմ ըմբռնողությամբ մարդկային համբերություն է,— նկատեց նա:— Եվ դուք, տիկին Ռիզեման, միանգամայն իրավացի եք, երբ ասում եք, թե հաճախ մանկավարժներն այդպիսի համբերություն չեն ունենում: Բայց մտածեցեք, թե որքան մարդկային համբերություն է հարկավոր ուսուցչին, որը պետք է ամեն օր, ամեն մի դասարանում հետևի իր

հարյուր կամ նույնիսկ ավելի թվով սաներին: Մի՞ թե կարելի է զարմանալ, որ նրա համբերությունն սպառվում է և իր տեղը զիջում խստությանն ու անտարբերությանը: Սա շատ տխուր բան է, բայց սա ևս հատուկ է մարդուն: Ինչ վերաբերում է ինձ, ես, որքան կների կարճ ժամանակամիջոցը, ամեն ինչ կանեմ, որ ձեր տղան առաջադեմ աշակերտ դառնա:

Տիկին Ռիզեմանն ուզում էր ինչ-որ բան պատասխանել, բայց այդ րոպեին ներս վազեց Էբերհարդը և գոչեց.

— Անդրեյ Պետրովիչ, հայրիկս ձեզ իր մոտ է խնդրում:

— Ձե՞զ,— վրա բերեց Անդրեյ Պետրովիչը:— Բայց չէ՞ որ դու ինձ «դու» պիտի ասեիր, Էբերհարդ:

— Լավ, քեզ,— պատասխանեց տղան մի տարօրինակ հնազանդությամբ:

— Դե, գնանք:

Անդրեյ Պետրովիչը մտերմաբար ձեռքը դրեց Էբերհարդի ուսին, թեթևակի գլուխ տվեց տիկիններին, և ուսուցիչն ու աշակերտը զրուցելով ծածկվեցին թփերի ետևը:

Իսկ տաղավարում տիկին Գեբլերը նայում էր տիկին Ռիզեմանին, տիկին Ռիզեմանը՝ տիկին Գեբլերին, ապա՝ երկուսն էլ միասին Ստելլային:

— «Դո՞ւ»: Էբերհարդը պարոն Կուրբատովին «դո՞ւ» պիտի ասի:

— Պարոն Կուրբատովն էլ Էբերհարդի հետ «դու»-ով է խոսում,— պատասխանեց Ստելլան:

— Բայց ինչո՞ւ:

Ֆրոյլայն Ռիզեմանն ուսերը թոթվեց:

— Էբերհարդն ասում է, որ պարոն Կուրբատովն այդպես է ուզում:

— Այդպես է ուզո՞ւմ: Պարոն Կուրբատովն այդպե՞ս է ուզում:

— Այո, մայրիկ:

— Բայց չէ՞ որ դա անվայել բան է:

Այս բացականչությունը տիկին Ռիզեմանի և տիկին Գեբլերի հոգու խորքից դուրս թռավ միաժամանակ:

Որ աշակերտը և ուսուցիչը միմյանց հետ «դու»-ով պիտի խոսեն, ճիշտն ասած, օտարոտի էր թվում նաև Ֆրոյլայն Ստելլային: Բայց երբ նա տեսավ զարմանքից ու վախից ձգված այդ դեմքերը, տեսավ այդ սարսափով լի աչքերը, որոնք ասես ինչ-որ անդունդի էին նայում, դեռատի աղջկան այս անգամ էլ համակեց հակաճառության դևը, ապա և՝ ծաղրանքի դևը. նա քրքջալու բուռն պահանջ զգաց, բայց ծիծաղը դժվարությամբ խեղդելով՝ շինծու զարմանքով գոչեց.

— Անվայե՞լ է: Իսկ ինչո՞վ է անվայել: Գուցե վիրավորա՞նք է պարոն Էբերհարդի արժանապատվությանը, եթե իրավագիտության թեկնածու Անդրեյ Պետրովիչ Կուրբատովը նրա հետ «դու»-ով է խոսում:

— Լավ... բայց... Էբերհարդն էլ նրան է «դու» ասում:

— Առավել մեծ պատիվ է Էբերհարդի համար, եթե նրան թույլատրում են այդ:

— Բայց դա բոլոր կանոններին դեմ բան է: Դա ընդունված բան չէ: Դեռ ոչ ոք այդպիսի բան չի լսել:

— Աշխարհում քիչ բաներ չկան, որոնց մասին շատերը երբեք չեն լսել:

— Բայց այդ դեպքում որտե՞ղ է մնում փոխադարձ հարգանքն ու քաղաքավարությունը,— ճվաց տիկին Գեբլերը, և նրա լայն դեմքը կարմրատակեց:— Որտե՞ղ է մնում ուսուցչի հեղինակությունը:

Երեխան ի՞նչ կարող է մտածել մի ուսուցիչի մասին, որին ինքը «դու» է ասում ինչպես իր եղբորը կամ ծառային և կամ որևէ գեղջուկ տղայի: Բացի դրանից շատ տարօրինակ կլիներ,— գոնե ինձ համար,— եթե մի օտար մարդ, որը նոր է իմ տան շեմքը կոխում, միանգամից սկսի «դու»-ով խոսել իմ համարյա թե հասուն որդու հետ: Եթե չեմ սխալվում Էբերհարդն արդեն տասներեք տարեկա՞ն է:

— Ուսուցչի հեղինակությունը նրանով չի ստեղծվում, որ նրա հետ «դուք»-ով են խոսում, այլ՝ նրա մանկավարժական ընդունակություններով,— շարունակեց Ստելլան անկեղծ բավականությամբ գրգռելով խոսողներին:— Մի՞թե Էբերհարդը և նրա նման ուրիշները հարգանք տածո՞ւմ են դեպի այն բոլոր ուսուցիչները, որոնց հետ «դուք»-ով են խոսում: Եթե դուք իմանայիք, թե տղաներն ինչպես են ծաղրում նրանց և ինչպիսի անհարգալից մականուններ են կպցնում նրանցից շատերին: Պարոն Կուրբատովն ուզում է իր աշակերտին դաստիարակել որպես եղբայր և բարեկամ, դա դաստիարակության նրա մեթոդն է, և ես գտնում եմ, որ շատ ճիշտ մեթոդ է:

— Իսկ ես այդպես չեմ գտնում,— և տիկին Գեբլերն այնպիսի թափով ճոճեց գլուխը, որ նրա կարմիր, մսոտ այտերը ցնցվեցին:

— Ես նույնպես,— արձագանքեց տիկին Ռիզեմանը նույնպես գլուխն օրորելով, բայց ավելի պակաս թափով: Ճիշտն ասած՝ նրա մայրական սրտին այնքան էլ անհաճո չէր, որ նոր ռեպետիտորը ցանկանում է դառնալ «իր երեխային» եղբայր ու բարեկամ: Դա նշանակում էր, որ նա շատ խիստ չի լինելու:

— Եթե դու էլ նույն կարծիքին ես, սիրելի Բերտի, պետք է իսկույն վերջ դնես այդ խայտառակությանը,— ասաց հարգարժան տիկին Գեբլերը և բոցկլտացող դեմքը դարձրեց դեպի իր ապագա հարսը, ինչպես հատուցման ցասումնալից աստված:

— Ես կխոսեմ ամուսնուս հետ,— պատասխանեց տիկին Ռիզեմանը:

— Այդ դու ինքդ էլ կարող ես անել,— ասաց տիկին Գեբլերը:

Հենց սա էլ այս երկու տիկինների բնավորության տարբերությունն էր. տիկին Ռիզեմանը, եթե հարկավոր էր որևէ բան անել կամ վճռել, միշտ ցանկանում էր «խոսել ամուսնու հետ», մինչդեռ տիկին Գեբլերը իր տանն ամեն ինչ «ինքն» էր վճռում ու անում: Նրանք միմյանց կատարյալ հակադրությունն էին. մի կողմից լիակատար կախվածություն, մշտական ստորացում, անտրտունջ հպատակություն, մյուս կողմից՝ կոպիտ կամայականություն, համառություն, իշխելու սեր և անսահման մեծամտություն: Բնավորության այս վերջին գիծը իսկույն նկատում էր ամեն ոք, ով թեկուզ մի հայացք էր գցում տիկին Գեբլերի հաստ, լայն ու տիրական դեմքին, ով ուշադրություն էր դարձնում, թե նա ինչպես է բազմում բազկաթոռին, ինչ հայացքով է դիտում շուրջը, ամեն ոք, ում ականջն այնքան սուր էր, որ կլսեր նրա ձայնի հնչյունը և նրա մեջ զնգացող մետաղը:

Մինչ այդ Անդրեյ Պետրովիչն ու Էբերհարդը մոտեցան պատշգամբին, որտեղ մեծահասակ պարոնները երկու սեղանի վրա թուղթ էին խաղում և հենց նոր վերջացրել էին պրեֆերանսի իրենց խաղերը: Նրանք պունշի բաժակներն առջևը՝ նստած սիգար էին ծխում ու տաք-տաք վիճում խաղի ընթացքի մասին և ամեն մեկը բարեհոգի ծաղրով ձեռ էր առնում մյուսի սխալներն ու թերացումները: Ով հեռվից դիտեր ու լսեր նրանց, առանց իմանալու վեճի էությունը, կկարծեր, թե ամենալուրջ խնդիրներ են լուծում, այնքան բորբոքված էին այդ պարոնների դեմքերը և այնպիսի եռանդուն շարժուձևեր էին անում նրանք: Այդ հուզված ձայների մեջ աչքի էր ընկնում փոքր-ինչ խռպոտ, ցածր նոտայով դժժող մի խեղդուկ ձայն, որն Անդրեյ Պետրովիչն արդեն լսել էր քիչ առաջ, երբ Էբերհարդն առաջին անգամ ուզում էր նրան տանել պարոն Ռիզեմանի մոտ:

— Հայրիկ, պարոն Կուրբատովը եկել է:

Պարոնը, որին Էբերհարդը հայրիկ կոչեց, նստած էր վիեննական բազկաթոռում, մեջքը դեպի ներս մտնողները: Անդրեյ Պետրովիչը սկզբում տեսավ միայն նրա զորեղ եզան ծոծրակը և կարճ, հաստ ու մսոտ պարանոցը, որն աստիճանաբար, առանց խիստ սահմանագծի փոխվում էր փոքրիկ կլոր գլխի, ինչպես մի սյուն, որի ծայրը տաշված է կլորավուն: Այդ գլուխը ծածկված էր մեքենայով

խուզված խիտ ու կոշտ խոզանականման ճերմակ մազերով, իսկ ականջները գանգին էին կպած այնքան մոտիկ, ասես աճել էին նրանից: Այդ տարօրինակ գլուխը անհամաչափ պարանոցով դանդաղորեն, նկատելի դժվարությամբ շուռ եկավ, բայց միայն այնքան, որ Կուրբատովն այժմ տեսնում էր պարոն Ռիզեմանի պրոֆիլը: Նրա հաստ ու արյունալից երեսը եզերված էր կարճ, ծայրը սուր մորուքով:

— Բարի եք եկել, երիտասարդ:

Եվ գործարանատեր Ռիզեմանը բարձրանալու նույնիսկ փորձ չանելով և տեսնելով միայն Կուրբատովի ստվերը, անփութորեն դեպի նա մեկնեց իր կարճ, հաստ ձեռքը, որի փափլիկ թաթի ցուցամատին փայլփլում էր կնիքավոր լայն մատանին:

Անդրեյ Պետրովիչը չսեղմեց մեկնած ձեռքը: Նա մի քայլ առաջ գնաց, կանգ առավ պարոն Ռիզեմանի առջև, նայեց նրա դեմքին ու ասաց.

— Ինձ կոչում են Անդրեյ Պետրովիչ Կուրբատով:

Պարոն Ռիզեմանը, որը նստած էր ոտքերը մեկնած, Կուրբատովին տեսնելուն պես ոտքերը ետ քաշեց սեղանի տակ, ինչպես մի մարդ, որ պատրաստվում է վեր կենալ: Բայց նա այս անգամ էլ վեր չկացավ, իսկ երբ նրա թռուցիկ հայացքը նկատեց Կուրբատովի դիմագծերը, համարյա ակամայից բացականչեց.

— Օ՛, բայց սա երիտասարդ պարոն չէ... Շատ ուրախ եմ... Իմ ազգանունն է Ռիզեման... գործարանատեր Ռիզեման...

Եվ նորից ձեռքը մեկնելով Կուրբատովին, որն այս անգամ սեղմեց, պարոն Ռիզեմանը ձախ ձեռքի վրա հենվելով բարձրացավ, բայց միայն թեթևակի, և իսկույն էլ նորից ընկավ բազկաթոռին: Գուցե և, եթե Կուրբատովի հետ մենակ լինեին, գործարանատեր Ռիզեմանը բոլորովին վեր կենար տեղից և ուղղվեր, բայց պարոն Ռիզեմանի կարծիքով հյուրերի ներկայությամբ նման քաղաքավարությունը միանգամայն անտեղի կլիներ մի մարդու նկատմամբ, որն իրենից ռոճիկ է ստանալու և որին ինքը ճանապարհածախս էր ուղարկել:

Սակայն գործարանատեր Ռիզեմանը իր որդու ռեպետիտորի առաջ բազմոցին նստած մնաց ճիշտ այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ էր, որպեսզի հասարակությանը ցույց տա, թե ինքն ինչպես է կարողանում որոշ տարածություն պահպանել իր և իր վարձու ծառայողների միջև: Այնուհետև նա բավական արագ վեր կացավ, իսկ երբ Կուրբատովը ծանոթացավ սեղանի շուրջը նստած մյուս հյուրերի հետ, Ռիզեմանը նույնիսկ բարեհաճորեն Անդրեյ Պետրովիչին թևանցուկ արեց և սիրալիր, ուրախ տանտիրոջ տեսք ընդունելով սկսեց իր յուրահատուկ ռուսերենով.

— Գնանք երկուսով մի քիչ զբոսնելու, պարոն Անդրեյ Պետրովիչ: Հեռացրեք ինձ այս խարդախների խմբից. Այսօր սրանք նորից իմ կաշին քերթեցին: Այս սրիկաների հետ խաղալով մարդ կարող է սնանկանալ: Այսօր նորից քամին երեք ռուբլի թռցրեց իմ գրպանից. . . Գնանք, պարոն Անդրեյ Պետրովիչ, ես ուրախությամբ եմ լինում *ազնիվ* մարդկանց հետ:

— Ով ինքը խաղալ չի կարողանում, միշտ ուրիշներին խարդախության մեջ է մեղադրում, — Ռիզեմանին դառնալով իր մայուն ձայնով քմծիծաղ տալով ասաց մի ցածրահասակ ճաղատ պարոն, որին հենց նոր Կուրբատովին ներկայացրին Գեբլեր — ավագ անունով:

Պարոն Մարտին Ռիզեմանի և Անդրեյ Պետրովիչի միջև, մինչ նրանք զբոսնում էին ընտրելով առանձնապես հեռու, մենավոր ծառուղիները, սկսվեց մի աշխույժ զրույց, որ առանձնապես եռանդով վարում էր հաստլիկ գործարանատերը: Նրա բարեհոգի տրամադրությունից և զրուցասիրությունից երևում էր, որ ալկոհոլը իր ազդեցությունն է ունեցել նրա վրա: Սկզբում նա խոսում էր ռուսերեն, իսկ երբ դժվարանում էր, դիմում էր գերմաներենին և, վերջապես, սկսեց խոսել երկու լեզվով խառը:

— Իմ տղային, թանկագին բարեկամս, դուք մի լավ ձեր բուռը հավաքեցեք, այս թեմայով սկսվեց նրանց զրույցը, շարունակ սրան էր վերադառնում պարոն Մարտին Ռիզեմանը և սրա շուրջն էին

պտտվում նրա մտքերը:— Դուք նրան հենց միանգամից ամուր սեղմեցեք, սանձը բաց չթողնեք և մեղմ ու զիջող չլինեք: Ես ձեզ ազատություն եմ տալու սեղմելու նրան և պատժելու ինչպես կամենաք: Միայն, երբ ծեծի պետք կլինի, ասացեք ինձ, և ես կկատարեմ իմ հայրական պարտականությունը, կարող եք վստահ լինել:

— Ես կարծում եմ դրա կարիքը երբեք չի լինի,— վրա բերեց Անդրեյ Պետրովիչը:

— Այդ մի ասեք, սիրելիս,— գոչեց պարոն Ռիզեմանը նորից ռուսերեն, ապա շարունակեց գերմաներեն, բայց մտածելով էստոներեն:— Առանց ծեծի երեխայից բան չի դուրս գա: Երեխային խնայիր, բայց և լավ ծեծիր. սա հին ճշմարտություն է, բայց և միշտ նոր է: Գիտե՞ք ինչ, պարոն Անդրեյ Պետրովիչ, իմ որդին երես առած է: Դա կնոջս մեղքն է: Ամեն կողմից նա հիանալի կին է, բայց չափից ավելի քնքույշ մայր է: Բավական է, որ ես ձեռքս մեկնեմ ճիպոտին, նա էլ իսկույն պատրաստ է վազելու դեպի քլորոֆորմի սրվակը, որպեսզի տղան ցավ չզգա: Դե, Էբերհարդն էլ երես է առել, ծուլացել ու շփացել: Ախր մի տեսեք, նա արդեն տասներեք տարին լրացրել է, երկու տարի նստած է երրորդ դասարանում ու հիմա էլ վերաքննություն ունի մաթեմատիկայից և ռուսաց լեզվից: Եվ ո՞վ է այդ ծույլն ու հանդուգնը: Գործարանատեր Ռիզեմանի միակ որդին, որը երբևիցե պետք է կառավարի հոր ձեռնարկությունը և վերջ ի վերջո ժառանգի այն: Ե՞րբ պիտի նա վերջացնի ռեալական ուսումնարանը, ե՞րբ է մտածում ավարտել տեխնիկումի դասընթացը: Սա հո իսկական խայտառակություն է... հենց ինձ համար է խայտառակություն... գիտե՞ք ինչ, պարոն Կուրբատով,— և Մարտին Ռիզեմանը բարեկամական զգացմունքի մի նոր ինքնամոռաց պոռթկումով թևանցուկ արեց ուսանողի հետ, կնոջս քույրը, որ Պետերբուրգումն է ապրում, ձեր մասին գրել է, թե դուք լավ, փորձված մակավարժ եք և ռեպետիտոր: Ես ամբողջովին վստահում եմ ձեզ: Օգնեցեք տղայիս փոխադրվել հաջորդ դասարանը, և կտեսնեք, որ ես ամենևին էլ ժլատ մարդ չեմ: Փողն ինձ համար ոչ մի դեր չի խաղում, ամենից առաջ այս պետք է նկատի ունենաք դուք:

Եվ պարոն Ռիզեմանը աջ ձեռքով ձիգ տվեց սպիտակ մետաքսե ժիլետն իր կլոր փորին ու մի քանի անգամ մատների մեջ խաղացրեց ժամացույցի ոսկե ծանր շղթան: Նա կարծես սպասում էր, թե իր խոսքերն ինչպիսի տպավորություն կթողնեն ռուս ուսանողի վրա:

— Փողն ինձ հարկավոր կլինի,— չոր պատասխանեց Անդրեյ Պետրովիչը,— և այն պարգևն էլ, որ դուք կավելացնեք իմ ռոճիկին, ես շնորհակալությամբ կընդունեմ: Բայց թող ձեզ հայտնի լինի, որ մեր պայմանավորված վարձով էլ ես ձեր տղայի համար նույնքան կանեի, որքան այժմ, երբ հավելում եք խոստացել:

— Չէ՛ մի,— իրեն զսպել չկարողացավ պարոն Ռիզեմանը, բայց մի շինծու հազով ժամանակին հարթեց այդ շատ բացահայտ թերահավատության արտահայտությունը և միայն մի որոշ տարակուսանք արտահայտեց իր կարմիր դեմքի վրա:

— Ինչ էլ որ լինի,— ասաց նա,— ես իմ խոսքի տերն եմ,— ահա ձեզ իմ ձեռքը... Եվ էլի մի բան կառաջարկեի ձեզ, պարոն Կուրբատով: Եթե Էբերհարդը հաջողությամբ վերաքննությունները տա և փոխադրվի չորրորդ դասարան, որը ես բացառապես ձեր աշխատանքի պտուղը կհամարեմ, այն ժամանակ մենք նոր պայման կկապենք. չի՞ լինի, որ էլի մի տարի կամ գոնե կես տարի մնաք որպես իմ տղայի ռեպետիտոր: Լավ վարձատրությամբ, իհարկե:

— Հիմա ես այդ դեռ չեմ կարող վճռել:

— Ձեզ ձեր սեփական պարապմունքնե՞րն են խանգարում: Երևի շուտով ավարտական քննությունն՞ եք տալու:

— Բանը միայն այդ չէ: Ես չեմ շտապում համալսարանն ավարտել, սիրով մնում եմ ուսանող:

— Այդ դեպքում, նշանակում է, ձեզ ոչինչ չի՞ խանգարում:

— Ես նախ պետք է տեսնեմ, թե ձեր տանը լինելը դուր կգա՞ ինձ:

Պարոն Մարտին Ռիզեմանը կտրուկ կանգ առավ և Կուրբատովի ձեռքը բաց թողեց: Այն թռուցիկ հայացքը, որ շեղակի գցեց ռուս ուսանողի վրա, կարծես ասում էր. «Տեսեք թե ի՞նչ պտուղն է: Դեռ պայման էլ է դնում: Դեռ համարձակվում է կասկածել, թե դուր կգա՞ իրեն Մարտին Ռիզեմանի տանը լինելը»: Բայց կարճ լռությունից հետո պարոն Ռիզեմանը փոքր-ինչ խեղդված ձայնով ասաց.

— Իհարկե, դուք այդ ևս պետք է հաշվի առնեք: Բայց ես կարող եմ ձեզ հավատացնել, որ մինչև այժմ իմ տունը բոլորին է դուր եկել, ով այստեղ ապրել է: Իսկ իմ առաջարկության մասին մենք իր ժամանակին ավելի մանրամասն կխոսենք:

Գործարանատիրոջ տրամադրությունը փչացել էր: Նա լուռ նայում էր գետնին, ծանր շնչելով ինչպես բոլոր գեր մարդիկ, ըստ որում կարծես դիտմամբ աշխատում էր ավելի ծանր շնչել: Վերջապես նա գրպանից հանեց ոսկյա ծխախոտատուփը, որի վրա փայլփլում էր իր ոսկյա մոնոգրամը, ինքը մի սիգար վերցրեց և Կուրբատովին էլ առաջարկեց:

— Կարող եք վստահ լինել, սա բացառիկ լավ տեսակի սիգար է:

— Եթե այդպես է, կվերցնեմ,— ասաց Անդրեյ Պետրովիչը:— Ընդհանրապես քիչ եմ ծխում, բայց լավ սիգարից չեմ հրաժարվի:

— Մի բաժակ լավ գինուց նույնպե՞ս,— ժպտաց Ռիզեմանը համարյա հեգնական:

— Նույնպես չեմ հրաժարվի:

— Այդ դեպքում վերադառնանք, ես ձեզ կտանեմ ակունքը:

— Այդ չի փախչի, պարոն Ռիզեման: Ես կուզենայի էլի մի քանի խոսք ասել ձեր տանը կատարելիք իմ աշխատանքի մասին:

— Բարի եղեք:

— Նախքան աշխատանքս սկսելը ես պետք է մի կարևոր պայման դնեմ: Դրանից է կախված՝ կմնա՞մ ձեզ մոտ, թե ոչ:

— Պայմա՞ն:

— Այո, ուղղակի պայման:

Թվում էր, թե պարոն Մարտին Ռիզեմանի համբերությունն սպառվում է: Երևում էր, որ պարոն Ռիզեմանն ընդհանրապես սովոր չէ, որ իր առաջ որևէ պայման դնեն: Նրա մանրիկ խաժ աչքերը ջղայնորեն խաղացին, և նա կարճ ու փոքր-ինչ մռնչաց.

— Ասացեք, պարոն Կուրբատով:

— Իմ մանկավարժական աշխատանքում դուք պետք է ինձ լիակատար ազատություն ընձեռեք, պարոն Ռիզեման,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը:— Դուք պետք է ինձ անսահմանափակ հնարավորություն տաք ուսուցանել ձեր որդուն, պատրաստել վերաքննություններին և ընդհանրապես դաստիարակել նրան մանկավարժության կանոններով այնպես, ինչպես ինքս հարկ կհամարեմ, ըստ որում, դուք չպետք է միջամտեք և որևէ խրատ տաք նրան: Միայն այս պայմանով ես կարող եմ երաշխավորել, որ ցանկալի արդյունք կստացվի, որ ձեր տղան առաջադիմություն կունենա: Նույնպիսի խնդրանքով ես ուզում եմ դիմել նաև ձեր տիկնոջը: Իմ այս պայմանն առավել անհրաժեշտ եմ համարում նրա համար, որ դուք և ձեր կինը ձեր որդու դաստիարակության վերաբերյալ նույն դատողությունն ու հայացքը չունեք:

— Եվ այդ պայմանով դուք երաշխավորում եք, որ Էբերհարդը վերաքննությունները կհանձնի ու հաջորդ դասարա՞ն կփոխադրվի,— հարցրեց պարոն Ռիզեմանը:

— Այո:

— Ուրեմն ձեր պայմանն ընդունված է, պարոն Կուրբատով: Ավելին ես չեմ ուզում:

Բայց Ռիզեմանը դեռ չէր ազատվել վիրավորանքի գաղտնի զգացմունքից: Այս ուսանողի համարձակ, ինքնավստահ, հայտարարությունը նրան դուր չեկավ: Սակայն, քանի որ նա ամենից առաջ նկատի ուներ իր որդու և իր սեփական շահը, խելամտորեն թաքցրեց իր անբավականությունը և լիակատար հանգիստ տեսքով ձեռքը մեկնեց Անդրեյ Պետրովիչին: Խելամտության թելադրած դերն ավելի լավ կատարելով՝ նա ասաց.

— Ճիշտն ասած, Անդրեյ Պետրովիչ, կարիք էլ չկար, որ դուք այդ պայմանը դնեիք: Ես առանց այդ էլ չէի խառնվելու ձեր մանկավարժական աշխատանքին: Ես այդպիսի սովորություն չունեմ: Իսկ իմ կինն անում է այն, ինչ ես ցանկանում եմ և պատվիրում:

Լիակատար համաձայնության գալով՝ պարոն Ռիզեմանը և Անդրեյ Պետրովիչն անցան այգու միջով, որտեղ արդեն վառվել էին գունավոր լապտերները, հասան պատշգամբ, որովհետև այդ ժամանակ հյուրերին արդեն հրավիրում էին ընթրիքի: Ընթրիքը պատրաստված էր պատշգամբում: Լամպերի լույսի տակ ծաղիկներով զարդարված երկար սեղանին փայլփլում էր արծաթյա ու բյուրեղապակյա ամանեղենը: Բազմապիսի գինիների մեջ այստեղ կային և հաստափոր շշեր, որոնց ոսկեփայլ գլխիկները դուրս էին ցցվել սառույցով լի փայլփլուն դույլերից:

Ձվարթ հասարակությունն աշխույժ զրույցով հավաքվել էր սեղանի մոտ: Ռիզեմանների տանը քրիստոնեական ծեսերին մեծ նշանակություն էր տրվում, ուստի և բոլոր ներկա եղողները նստելուց առաջ աթոռների թիկնակներին հենված գլուխները կախեցին, և տիկին Ռիզեմանն իր թախծոտ ձայնով արտասանեց բոլորին ծանոթ գերմաներեն ոտանավորը, որով Հիսուսին կոչ են անում այցելել այդ տունը և օրհնել ամենաբարձրյալի առաքած բարիքները: Ապա բոլորը սեղան նստեցին:

Պարոն և տիկին Ռիզեմանները, ինչպես և վայել է, նստեցին սեղանի վերին ծայրում: Անդրեյ Պետրովիչն առանց տեղ ընտրելու պատահաբար ընկավ հաստամարմին տիկին Գեբլերի և ֆրոյլայն Ռիտա Ռիզեմանի միջև, Իսկ ֆրոյլայն Ստելլան և իր փեսացուն նստեցին նրանց դիմացը: Հենց որ Կուրբատովի չարաբաստիկ աջ ձեռքը, որից նա դեռ այգում հանել էր ձեռնոցը, սեղանի վրա երևաց, տեղի ունեցավ մի փոքրիկ անախորժ դեպք: Ռիտա Ռիզեմանն Անդրեյ Պետրովիչից երեսը դարձրեց այնպիսի մի ընդգծված զզվանքով և այնպես շեշտված ձևով մեջքը դարձրեց նրան, որ մոտիկ հարևանների հայացքները դարձան եկվոր ուսանողի վրա: Եվ այդ ժամանակ բոլորը տեսան նրա ձեռքը: Ոչ ոք ոչ մի խոսք չասաց, կանանց մեջ, մանավանդ երիտասարդ կանանց մեջ, սկիզբ առավ այն խեղդված փսփսոցը, որը երբեմն շատ ավելի ճնշող ազդեցություն է ունենում, քան զգացմունքի բացահայտ արտահայտությունը բառերով: Մի մատաղահաս աղջիկ միայն, չկարողանալով իրեն զսպել, վախեցած մի կամացուկ ճիչ արձակեց:

Անդրեյ Պետրովիչի հայացքն ընկավ տիկին Գեբլերի վրա: Նրա տիրական փափլիկ դեմքն այնքան վախ ու զզվանք չէր արտահայտում, որքան բարձրաշխարհիկ տիկնոջ ցասում, նախատինք ու կշտամբանք: Տիկին Գեբլերը նորից հատուցման աստծո դերի մեջ էր մտել: Եվ նա այդ դերը խաղում էր այնպես ազդու, որ Անդրեյ Պետրովիչը, այդ լուրջ մարդը, չնայած իր անհարմար դրության, հազիվ էր կարողանում ժպիտը զսպել:

— Սա միայն ամենաանմեղ naev us maternus է[2]. . . ներեցեք, հարգելի տիկին Գեբլեր,— ասաց նա, և նրա ձայնի մեջ լսվում էր դժվարությամբ խեղդված ծիծաղը:— Սա նույնքան տարեկան է, որքան ես: Ինձ ոչ մի ցավ չի պատճառում:

Եվ ասես անտեսելով բոլոր վախեցածներին ու զայրացածներին՝ ռուսը ձեռնոցը չհագավ, այլ հանգիստ ձեռքն առավ դանակ-պատառաքաղը: Ի դեպ, ձեռնոցը կարող էր խանգարել նրան սեղանի վրա: Մինչդեռ ֆրոյլայն Ռիտան այլևս ոչ մի հայացք չգցեց այդ սարսափելի ձեռքի վրա և շարունակում էր նստել մեջքը համարյա դարձրած Կուրբատովին, որը շրջվել էր դեպի իր հարևանը՝ Հայնրիխ Բերգմանը, տիկին Գեբլերը շուտ-շուտ աչքի տակով նայում էր այդ կարմրակապույտ զարզանդին, իսկ հետո ասես կշտամբանքով նայեց պարոն ու տիկին

[2] Բնածին նշան (լատ.):

Ռիզեմաններին: Իսկ մյուս հյուրերը շուտով թոթափեցին իրենց շփոթմունքը. կամ վարժվեցին այդ տեսարանին, կամ թե ուտել-խմելով տարված՝ մոռացան Անդրեյ Պետրովիչի չարաբաստիկ ձեռքը:

Պինդ ուտում էին, բաժակները չխկացնելով խմում մինչև հատակը և երգեր էին երգում օրվա հանդեսի պատճառի պատվին: Անդրեյ Պետրովիչը, որ ընկել էր երկու հակառակորդների միջև, ստիպված էր շարունակ լուռ մնալ, թեև երբեմն Ստելլան նրան էր դառնում որևէ դատարկ խոսքով:

Ընթրիքից հետո երիտասարդները ցրվեցին այգում, որտեղ առկայծում էին գույնզգույն լույսերը, իսկ շուտով էլ ճարճատելով ու սուլելով վեր սլացան գեղատեսիլ հրթիռները: Մինչ այդ տանտերը, որի պայծառ տրամադրությունը լիովին վերականգնվել էր, ավելի տարեց հյուրերին թևանցուկ արած տանում էր դեպի ամեն տեսակ գինիներով ու լիկյորներով ծանրաբեռնված սեղանը, որ դրված էր պատշգամբի մի անկյունում, բարձր արմավենիների ու ֆիլոդենդրոնների մեջ: Հիշելով Անդրեյ Պետրովիչին տված իր խոստումը՝ գործարանատերը նրան էլ հրավիրեց «ակունքի» մոտ: Թվում էր, որ Ռիզեմանը լիովին ազատվել էր այն անբարյացակամությունից, որ քիչ առաջ այգում տածում էր Անդրեյ Պետրովիչի նկատմամբ. այդ լուրջ, համարյա ինքնամփոփ մարդը, որ այնքան ինքնավստահ էր խոսում, ինչ-որ բանով հրապուրում էր պարոն Ռիզեմանին: Պարոն Ռիզեմանը ջանում էր նրան խոսակցության մեջ քաշել, ասես հետաքրքրվում էր նրա կարծիքով, ասես հաշվի էր առնում նրա դատողությունն այս կամ այն հարցի վերաբերյալ: Միևնույն ժամանակ նկատելի էր, որ ինքն Ռիզեմանն էլ աշխատում էր խոսել, բառերն ընտրելով ավելի խնամքով, ավելի մտածված ու սրամիտ, քան անում էր սովորաբար: Նա մեկից լսել էր, որ Անդրեյ Պետրովիչը ոչ միայն բարձրաստիճան հոգևորականի որդի է, այլ և իրավագիտության թեկնածու, դրա համար էլ այժմ ընդգծված շեշտով Կուրբատովին կոչում էր «պարոն թեկնածու», և ուսանողի նկատմամբ իր շաբլոն սիրալիրությանը հարգանքի մի մասնիկ էր միանում նույնիսկ հյուրերի ներկայությամբ:

Միառժամանակ խումբը հյուրասիրվում էր խմիչքների սեղանի մոտ, հետո, երբ հյուրերն սկսեցին նրանից հեռանալ, Մարտին Ռիզեմանն այնպես արեց, որ ինքն ու Կուրբատովը մնացին երկուսով: Նրանք զրուցելով նորից գնացին այգի: Առանց մի առանձին հետևողականության գործարանատերը խոսում էր իր և իր ձեռնարկության մասին, իր անցյալի ու ներկայի մասին, խոսում էր իր «գործի» վիճակի մասին անցյալում և ներկայումս: Թվում էր, որ նա ջանում է եկվոր ուսանողի աչքում բարձրացնել իր անձը, ներկայացնել իրեն ավելի վառ գույներով:

—-Այո՛, այո՛,— գլխարկը ծոծրակին հրելով հանկարծ սկսեց պարոն Ռիզեմանը, երբ արդեն սպառվել էր նախկին նյութը՝ Պետերբուրգի բարձրագույն դպրոցներում սովորելու պայմանների մասին:— Ծանր օրեր են լինում, երբեմն, կյանքում, ես այդ բոլորից լավ գիտեմ: Իր սեփական ուժերով ամենացածունքից մարդամեջ դուրս գալը հեշտ բան չէ, բայց, փա՛ռք աստծո, ինձ այդ հաջողվեց: Կարո՞ղ եք պատկերացնել, թանկագին Անդրեյ Պետրովիչ, որ այն մարդը, որն այժմ կանգնած է ձեր առաջ, մի ժամանակ աղքատ է եղել եկեղեցու մկան պես: Ես ամենևին չեմ ամաչում ասել ձեզ, որ քսանհինգ տարի առաջ ես ընդամենը մի հասարակ վարպետի օգնական էի կաթսայագործական արհեստանոցում, նկատեցեք, ամենահասարակ օգնական, որը չնչին վարձատրություն էր ստանում վարպետից և ճակատի քրտինքով էր վաստակում իր օրվա հացը: Իսկ հիմա... Գիտե՞ք ինչ, պարոն թեկնածու, դուք պետք է երբևիցե գաք տեսնելու իմ գործարանը: Չի կարելի ասել, թե շատ մեծ է. ընդամենը չորս հարյուր բանվոր և մեկ միակ ծխնելույզ... իհարկե, մեծ գործարանների հետ չի համեմատվի... Բայց... այսուամենայնիվ լավ կլիներ դուք տեսնեիք այն: Կարող եմ վստահեցնել, որ ես լիովին գոհ եմ իմ գործարանից, այն, այսպես ասած, բարգավաճում է, իսկ ինչ վերաբերում է արտադրությանը և, որ ամենագլխավորն է, շահաբերությանը, ապա այն իր ետևն է թողնում նույնիսկ որոշ խոշոր ձեռնարկություններ. . . Այո՛, այո՛, դրա համար հարկավոր է հմուտ ղեկավարություն, մեր ժամանակներում գործարանատերը պետք է խելամիտ գլուխ ունենա, պետք է կարողանալ ամեն ինչ հաշվի առնել և ծանրութեթև անել, կարողանալ հեռուն տեսնել, մի խոսքով հարկավոր է առևտրական ջիղ ունենալ: Հենց առևտրական հոտառությունն է, որ դարձնում է բոլոր անիվները և դարձնում է այնպես, ինչպես պետք է և պետք եղած պահին: Ի՞նչ եք կարծում, պարոն թեկնածու, ճիշտ չե՞մ ասում:

— Ես գոհունակությամբ կծանոթանամ ձեր գործարանին,— ասաց Անդրեյ Պետրովիչը, ականջի ետևը գցելով Ռիզեմանի պարծենկոտ հարցումը:— Ե՞րբ կարելի է անել այդ:

— Երբ ցանկանաք, պարոն Կուրբատով: Դուք կարող եք գնալ երկաթուղով կամ որևէ օր ինձ հետ միասին, ձիասայլակով, կարող եք կարգադրել, որ թամբած ձի տան ձեզ, կամ հեծանիվով կգնաք. մեզ դրանցից երեք հատ ունենք: Այնքան էլ հեռու չէ, ընդամենը մի տասներկու վերստ: Իսկ քաղաքում ամեն մի երեխա ձեզ ցույց կտա, թե ինչպես պիտի գնալ Ռիզեմանի գործարան:

— Ձեր գործարանը մեքենաշինակա՞ն գործարան է, պարոն Ռիզեման:

— Չուգունաձուլական և մեքենաշինական, հիմնական արտադրանքը շոգեկաթսաներն են... Իմ կաթսաների հռչակը շատ հեռուներն է տարածվել, պարոն Անդրեյ Պետրովիչ, ինձ պատվերներ են տալիս նույնիսկ խոշոր արդյունաբերական կենտրոններից՝ Պետերբուրգից, Մոսկվայից, Վարշավայից: Իմ շոգեկաթսաները գործադրվում են և՛ Սև ծովում, և՛ Սիբիրում, որտեղ ասես:

Անդրեյ Պետրովիչը մի քանի րոպե լուռ քայլում էր գործարանատիրոջ կողքին, որը շարունակում էր հափշտակությամբ պատմել իր ձեռնարկության մասին, ապա հարցրեց.

— Դուք ասացիք, պարոն Ռիզեման, որ ձեր ուժերով եք հասել ներկայիս դրության, որ ինքներդ եք դուրս եկել կարիքից և հասել հարստության:

— Ես լիակատար selbst-made-man[3] եմ, ինչպես անգլիացիներն են ասում, կարող եք ինձ հավատալ, պարոն թեկնածու:— Եվ պարոն Ռիզեմանը գլխարկը ծոծրակից թեքեց ականջի վրա և ամերիկական ձևով ձեռքերը խրեց շալվարի գրպանը:

— Բայց գործարան կառուցելու կամ գնելու համար, համենայն դեպս, երևի մի դրամագլուխ ունեցե՞լ եք, կամ գոնե վարկ,— ասաց Կուրբատովը:— Իսկ վարպետի խեղճ օգնականը սովորաբար ոչ մեկն է ունենում, ոչ մյուսը:

— Այո, բայց, գիտե՞ք, ախր կյանքում մի քիչ էլ պետք է մարդու բախտը բանի, — պատասխանեց Մարտին Ռիզեմանը, և նրա լայն, կլոր դեմքին ուրախության մի շող երևաց, որը միշտ ցույց է տալիս, որ մարդ գոհ է ինքն իրենից և իր բախտից:— Կյանքում գոնե մի քիչ մարդու բախտը պիտի բանի, իսկ գործունյա մարդու բախտը համարյա միշտ բանում է: Բայց ամենագլխավորը, այնուամենայնիվ, գլուխն է, խելամիտ, բանիմաց գլուխը... Բանն այսպես եղավ, պարոն թեկնածու... Երկար ժամանակ ես աշխատում էի տիրոջս մոտ, հետո տերս մեռավ: Նա ինքը այրի էր, և արհեստանոցի ժառանգ մնաց նրա միակ աղջիկը: Բայց կինը, այն էլ ջահել աղջիկը, ինչպե՞ս կարող է գլուխ հանել այնպիսի մի գործից, ինչպիսին կաթսայագործական արհեստանոցն է: Ֆրոյլայն Բետին ուղղակի նեղն էր ընկել և իր վիշտը բաժանում էր ինձ հետ: Ես խղճացի նրան: Դե ես միշտ էլ սիրով օգնում եմ մերձավորներին, եթե նա որևէ փորձանքի մեջ է ընկել, առավել ևս, երբ խոսքը վերաբերում է թույլ, անօգնական կնոջ: Եվ ահա, այնպես ստացվեց, որ ես...

— Որ դուք նշանվեցիք ֆրոյլայն Բետիի հետ,— վրա բերեց Անդրեյ Պետրովիչը:

— Ճիշտ այդպես, պարոն թեկնածու: Իսկ ինչո՞ւ այդպես չպիտի անեի: Ֆրոյլայն Բետին հենարանի և օգնականի կարիք ուներ, իսկ ինձ կին էր հարկավոր: Ֆրոյլայն Բետին լավ դաստիարակված, կրթված օրիորդ էր, իսկ ես՝ բանիմաց, աշխատասեր վարպետ: Եթե նա իր արհեստանոցն ուրիշի ձեռքը տար, վարձված մարդու հոգատարության, տե՛ր իմ աստված, ի՞նչ կմնար այդ արհեստանոցից:

— Լավ, իսկ եթե այդ կողմնակի վարձված մարդը դուք լինեի՞ք, պարոն Ռիզեման:

— Ե՞ս: Դե ես... ես, իհարկե, ամեն ինչ կանեի, ինչ հարկավոր է, բայց... դե գիտեք, քոնը, այնուամենայնիվ, քոնն է, իսկ ուրիշինը՝ ուրիշինը... Բացի այդ, պետք է ասեմ, որ ձեռնարկությունը բարձիթողի էր արված, թողնված բախտի կամքին... Իմ հանգուցյալ աները... աստված հոգին

---

[3] Գերմաներենով աղավաղված անգլիական self-made-man_արտահայտությունը, որ նշանակում է «մարդ, որ ինքն է իրեն սարքել», ինքն է իր համար ճանապարհ հարթել կյանքում:

լուսավորի — շատ փափկասիրտ, զիջող մարդ էր և որպես գործատեր բանի պետք չէր: Օգնական վարպետներն ինչ ուզում էին, այն էլ անում էին, նույնիսկ աշակերտները հաճախ նրա գլխին էին նստում: Դրությունը փրկել կարող էր միայն նա, ով ինքը տեր լիներ և գործը տաներ տիրական ձեռքով, գործատիրոջ ամուր, անողոք, երկաթե ձեռքով: Այս բանը ես ասացի և Ֆրոյլայն Բետիին: Ասացի, որ եթե նրա արհեստանոցը իր ձեռքը չառնի այնպիսի մի մարդ, որին գործն ավելի շատ հետաքրքրի, քան վարձու ծառայողին, ապա շուտով օրիորդն ստիպված կլինի իր հացը վաստակել ուրիշների մոտ, այստեղ-այնտեղ դասեր տալով: Եվ նա ինձ հասկացավ: Նա տեսավ, թե ես որքան հարկավոր եմ իրեն, մենք ամուսնացանք: Այսպիսով, պարոն թեկնածու, նեղության օրին ես նրան հենարան ու պաշտպան դարձա...

Պարոն Մարտին Ռիզեմանը մի երկու անգամ քնքշանքով շոյեց իր կարճ խուզած ճերմակ այտմորուքները և նայեց Կուրբատովին՝ նրանից պատասխան սպասելով: Բայց Անդրեյ Պետրովիչը լուռ նայում էր իր ոտքերի տակ: Որքան աղջամուղջի մեջ պարոն Ռիզեմանը կարող էր նկատել, ռուս ուսանողի հոնքերը կիտված էին և մուգ մորուքից վերև շրթունքները պինդ սեղմած:

— Եվ դուք ժամանակի ընթացքում ձեր արհեստանոցը գործարա՞ն դարձրիք,— վերջապես հարցրեց Կուրբատովը:

— Որտեղի՞ց գիտեք դուք:

— Ես ոչինչ չգիտեմ, բայց այդպես եմ կարծում:

— Դուք իրավացի եք: Ես իմ արհեստանոցն ընդարձակում էի, մինչև որ որպես արհեստանոց այն արդեն շատ մեծ էր, բայց գործարան կոչելու համար դեռ շատ փոքր: Եվ այն ժամանակ ես գործարան կառուցեցի:

— Արհեստանոցում դուք ավելի շատ օգնականներ և աշակերտնե՞ր էիք պահում:

— Այո, որովհետև պատվերներն ավելացել էին, բարենպաստ ժամանակ էր:

— Եվ գործարան կառուցելու համար անհրաժեշտ ամբողջ գումարը միայն ձեր արհեստանո՞ցը տվեց:

— Դե, իհարկե,— պատասխանեց պարոն Ռիզեմանը: Բայց այստեղ նա մի փոքր սուտ ասաց. Ֆրոյլայն Բետին բացի իրենից և արհեստանոցից իր ամուսնուն բերել էր նաև մի երեք հազար ռուբլի կանխիկ դրամ և մի փոքրիկ տուն, որը հետագայում ծախեցին: Պարոն Ռիզեմանը սրա մասին ոչինչ չասաց, որովհետև, ըստ երևույթին, նրան շատ էր դուր գալիս լինել մի մարդու դերում, որը «կյանքում ինքն է ճանապարհ հարթել իր համար»:

Եվ այստեղ պարոն Ռիզեմանն սկսեց մանրամասն պատմել, թե ինչպես կառուցեց գործարանը, ինչպես է այժմ բարգավաճում այն, և ամեն կերպ աշխատում էր իրեն առաջին տեղը դնել: Բայց եթե պարոն Մարտին Ռիզեմանը հույս ուներ, թե այն մարդը, որին պատմում է այդ ամենը և որի աչքում հիմա ինքը պիտի ներկայանա բավական պայծառ փայլով, իրեն խրախուսելու է որևէ խրախուսական բացականչությամբ կամ հիացական հայացքով, ապա բոլորովին սխալվում էր: Այդ տարօրինակ մարդը լուռ էր, և նրա լռությունն այնքան վիրավորական էր, որ պարոն Ռիզեմանն էլ ի վերջո լռեց, ասես նա ափսոսաց, որ իր մարգարիտները թափում է այդպիսի մի պաղ, անտարբեր էակի առաջ:

Նրանք զբոսնելով մոտեցան այն հրապարակին, որտեղ հրավառություն էր սարքած: Այստեղ հյուրերը շատախոսելով շրջապատեցին պարոն Ռիզեմանին, և նա ինքնաբերաբար անջատվեց Կուրբատովից, մի հանգամանք, որի համար, ըստ երևույթին ոչ մեկն էր ափսոսում, ոչ մյուսը:

Անդրեյ Պետրովիչը գտավ Էբերհարդին, որն իր հասակակից Ռալֆ Գեբլերի հետ հրթիռներն էր վառում: Եվ այժմ արդեն Կուրբատովը շարունակ մնաց երեխաների հետ: Երևում էր, որ նա հետաքրքրությամբ էր մասնակցում նրանց զվարճություններին. նա շարունակ նորանոր հետաքրքիր բաներ էր մտաբերում, գնդակախաղի մի քանի նոր ձևեր սովորեցրեց երեխաներին և իր կատակներով հաճախ էր ծիծաղեցնում և՛ տղաներին, և՛ աղջիկներին:

Ստելլա Ռիզեմանը մի քանի անգամ ուզում էր մոտենալ Կուրբատովին, բայց տեսնելով, որ նա իր հոր հետ է, չուզեց խանգարել նրանց: Բացի այդ, Օսվալդ Գեբլերի սիրտը այդ սքանչելի երեկոյին այնպես լի էր գարնանային զգացմունքով, որ նա իր հարսնացուից և ոչ մի վայրկյան անջատվել չէր կարող: Իսկ երբ, վերջապես, Ստելլան հարմար րոպե գտավ Անդրեյ Պետրովիչին որոնելու, ապա պարզվեց, որ նա այգում չէ: Տան երկրորդ հարկում Կուրբատովի սենյակի պատուհանը լուսավորված էր. ըստ երևույթին Անդրեյ Պետրովիչը տոնական զվարճություններից կշտանալով՝ բոլորից շուտ էր գնացել իր բույնը, առանց որևէ մեկին բարի գիշեր մաղթելու:

3

Անդրեյ Պետրովիչ Կուրբատովի մանկավարժական գործունեությունն Ռիզեմանների տանն սկսվեց այնպիսի ձևով, որ ոչ մի կերպ չէր կարող վստահություն ներշնչել իր նկատմամբ: Այդ գործունեությունն, ըստ էության, ընդհանրապես դեռ չէր սկսվել: Պարոն Մարտին Ռիզեմանը գլուխն օրորելով և հոնքերը կիտելով ստիպված էր խոստովանել, որ ինքը բոլորովին այլ կերպ էր պատկերացնում ռեպետիտորին, որը մտադիր է կարճ ժամանակամիջոցում լավ պատրաստել իր աշակերտին և անցկացնել վերաքննությունների ստորջրյա խութերի արանքով:

Փոխանակ երկուշաբթի առավոտվանից տղային միանգամից բուռը հավաքելու և ստիպելու, որ կանոնավոր պարապի, պարոն Կուրբատովը միանգամայն հանգիստ սրտով Էբերհարդի հետ գնաց զբոսնելու: Նրանք անտառից վերադարձան ճաշի ժամանակ, ուղղակի գայլի ախորժակով, ճաշից հետո նորից շտապեցին դուրս գնալ և ետ եկան միայն երեկոյան դեմ, նույն արդյունքներով: Միևնույնը կրկնվեց նաև երկրորդ ու երրորդ օրերը: Հետո, ճիշտ է, սկսեցին պարապել հատկապես դրա համար առանձնացված ու վաղուց նախապատրաստված սենյակում, բայց այդ դասերն այնքան կարճ էին, ավելի ճիշտ՝ դրանք այնքան քիչ էին, որ պարոն Ռիզեմանի կարծիքով աշակերտը իսկի քիթը գրքին էլ չէր հասցնում: Եվ ետճաշյա ժամերին էլի երկար ժամանակ էր հատկացվում դաշտերում, անտառներում զբոսնելուն, այնպես որ տղային ամենևին ժամանակ չէր մնում վաղվա դասը պատրաստելու, եթե միայն չմտածենք, որ ընդհանրապես նրան ոչ մի դաս էլ չէր տրվում, իսկ դա շատ հավանական էր թվում: Եվ այսպես տղան պարապ-սարապ ման էր գալիս օր օրի ետևից և հետագայում էլ ոչ մի փոփոխություն չէր նախատեսվում:

Աշակերտն, իհարկե, անկեղծորեն գոհ էր այդ ձևի պարապմունքից: Դա երևում էր նրա շողշողուն աչքերից ու կարմիր, թարմ դեմքից, նրա վերաբերմունքից իր ուսուցչի նկատմամբ: Էբերհարդն ու Անդրեյ Պետրովիչը շուտով բարեկամներ դարձան, նրանց ավելի ու ավելի էր կապում սրտագին մտերմությունը: Էբերհարդ Ռիզեմանը, որն ամեն մի ուսուցչի համարում էր իր անձնական թշնամին, որը հենց այդ ռեպետիտորին էլ, որն սպառնում էր փչացնել նրա ամառային արձակուրդը, դիմավորեց ծույլ աշակերտի ամբողջ ատելությամբ, Էբերհարդը, որը մտածում էր առաջին իսկ րոպեից ուսուցչին ցույց տալ իր մագիլները և որքան կարելի է ավելի շատ թունավորել նրա կյանքը, որը, վերջապես, մտադիր էր եկվոր ուսանողին, որպես մի աղքատ վարձովի ծառայողի վերևից ներքև նայել գործարանատիրոջ որդու տեսակետով, այդ նույն Էբերհարդ Ռիզեմանը երկու շաբաթ չանցած՝ դարձել էր Անդրեյ Պետրովիչի անբաժան ընկերը, քայլում էր մտերմաբար նրա ձեռքը բռնած, նրա մասին խոսում էր մեծագույն հարգանքով, և երբ այդ անբաժան ընկերները երկուսով որևէ տեղ էին գնում, բոլորը տեսնում էին, որ աշակերտի հայացքը շարունակ գամված է ուսուցչի շուրթերին. այժմ Էբերհարդ Ռիզեմանը իրենց տանը վարձված չքավոր ուսանողին վերևից ներքև չէր նայում, այլ՝ ներքևից վերև:

Եթե այս կապակցությամբ տիկին Ռիզեմանի մեջ հակասական զգացմունքներ էին արթնանում — մի կողմից նա ուրախ էր, որ ուսուցիչը չափից ավելի խիստ չէ իր որդու հետ, մյուս կողմից անհանգստանում էր Էբերհարդի առաջադիմության հարցով, ապա պարոն Ռիզեմանի տրամադրությունը ժամանակի ընթացքում ավելի ու ավելի մռայլ էր դառնում: Նրա համար ավելի ու ավելի դժվարանում էր կատարել Կուրբատովին տված խոստումը՝ չխառնվել նրա գործունեությանը: Վերջապես պարոն Ռիզեմանը որոշեց գործին մոտենալ զարտուղի

ճանապարհով, թեպետ այդ էլ հակասում էր իր խոստումին: Մի գեղեցիկ օր պարոն Ռիզեմանն սկսեց խոստովանեցնել ու խրատել իր որդուն:

— Լսի՛ր, տղա՛ս, ախր դու բոլորովին չես պարապում:

— Ինչպե՜ս թե,— զարմացավ Էբերհարդը,— ես ամեն օր պարապում եմ:

— Բայց ես երբեք քո ձեռքին գիրք չեմ տեսնում, դու զբաղվում ես ուրիշ բաներով, որոնք ոչ մի կապ չունեն քո վերաքննությունների հետ: Եվ ընդհանրապես ե՞րբ ես պարապում դու, եթե ամբողջ օրը կամ օրվա կեսը թափառում ես անտառներում:

— Բայց ես հո մենակ չեմ գնում, այլ՝ Անդրեյ Պետրովիչի հետ:

— Դա դրությունը չի փոխում: Ես ուզում եմ իմանալ, թե դու երբ ես սովորում:

— Ես միշտ էլ սովորում եմ,— պատասխանեց տղան, ասես հոր հարցից զարմանալով:— Ես սովորում եմ և՛ տանը, և՛ երբ Անդրեյ Պետրովիչի հետ լինում եմ անտառում կամ գետի ափին և կամ գյուղում: Անդրեյ Պետրովիչն ինձ հետ պարապում է ամեն տեղ: Անդրեյ Պետրովիչը դասը հարցնում է, իսկ ես պատասխանում եմ:

Պարոն Ռիզեմանի լայն, կարմիր դեմքին խիստ զարմանք արտացոլեց, և նա գոչեց.

— Բայց դա ի՞նչ պարապմունք է, դա ի՞նչ դասեր են՝ անտառում, գետափին, գյուղում: Դա պարապմունք չէ, դա հո խաղ է:

— Չգիտեմ, բայց ինձ շատ է դուր գալիս այսպես սովորելը,— աշխույժ պատասխանեց Էբերհարդը:

— Դրան ես հավատում եմ,— ասաց պարոն Ռիզեմանը կծու քմծիծաղով:— Ծուլություն ու չարություններ անելը քեզ միշտ էլ շատ է դուր եկել: Բայց ես կուզենայի իմանալ, թե այդպիսի պարապմունքից ի՞նչ է մնում քո գլխում, աշնանն ի՞նչ պաշարով ես գնալու քննությունների:

— Իսկ դու գիտե՞ս, հայրիկ,— պատասխանեց տղան լուրջ համոզված,— երբ այդպես եմ սովորում, ամեն ինչ շատ լավ եմ հիշում, շատ ավելի լավ, քան դասի ժամանակ, և գրքերն էլ այն չեն... այնպես ձանձրալի չեն...

— Դե, հասկանալի է, քանի որ դու երբեք գիրք չես վերցնում ձեռքդ:

— Բայց չէ՞ որ Անդրեյ Պետրովիչն ամեն ինչ անգիր գիտե և բացատրում է ճիշտ այնպես, ինչպես դասագրքում է գրված: Սովորել գրքով, ամեն ինչ անգիր անել միայն գրքով՝ գիտես, հայրիկ, դա շատ ձանձրալի բան է, և ես չեմ էլ կարող բոլորը հասկանալ... Իսկ Անդրեյ Պետրովիչն ամեն ինչ ասում է հիշողությամբ ու բացատրում է, և դա որքա՜ն ավելի լավ է: Նա այնքան հաճախ է հարցնում և այնպիսի բազմապիսի ձևերով է հարցնում ամեն բան, ինչ առաջ ասել է, որ ոչինչ չես մոռանա. . . Հավատա, հայրիկ, Անդրեյ Պետրովիչը լավ է սովորեցնում:

Պարոն Ռիզեմանը գլուխն օրորեց, հետո նորից գլուխն օրորեց: Եթե նա հաստատ համոզված լիներ, որ տղան այդպիսի տարօրինակ եղանակով, համարյա խաղալով իսկապես գիտելիքներ է ձեռք բերում և կառաջադիմի, ապա գուցեև կհաշտվեր դասավանդման այն եղանակի հետ, որ ընտրել էր Կուրբատովը: Բայց չէ՞ որ Էբերհարդը կարող էր ստել կամ առնվազն չափազանցնել, ինչպես անում են ծույլ աշակերտները: Դրա համար էլ պարոն Ռիզեմանը որոշեց աչքի տակով հետևել, թե աշակերտի վրա ինչպես են ազդում Անդրեյ Պետրովիչի դասավանդման եղանակները և ինչ արդյունք են տալիս, և հարկ եղած պահին, եթե վտանգն ակներև դառնա, չնայած իր տված խոստումին՝ միջամտել օգտվելով իր հայրական տիրական հեղինակությունից:

— Հիմա դու պարոն Կուրբատովի հետ էլի «դուք»-ո՞վ ես խոսում, ինչպես ես պատվիրել եմ,— մի քանի րոպե խորհելուց հետո հարցրեց Ռիզեման հայրը:

Էբերհարդը կարմրատակեց, հայացքը ցած գցեց և ոչինչ չպատասխանեց: Նա լավ գիտեր, թե ինչ է նշանակում հոր խիստ պատվերը չկատարել:

— Ոչ,— կմկմաց նա վերջապես, երբ Ռիզեմանը կտրուկ կրկնեց իր հարցը:

— Ինչո՞ւ:

— Ես... ես... չեմ կարող...

— Դու չե՞ս կարող: Այդ ի՞նչ է նշանակում:

Տղան գլուխը կախ կանգնած՝ շփոթմունքի մեջ մատներով գոտու ճարմանդն էր խաղացնում:

— Ես ու Անդրեյ Պետրովիչն արդեն այնքան... լավ ծանոթներ ենք. . . և նա. . . նա կբարկանար ինձ վրա, եթե ես նրան «դուք» ասեի, որովհետև:

— Որովհետև ի՞նչ.

— Որովհետև նա ինքն ուզեց, որ ես իր հետ «դու»-ով խոսեմ:

— Ախ, ա՛յ թե ինչ: Դու կատարում ես այն, ինչ ցանկանում է Անդրեյ Պետրովիչը և չես կատարում այն, ինչ ե՛ս եմ պատվիրում քեզ: Դու չե՞ս վախենում ինձ բարկացնել:

— Հայրի՛կ,— ասաց Էբերհարդը համարյա աղերսական նայելով հորը,— ես փորձեցի կատարել քո հրամանը և նրան մի անգամ «դուք» ասացի: Բայց նա ինձ նայեց այնպես... այնպես օտարոտի և հարցրեց, թե ով է ինձ պատվիրել «դուք»-ով խոսել իր հետ...

— Բայց դու չասացի՞ր, որ ես եմ պատվիրել: Դու հիշո՞ւմ էիր, ինչ եմ ասել ես:

— Այո, հիշում էի... Անդրեյ Պետրովիչին ես ասացի այնպես, ինչպես դու էիր պատվիրել, որ իմ կարծիքով անհարմար է ուսուցչին «դու» ասել, որ ես ամաչում եմ...

— Իսկ նա՞:

— Իսկ նրա դեմքն այնպես լուրջ ու թախծոտ դարձավ, և նա պատասխանեց. «Էբերհարդ, այդ դու քո խոսքերը չես ասում, քեզ որևէ մեկն այդպես է հուշել: Ինչո՞ւ ես ստում: Մարդ չպետք է ստի: Եվ դու պետք է միշտ անես այն, ինչ ինքդ ես մտածում ու զգում»:

— Իսկ դու՞:

— Ես ոչինչ չպատասխանեցի: Ես լուռ մնացի:

— Ինչո՞ւ չասացիր, որ ոչ ոք քեզ չի պատվիրել այդպես խոսել:

— Չկարողացա, հայրիկ. . . Նա նայում էր ուղիղ իմ երեսին և ես... ես կարմրեցի...

— Եվ ինչո՞վ վերջացավ ձեր խոսակցությունը:

Էբերհարդը նորից հայացքը ցած գցեց և կոշիկի քթով գորգի վրա գիծ քաշելով կմկմոցով պատասխանեց.

— Անդրեյ Պետրովիչը հարցրեց, թե ես նորից «դու»-ո՞վ կխոսեմ իր հետ:

— Եվ դու, իհարկե, խոստացար:

— Այո, հայրիկ....

Պարոն Մարտին Ռիզեմանը իր մորուքից մի քանի մազ կծեց, ապա ձեռքերը գրպանները խրելով մի քանի անգամ ետ ու առաջ քայլեց սենյակում: Նրա դեմքը մռայլ էր: Նա բարկացած էր տղայի վրա և առավել ևս՝ ռեպետիտորի վրա: Էբերհարդը, ինչպես երևում էր, ավելի շատ այդ օտար մարդու ազդեցությանն ու կամքին էր ենթարկվում, քան իր հոր հրամանին. սա վիրավորում էր

պարոն Ռիզեմանի հայրական զգացմունքը: Եվ այդ եկվոր մարդը, վարձու ծառայողը երեխային ստիպում էր չլսել ծնողներին, նրանց կամքին հակառակ վարվել: Սա վիրավորում էր պարոն Ռիզեմանին, որպես տանտիրոջ: Եվ, վերջապես, նա նեղացել էր նրա համար, որ Կուրբատովը հասկացել է. տղան միայն ծնողների կամքն է կատարում: Պարոն Ռիզեմանը հոգու խորքում պետք է խոստովաներ, որ ինքը խախտել է Կուրբատովին տված խոստումը: Այժմ նա պետք է ամաչեր Կուրբատովից, իսկ դա նույնպես վիրավորական էր:

Նա խորհում էր, թե հիմա ինչ անի, և եկավ այն եզրակացության, որ ամենից ավելի խելամիտ կլինի Էբերհարդին զիջել Կուրբատովին: Չարժեր այդ մի «դու»-ի պատճառով թաքուն պատերազմ սկսել ուսուցչի հետ, որի հետևանքով Կուրբատովը կարող էր թողնել գնալ: Այդպես անել չարժեր հենց թեկուզ նրա համար, որ դա կխախտեր ընտանիքի հանգիստը և հենց իր՝ պարոն Ռիզեմանի հանգիստը: Հարցն այնքան էլ մի լուրջ բան չէր: Եվ հայտնի չէ, թե ընդհանրապես Ռիզեմանն այդպիսի հրաման կտա՞ր իր տղային, եթե տիկին Ռիզեմանը իր սրտի դառնությունն ամուսնուն հայտնելով մի քանի անգամ չընդգծեր, որ «տիկին Գեբլերը և ամբողջ հասարակությունը» դատապարտում են այդպիսի չափից դուրս մտերմականությունը: Իսկ պարոն Մարտին Ռիզեմանը միշտ էլ ենթարկվում էր հասարակական կարծիքին, մանավանդ «բարձրաշխարհիկ քաղաքավարության» հարցերում:

— Կարող ես գնալ,— կարճ ու հատու ասաց նա որդուն:—Եվ տես, պարոն Կուրբատովի մոտ ծպտուն չհանես, թե ես սրա մասին խոսել եմ քեզ հետ:

Տղան շատ լավ հասկացավ, որ հայրն իրեն թույլ է տալիս Կուրբատովի հետ «դու»-ով խոսել և ուզում էր թեթևացած սրտով դուրս վազել, բայց երբ արդեն շեմքումն էր, հայրը նորից կանչեց նրան:

— Լավ հիշիր, Էբերհարդ, ինչ որ ասելու եմ քեզ: Պարոն Կուրբատովի հետ որքան ուզում ես կարող ես «դու»-ով խոսել, երբ դուք երկուսով կլինեք և ոչ ոք ձեզ չի լսի: Բայց երբ մեզ մոտ հյուրեր կան կամ մենք միասին սեղան նստած կլինենք,— ես, մայրդ և քույրերդ,— չհամարձակվես այդ անել: Եթե ուրիշների ներկայությամբ պարոն Կուրբատովը քեզ մի բան հարցնի, դու հիանալի կարող ես պատասխանել առանց «դու» ասելու... Հասկանո՞ւմ ես:

Տղան, իհարկե, հասկացավ: Նա ինքն էլ արդեն ակամա սկսել էր դիմել այդ խորամանկությանը: Ուստի և այնպես ստացվեց, որ պարոն Ռիզեմանը թեև իր հրամանը որդուն տվել էր Կուրբատովի գալուց շատ չանցած, այսօր ստիպված էր *հարցնել*, թե Էբերհարդը իր ուսուցչին «դուք» է ասում թե ոչ: Սեղան նստած ժամանակ և ընդհանրապես մեծերի ներկայությամբ Էբերհարդը ամեն կերպ խուսափում էր Անդրեյ Պետրովիչին դիմել արգելված բառով, իսկ եթե առանց դրան դիմել չէր լինի, տղան գերադասում էր լռել: Իսկ հիմա նա պետք է այդ նույն դերը խաղար հոր հրամանով:

— Հասկանում եմ, հայրիկ,— պատասխանեց նա և դուրս պրծավ սենյակից:

Էլի մի քանի օր հետո նկատելով, որ Անդրեյ Պետրովիչը մտադիր չէ փոխել իր ուսուցման մեթոդը, որն աշակերտի մեջ անփութություն ու ծուլություն էր զարգացնում, առաջվա պես աշխատում է տղային որքան կարելի է քիչ պահել սենյակում գրքերով զբաղված, նրան սովորեցնում է ազատ, թափառաշրջիկ կյանքի, պարոն Ռիզեմանը որոշեց նախ գործի անցնել խաղաղ, մտածված դիվանագիտական ճանապարհով:

— Է՛, թանկագին պարոն Անդրեյ Պետրովիչ,— սկսեց նա մի անգամ բարեհոգի և ուրախ տեսքով,— ի՞նչ եզրակացության եք եկել դուք ձեր աշակերտի մասին:

— Միանգամայն գոհացուցիչ,— պատասխանեց Կուրբատովը:

— Դուք կարծում եք, որ նա առաջադիմո՞ւմ է:

— Ես ոչ թե կարծում, այլ տեսնում եմ:

— Իսկ շատ քիչ չի՞ պարապում նա: Շատ ժամանակ չի՞ վատնում դատարկ տեղը:

— Ոչ:

— Դուք նրա մեջ ծուլություն, անուշադրություն չե՞ք նկատում:

— Ոչ, ես նկատում եմ, որ նա սիրով է սովորում:

— Եվ չե՞ք կարծում, որ նա բութ է, անընդունակ:

— Ձեր որդին այնքան էլ շնորհալի տղա չէ, պարոն Ռիզեման, նա այնքան էլ աշխույժ, ընկալող միտք չունի, մանավանդ որոշ ուսումնական առարկաներում: Հիշողությունն էլ շատ փայլուն չէ: Նա միջակ ընդունակությունների տեր աշակերտ է, պարոն Ռիզեման, ինչպես և երեխաների մեծ մասը:

— Իսկ նրա դպրոցական ուսուցիչները նրան կշտամբում են հենց ծուլության ու անուշադրության համար և պնդում են ճիշտ հակառակը, թե նա պայծառ գլուխ ունի և հիանալի ընդունակություններ:

— Կարող է պատահել,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը:— Բայց ես իմ աշակերտի մասին այսպիսի կարծիք եմ կազմել, որ ասացի ձեզ:

— Եվ, այնուամենայնիվ, դուք գտնում եք, որ կարո՞ղ եք նրան պատրաստել:

— Այո: Դուք հո գիտեք, որ ես այդ երաշխավորել եմ:

Պարոն Ռիզեմանը մի սևեռուն, խուզարկու հայացք գցեց Կուրբատովի ծաղկատար դեմքին և իր կամքից անկախ վստահության մի ինչ-որ հանգստացնող զգացմունք ունեցավ:

— Թանկագին Անդրեյ Պետրովիչ,— շարունակեց նա ընդգծված մեղմությամբ,— դուք նկատել եք, որ իմ որդին որոշ առարկաներ լավ չի յուրացնում: Ո՞ր առարկաներն են դրանք:

— Ամենից առաջ մաթեմատիկան և այն ամենը, ինչ կապ ունի նրա հետ: Մաթեմատիկան ձեր որդու ամենաթույլ տեղն է... Դուք նրա համար տեխնիկայի հետ կապված մասնագիտությո՞ւն եք ընտրել, պարոն Ռիզեման:

— Ինքնին հասկանալի է: Չէ՞ որ նա պետք է կառավարի իմ, իսկ հետագայում արդեն իր գործարանը:

— Վախենում եմ, որ Էբերհարդից հազիվ թե լավ ինժեներ դուրս գա,— չոր նկատեց Կուրբատովը:— Եթե կթույլատրեք խորհուրդ տալ ձեզ, պարոն Ռիզեման, ավելի լավ է թողեք Էբերհարդը համալսարան գնա և որևէ ուրիշ բան սովորի:

Բայց այդ միտքը գործարանատիրոջն այնքան խորթ, այնքան վանող և ցնորամիտ թվաց, որ նա նույնիսկ բավական համոզիչ բառեր չգտավ առարկելու համար: Ինչպե՞ս: Էբերհարդը ինժեներ չի՞ լինելու: Բայց դա հո տակնուվրա էր անում նրա բոլոր ծրագրերը, ավերում էր պարոն Ռիզեմանի բոլոր ջերմ երազանքները:

— Անդրեյ Պետրովիչ,— գոչեց նա հուզված,— դուք կարող եք ինձ խորհուրդ տալ ինչ հարցում ցանկանաք, ես շնորհակալ կլինեմ ձեզնից, միայն թե ո՛չ այս հարցում: Իմ տղան պետք է դառնա այն, ինչ սահմանված է նրա համար, ինչի համար նա ստեղծված է: Եվ նա պետք է լավ մեքենաշինարար ինժեներ դառնա, դրա մասին արդեն ես ինքս կհոգամ: Նա պետք է սովորի, սովորի և էլի սովորի: Իսկ եթե չի ցանկանա սովորել, ստիպված կլինի գործ ունենալ ինձ հետ: Բախտը որոշված է, մարդ կարող է ամեն նպատակի հասնել: Ընդունակությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ սովորելը, համառորեն սովորելը:

Տեսնելով, որ այդպիսի անսասան որոշման դեմ պայքարելն անօգուտ է, Անդրեյ Պետրովիչն ափսոսանքով ուսերը թոթվեց և խոսակցությունն ընդհատեց:

Ֆրոյլայն Ստելլա Ռիզեմանին թվում էր, որ Անդրեյ Պետրովիչն իր հետ տուն է բերել ինչ-որ մի բան, որ առաջ այստեղ չկար. նա բերել է թարմություն:

Նրան թվում էր, թե Անդրեյ Պետրովիչը լայն բացել է լուսամուտը, և այնտեղից զով շունչ է փչում:

Այսպիսի զգացմունք ուներ Ստելլան: Բայց եթե նրան հարցնեիր, թե ինչից է այդ զգացմունքը, պատասխանել չէր կարող: Անդրեյ Պետրովիչն իրեն առանձնապես ոչ մի բանով չէր դրսևորում, երբեք իրեն առաջին պլանի վրա չէր դնում, դիտավորյալ թե ակամա ջանում էր չխառնվել տան ու ընտանիքի ներքին գործերին: Բոլոր անիվներն այստեղ շարունակում էին դառնալ այնպես, ինչպես առաջ էին դառնում, իսկ նրանք, որ անշարժ կանգնած էին, այդպես էլ անշարժ էին մնացել: Սրա հետ միասին նա ինքնամփոփ չէր բառիս սովորական իմաստով, չէր ձգտում մեկուսանալ մյուսներից, նա ապրում էր այդ տանը տիրապետող մթնոլորտում ու իրադրության մեջ, խաղալով, սակայն, անտարբեր, լուռ դիտողի դեր:

Հետևապես, այն թարմ շունչը, որ Ֆրոյլայն Ստելլայի կարծիքով իր հետ բերել էր Անդրեյ Պետրովիչը, ծնունդ էր առնում հենց նրա անձից, նրան հատուկ ներքին հատկություններից, որոնք Ստելլան կռահում էր հոտառությամբ, առանց արտաքին արտահայտությունները տեսնելու: Այն, ինչ Անդրեյ Պետրովիչը չէր ասում բառերով, Ստելլան, թվում էր իրեն, կարդում էր նրա հայացքում, նրա դեմքին, կռահում էր նրա լռությունից:

Այդ թարմ հոսանքը, սակայն, որ գալիս էր Անդրեյ Պետրովիչի անձից, ոչ մի ուրախություն չբերեց Ստելլային: Ճիշտ այնպես, ինչպես մարդուն ամենևին հաճելի չի լինում, երբ քամին լուսամուտից փչելով սենյակում փոշի է բարձրացնում, այդպես էլ Ստելլային թվում էր, թե Անդրեյ Պետրովիչի գալով իրենց տանը փոշի է բարձրացել: Փոշի, որին նրա բնակիչները վաղուց վարժվել էին, որը նրանք մտադիր էլ չէին մաքրել, ավելի ճիշտ՝ ամենևին չէին նկատում: Եթե օտար մարդը տան մեջ փոշի է տեսնում, որ տերերը չէին տեսել, եթե նա սարդոստայն է տեսնում, որի վրա նրանք ուշադրություն չէին դարձրել, ապա տան տերերը դրանից ամաչում են, իսկ ամոթի զգացմունքը երբեք հաճելի չի լինում: Երբ Անդրեյ Պետրովիչը նկատում էր այդ փոշին, Ստելլան բարկանում էր: Եվ առավել խիստ էր բարկանում, որ Անդրեյ Պետրովիչը չափից ավելի շատ փոշի ու սարդոստայն էր տեսնում, որոնք հարկավոր էր թափ տալ:

Այդ մարդը լուռ էր և միաժամանակ ամեն ինչի նայում էր քննադատաբար: Ստելլան զգում էր այդ: Եվ քննադատելիս, ըստ երևույթին, շատ բան դատապարտում էր:

Մի քանի անգամ Ստելլան ուզեց շատ բնական ու սովորական հարց տալ նրան. «Ձեզ դո՞ւր է գալիս մեր տունը»: Բայց վերջին վայրկյանին զսպում էր իրեն, կուլ տալով բառերը, որոնք պատրաստ էին դուրս թռչելու լեզվից: Նա այդքան համարձակություն չուներ: Վախենում էր նրա պատասխանից:

Երբ Անդրեյ Պետրովիչը սենյակներից որևէ մեկը մտնելով շուրջն էր նայում, երբ նրա հայացքը մի առարկայից մյուսի վրա էր սահում, Ստելլայի սրտում վախի մի անորոշ՝ խառնակ զգացմունք էր արթնանում: Այնինչ այդ սենյակում ամեն ինչ կարգին էր, ինչպես և ամենուրեք Ռիզեմանների տանը: Այդ սենյակում, ինչպես և մյուսներում, տիրում էր նույն կոմֆորտը, նույն դուրեկան հարմարությունը, որ կյանքը հաճելի է դարձնում, որին ձգտում է մարդ, որին պիտի նախանձի ամեն ոք, ով զուրկ է նրանից: Այդ սենյակում կար էլի մի բան, որով իրենք հիանում էին, որին մեծ նշանակություն էին տալիս. այդ սենյակը, ինչպես և ամբողջ տունը, զարդարված էր Ռիզեմանների ընտանիքի երեք կանանց զանազան ձեռագործներով: Այստեղ ամեն ինչ ցույց էր տալիս, որ Ռիզեմանն ունի կին և երկու դուստր, աշխատասեր կին և երկու աշխատասեր դուստրեր: Նրանց ջանասիրությունն ուղղակի աչք էր մտնում, այդ չնկատել չէր կարող նույնիսկ ամենաանուշադիր այցելուն: Նրանց ջանասիրությունն այնքան մեծ էր, որ այդ ձեռագործների համար տունը նեղվածք էր թվում: Այստեղ աշխատում էին նրանք, ովքեր ամենևին աշխատելու կարիք չունեին, բայց, այնուամենայնիվ, ամեն մեկը հարգանքով էր վերաբերվում աշխատանքին: Եվ այդ սենյակը,

ինչպես և ամբողջ տունը, զուգած ու զարդարված էր այնպիսի սիրով, այնպես դուրեկան, որ նույնիսկ Ռիզեմանի տան մշտական այցելուների սիրտն ամեն անգամ սկսում էր արագ բաբախել:

Բայց երբ Անդրեյ Պետրովիչն էր դիտում այդպիսի մի սենյակ, ֆրոյլայն Ստելլան նրա աչքերում հավանություն չէր նկատում: Երիտասարդն այստեղ դատապարտման արժանի բան էր գտնում: Եվ ֆրոյլայն Ստելլան չէր կարողանում ազատվել այն մտքից, որ Անդրեյ Պետրովիչը դատապարտում է հենց այն, ինչ ուրիշներին այնպես դուր էր գալիս, ինչ ուրիշներն այնպես գովում էին և ինչով ինքը՝ Ստելլան էլ այնպես *պարծենում էր* հենվելով ուրիշների կարծիքի վրա: Անդրեյ Պետրովիչի հայացքում կարծես կարելի էր կարդալ, որ նա դատապարտում է Ռիզեմանների ընտանիքի կանանց ջանասիրությունը կամ, համենայն դեպս, բարձր չի գնահատում այն:

Նրա այս կարծիքը երբեմն հաստատվում էր նաև ուրիշ ձևով:

Տիկին Ռիզեմանի սահմանած ընտանեկան կարգ ու կանոնը պահանջում էր, որ նա ինքը և իր դուստրերը օրվա որոշ ժամեր հատկացնեն ձեռարվեստին: Այդ ժամերին կանայք ջանասիրաբար աշխատում էին: Պատշգամբում կամ տաղավարում նստած, իսկ անձրևային օրերին այդ նպատակին հատկացված սենյակում, նրանք գործում էին, ասեղնագործում, նկարում էին, ներկում կամ բրոնզապատում ու ոսկեզօծում: Երբեմն նրանց միանում էին հարևան ամառանոցների տիկիններն ու օրիորդները, և այդ ժամանակ աշխատանքը հիշեցնում էր կուռ տալու գյուղական սովորությունը: Բայց տիկին Ռիզեմանը սիրում էր, որ իր դուստրերը ուրիշ ժամերի էլ որևէ ձեռագործով զբաղվեն, նա միշտ շատ ուրախ էր լինում, եթե այն րոպեներին, երբ Ստելլան ու Ռիտան եռանդով աշխատում էին, որևէ հյուր էր գալիս տուն:

— Օ՜, օրիորդներ, դուք միշտ աշխատանքի մեջ եք,— ասում էր հյուրը, ինչպես այդ ընդունված է հասարակության մեջ, և տիկին Ռիզեմանը պատասխանում էր, ինչպես ընդունված է պատասխանել այդպիսի դեպքերում.

— Այո, իմ տանը ոչ ոքի չի թույլատրվում ծուլություն անել: Ով աշխատում է, նա մեղք չի գործում:

Բայց երբ աշխատող կանանց մոտով Անդրեյ Պետրովիչն էր անցնում, նա ոչ մի խոսք չէր ասում, և Ստելլան իր ներքին հոտառության շնորհիվ նրա դեմքից տեսնում էր, որ նա ամենափոքր համակրանք անգամ չի տածում իրենց աշխատանքին ու ջանասիրությանը, դեռ ավելին. հոգու խորքում հեգնաբար ժպտում է: Երբ Անդրեյ Պետրովիչը նայում էր այդ գործով կամ այլ աշխատանքով զբաղված կանանց, խեղճ ֆրոյլայն Ստելլան չէր կարողանում ազատվել այդ զգացմունքից:

Աղջիկը նույնպիսի տանջող զգացմունք էր ունենում, երբ Կուրբատովի ներկայությամբ պարոն կամ տիկին Ռիզեմանը և կամ Ռիտան որևէ բան էին ասում, իսկ Անդրեյ Պետրովիչն այդ ժամանակ լուռ էր մնում: Ստելլան պարզ զգում էր, որ այդ լռությունն էլ քննադատություն է և ամենևին ոչ խրախուսական: Որպես խելացի աղջիկ՝ Ստելլան հաճախ կռահում էր, թե Անդրեյ Պետրովիչին հատկապես ինչը դուր չի գալիս, ինչն է դատապարտում նա հոր, մոր կամ Ռիտայի ասածներից, և ասես ցանկանալով պաշտպանել ընտանիքի պատիվն ու արժանապատվությունը՝ ինքն էր դեմ դուրս գալիս խոսողին և վիճում էր նրանց հետ հաճախ շատ խիստ: Բայց լինում էր և այնպիսի բան, որ ինքն էլ համարում էր կանոնավոր, ինքն էլ համոզված էր լինում, որի դեմ վիճել չէր կարող, բայց և ռուս ուսանողի դեմքից պարզ տեսնում էր, որ նա այդ ամենը ժխտում է:

Ստելլա Ռիզեմանի մեջ ուսանողի նկատմամբ արթնացավ թշնամանքին մոտիկ մի զգացմունք: Մարդ այդպիսի թշնամանք զգում է նրա նկատմամբ, ով իրեն վախ է ներշնչում: Դա թույլի գազազումն էր ուժեղի դեմ: Դա այն մարդու չարությունն էր, որն այնքան ինքնասեր է, որ կամովին ուրիշի ազդեցությանը ենթարկվել չի ուզում, բայց և հանկարծ զգում է, որ ենթարկվել է նրան: Ստելլա Ռիզեմանին բարկացնում, ջղայնացնում, կատաղեցնում էր այն, որ Անդրեյ Պետրովիչն այդպես հաճախ ժխտում է այն, ինչին ուրիշները համոզված են, որ նա ամենասովորական երևույթների, ամենաանվիճելի և ինքնին հասկանալի բաների մասին տարբեր կարծիք ունի, քան ուրիշները: Եվ միևնույն ժամանակ աղջիկը չէր կարող նրան կշտամբել, թե նա դատապարտում է միայն դատապարտելու համար, թե ժխտում է սոսկ ժխտման համար, անողոքաբար քննադատում

է միշտ իրավացի մնալու ցանկության դրդմամբ: Որքան էլ ցանկանար, Ստելլայի հոգում այդպիսի կարծիք արմատավորվել չէր կարող. Չնայած իր թշնամական զգացմունքին, նա ստիպված էր շատ ավելի լավ բան մտածել այդ մարդու մասին: Եվ դա ամենից ավելի էր բարկացնում նրան:

Անդրեյ Պետրովիչի նկատմամբ վախի զգացմունքը Ստելլայի հոգում ծիլեր տվեց այն ժամանակ, երբ աղջիկն սկսեց նկատել, թե կարճ ժամանակամիջոցում Կուրբատովն ինչքան շատ բանի հասավ Էբերհարդի դաստիարակության գործում:

Ի՞նչ պատահեց այդ չարաճճի, խենթ ու խելառ, կամակոր, ծույլ ու փնթի դպրոցականին: Այժմ նա ավելի մեծ ուրախություն չուներ, քան լինել իր մշտական թշնամիներից մեկի, իր տանջիչի մոտ, նայել նրա երեսին, ուշադիր լսել նրա խոսքերը, հարցեր տալ նրան և անհամբեր սպասել պատասխանի: Էբերհարդ Ռիզեմանը, որ ռեալական ուսումնարանում ամենաթունդ կապը կտրածներից մեկն էր, համենայն դեպս այժմ զսպվել և ուղղվելու ճանապարհին էր բռնել: Եվ, վերջապես, Ստելլան իմացավ, որ տղան առաջադիմություն ունի նաև ուսման մեջ. այո՛, այո՛, որ նրա մեջ սեր է արթնացել դեպի ուսումը, որ հիմա նա սիրում է սովորել:

— Պարոն Կուրբատով,— հարցրեց մի անգամ աղջիկը,— այդ ինչպե՞ս հաջողվեց ձեզ:

— Ինքներդ դատեցեք, ֆրոյլայն Ռիզեման,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը,— ես հո հրաշք չեմ գործում:

— Դուք կարողացաք տղայի մեջ հետաքրքրություն հարուցել դեպի ուսում, բայց ինչպե՞ս:

— Շատ հասարակ: Նախ՝ ես Էբերհարդին չեմ ծանրաբեռնում պարապմունքներով, չեմ ստիպում նրան որոշակի ժամերի ծանր բեռ կրել, նրա համար շատ էլ նկատելի չեմ դարձնում իր ազատության սահմանափակումը: Երկրորդ՝ աշխատում եմ որքան կարելի է ավելի շատ գունազարդել որոշ ուսումնական առարկաների չորությունը, ջանում եմ գտնել և ընդգծել նրանց առավել հետաքրքիր կողմերը, զուգադրել դրանք կյանքի պահանջների հետ, աշխուժացնել գործնական օրինակներով և, եթե առարկան թույլ է տալիս, նույնիսկ այդ անում եմ կատակի ձևով: Ահա ամբողջը, և սա պարզից էլ պարզ է:

— Իսկ տղայի վստահությունն ու սերը դուք նրանով նվաճեցիք, որ ընկեր ու բարեկա՞մ դարձաք նրան:

— Այդ ինքնին հասկանալի է:

— Եվ դուք այդքան համբերությո՞ւն ունեք:

— Իհարկե: Չէ՞ որ սա ինձ հետաքրքրում է, և ես ձեզ մի անգամ արդեն ասել եմ, որ մանկավարժական աշխատանքը սիրում եմ:

Նրանք երկուսով նստած էին այն սենյակում, որը միաժամանակ ծառայում էր և՛ որպես գրադարան, և՛ որպես աղջիկների աշխատասենյակ: Լուսամուտների մոտ դրված էին բաց գույնի երկու գրասեղան՝ զարդարված նուրբ փորագրություններով և ծանրաբեռնված ամեն տեսակի գրենական պիտույքներով: Պատի մոտ տեղավորված էր մի մեծածավալ գրապահարան, որ լի էր փառակազմ գրքերով, իսկ բազմոցի առջև դրված խոշոր կլոր սեղանին, որ շրջապատված էր փափուկ աթոռակներով, փռված էին բազմաթիվ գերմաներեն թերթեր ու հանդեսներ:

Մինչ Ստելլա Ռիզեմանը խորհում էր Կուրբատովի տված պատասխանների մասին կամ գուցե պատրաստվում էր նոր հարցեր տալ նրան, Անդրեյ Պետրովիչը մոտեցավ պահարանին և գրքերի շարքերն աչքի անցկացնելով կարդաց նրանց ոսկետառ անունները կրունկներին: Նա առաջին անգամն էր լինում այդ սենյակում: Առաջ էլ դռան միջով ներս էր նայել, բայց տեսնելով, որ ֆրոյլայն Ստելլան ու Ռիտան նստած են գրասեղանների առաջ, մտածել էր, թե դա օրիորդների սենյակն է և այնտեղ չէր մտել: Բայց այսօր Ռիզեմանի ավագ դստեր հետ հարևան դահլիճում խոսակցության բռնվելով՝ պատահաբար Ստելլայի հետ միասին ներս էր մտել:

Շուտով Անդրեյ Պետրովիչը գրապահարանից շուռ եկավ և սկսեց նայել կլոր սեղանին թափված հանդեսները: Գրապահարանում և սեղանի վրա ժողովված էին քաղքենիական տների համար շատ սովորական միևնույն կարգի հոգևոր բարիքներ: Գրապահարանում, եթե չհաշվենք գերմանական մի քանի դասական հեղինակներին, որոնց շարքումն էին, հասկանալի է, Շիլլերը, Գյոթեն և Լեսինգը, տիրապետում էին այնպիսի հեղինակներ, ինչպես Մառլիտը, Վերները, Հայմբուրգը, Շուբինը, Պերֆալը, Օմպտեդան, պաստոր Ֆունկեն և այլք: Սեղանին քաղքենիական անդորրությամբ հանգստանում էին այսպես կոչված՝ ընտանեկան հանդեսներ, որոնք սնվում են նույն կարգի հեղինակների գրական ստեղծագործություններով: Այստեղ կային «Ցամաքի և ծովի վրա», «Ընտանեկան օջախ», «Տաղավար», «Արդի արվեստը» հանդեսները, բարոն Գրոտուսի «Մտքի և սրտի համար» ամսագիրը, «Դիտակալ»-ը և այլն, մոդաների մի քանի ալբոմ և տնային տնտեսությանը նվիրված ամսագրեր, տեղական գերմանական լրագիրը, ինչպես նաև «Դյունա-Ցայտունգը», «Սանկտ-Պետերբուրգեր Ցայտունգը», և կղերական մի փոքրիկ թերթ:

Ստելլա Ռիզեմանի հայացքն ուղեկցեց Անդրեյ Պետրովիչին, որը գրապահարանից ետ քաշվելով մոտեցավ սեղանին, ապա զննաբար սահեց նրա դեմքի, աչքերի, շուրթերի վրայով: Ֆրոյլայն Ռիզեմանը նորից զգաց, որ Կուրբատովը քննադատաբար է գնահատում տեսածը, և որ նրա կարծիքը ամենևին դրական չէ: Եվ այժմ, երբ ռուսը շուռ եկավ և ասես համր հարցով նայեց իր երեսին, ֆրոյլայն Ստելլան պարզ հասկացավ, թե Անդրեյ Պետրովիչն ինչ կարծիք է կազմել Ռիզեմանների ընտանեկան գրադարանի մասին:

— Կարդո՞ւմ եք դուք որևէ ուրիշ բան, բացի այստեղ եղածից,— հարցրեց Կուրբատովը:

— Ոչ,— դիտմամբ կարճ ու կտրուկ պատասխանեց Ստելլան: Նրա մեջ ցանկություն էր առաջացել իր մագիլները ցույց տալ այդ հավիտենական քննադատին:— Ձեր կարծիքով սա բավական չէ՞:

— Բավակա՞ն,— կրկնեց Անդրեյ Պետրովիչը:— Նայած ինչ պահանջներ ունի ընթերցողը:

— Իսկ դուք կարծում եք, որ այս գրքերն ու հանդեսները չե՞ն բավարարում իմ պահանջները:

— Այո, ես կուզենայի այդպես կարծել:

— Ինչո՞ւ:

— Որովհետև սա բավականաչափ բովանդակալից գրականություն չէ:

Ստելլայի դեմքով մի թեթև կարմիր սահեց:

— Իսկ եթե իմ կարծիքով սա բավականաչափ բովանդակալի՞ց է:

— Այդ ճիշտ չէ: Ես կարծում եմ՝ մի քիչ ճանաչում եմ ձեզ: Ասացեք ինձ, ֆրոյլայն Ռիզեման, այս գրքերը կարդալիս դուք երբեմն չե՞ք գտնում, որ սրանք ձանձրացրել են ձեզ, որ դուք կուզենայիք որևէ... որևէ ուրիշ բան:

Ստելլան իսկապես երբեմն ունենում էր այդպիսի զգացմունք, մանավանդ վերջին երկու-երեք տարում: Չէ՞ որ նա արդեն այնքան շատ էր կարդացել այդ վեպերն ու նովելները, որոնք բոլորն էլ միատեսակ սկսվում են, միատեսակ վերջանում, որոնք միատեսակ «հափշտակում» են ընթերցողին, իսկ հետո էլ միատեսակ մոռացվում: Բայց որովհետև նա վիճել էր ուզում, որովհետև նորից նրան տիրել էր հակաճառելու ոգին, որովհետև նրա մեջ ցանկություն էր առաջացել գրգռել այդ անուղղելի ամենագետին, ստիպել նրան խոսել, քննադատել խոսքով, դրա համար էլ նա ճիշտ չասաց և լուրջ պատասխանեց.

— Ո՛չ, պարոն Կուրբատով, ես այս ամենը կարդում եմ մեծ հետաքրքրությամբ: Իմ կարծիքով սրանք հիանալի են գրված:

Անդրեյ Պետրովիչը մի քանի քայլ առաջ գնաց, ասես ուզում էր ավելի մոտիկից նայել աղջկա դեմքին:

— Դուք շա՞տ եք կարդում, ֆրոյլայն Ռիզեման:

— Բավական շատ:

— Եվ շարունակ նո՞ւյնը:

— Ես արդեն ձեզ ասացի:

— Եվ դուք երբեմն-երբեմն չե՞ք ունենում դատարկության զգացմունք, երբեմն ինչ-որ անախորժ համի զգացողություն չե՞ք ունենում: Ցանկություն չե՞ք ունենում բազմազանության համար փորձել ինչ-որ նոր բան, մի նոր բան, որ տարբերվեր այս բոլորից:

— Ոչ:

— Ֆրոյլայն Ռիզեման, դժվարանում եմ հավատալ: Եթե նույնիսկ ձեզ համար պարզ չեն այն պատճառները, որոնց ուժով ձեզ հետաքրքրում է այսպիսի գրականությունը,— և այդ ինձ չի զարմացնում,— այնուամենայնիվ դուք պետք է բնազդաբար, առանց հասկանալու անբավականություն զգաք և ինչ-որ ավելի լավի ծարավ:

— Ինչո՞ւ դուք այդպես եք կարծում:

— Որովհետև դուք աշխույժ և սուր միտք ունեք: Այդ միտքը երբեմն ձեզ հնարավորություն է տալիս սովորականի սահմաններից դուրս տեսնել, իսկ երբեմն էլ՝ նրանից վեր բարձրանալ: Ես այս շատ անգամ եմ նկատել: Համենայն դեպս ձեզ ավելի մեծ ասպարեզ է հարկավոր, քան ձեր քրոջը:

Ստելլայի աչքերում ինչ-որ բան շողաց: Նա զգաց, որ նորից մի ջերմ ալիք հոսեց դեպի իր այտերը և իր շառագունելը թաքցնելու համար սկսեց ծիծաղել:

— Շնորհակալ եմ այդ շոյող կարծիքի համար,— ասաց նա շինծու կատակի տոնով:— Բայց ես, ճիշտն ասած, մտքովս էլ չի անցել, թե մտավոր տեսակետից սովորական մակարդակից բարձր եմ կանգնած: Եվ դա, իհարկե, ճիշտ չէ, որովհետև, ինչպես տեսնում եք, ես լիովին գոհանում եմ նույն հոգևոր սնունդով, ինչ իմ քույրը, իմ ծնողները և այն ամբողջ հասարակությունը, որի մեջ ապրում ենք մենք: Այսպիսի գրքեր ու հանդեսներ դուք կարող եք գտնել ամեն մի ինտելիգենտ ընտանիքում, սրանք գրվում են իսկ և իսկ մեզ պես ընթերցողների համար: Ինչպես տեսնում եք, ես նույն պահանջներն ու ճաշակն ունեմ, ինչ մյուսները, հետևապես այնպիսին եմ, ինչպես բոլորը:

— Ձեզ մոտ ո՞ւմ ընտրությամբ է գնվում և դուրս գրվում գրականությունը,— հարցրեց Անդրեյ Պետրովիչը աղջկան նայելով այնպիսի մի հայացքով, ասես հոգու խորքում պայքարում էր զարմանքի ու խորթության զգացմունքի դեմ, ասես ինչ-որ բան էր սասանվել նրա դատողությունների մեջ, որոնք նա համարում էր հաստատուն ու որոշակի:

— Մեծ մասամբ մորս ընտրությամբ,— պատասխանեց Ֆրոյլայն Ռիզեմանը:

— Եվ մի՞շտ այդպես է եղել:

— Այո:

Ձեր մայրը, իհարկե, ամենից առաջ գնահատում է կրոնաբարոյական բովանդակությամբ գրականությունը և հետևում է, որ ձեր տուն չընկնի այնպիսի մի բան, որը կհակասեր ընդհանուրի կողմից ընդունված բարոյականությանը:

— Ինքնին հասկանալի է:

— Ֆրոյլայն Ռիզեման, իսկ դուք որևէ բան կարդացե՞լ եք *գաղտնարար*, ակնհայտնի արգելված որևէ բան:

Ստելլան հայացքը ցած գցեց, ապա նորից արագ նայեց խոսակցին: Նա շփոթվել էր, որովհետև չհասկացավ, թե ինչ նպատակով տրվեց այդ հարցը:

— Ինչո՞ւ եք դուք հարցնում այդ:

— Ինձ համար հետաքրքիր է իմանալ: Գուցե դուք չե՞ք ուզում պատասխանել իմ հարցին:

— Ոչ, ինչո՞ւ չէ: Այո, ես մի քանի գիրք կարդացել եմ առանց մորս գիտության:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք: Նշանակում է դուք, այնուամենայնիվ, որոնել եք ինչ-որ մի բան, որ չկա ձեր գրադարանում: Իսկ դուք ցանկանում էիք թաքցնել ձեր այդ ձգտումը... ինձ թվում է, ֆրոյլայն Ռիզեման, որ դուք դիտմամբ ճշմարտությունը չասացիք: Դուք այն չեք ասում, ինչ մտածում եք:

Գուցե և Ստելլան շարունակեր պաշտպանել իր կարծեցյալ տեսակետը, եթե Անդրեյ Պետրովիչը չնայեր նրան այնպես սևեռուն, համարյա կշտամբանքով: Կուրբատովին կարծես վշտացնում էր, որ իր հակառակորդը, որքան նա հասկացավ, կռվի էր բռնվել միայն առերևույթ: Եվ հանկարծ աղջկա հոգու մեջ ծնունդ առավ մի ինչ-որ պոռթկում, որը նրան դրդեց թողնել այդ խաղը, դեն նետել դիմակը, անկեղծ լինել այդ մարդու հետ, որն իր նկատմամբ այդպիսի անկեղծ հետաքրքրություն է ցուցաբերել:

— Պարոն Կուրբատով, դուք մասամբ իրավացի եք,— ասաց ֆրոյլայն Ստելլան կարճ լռությունից հետո նստելով աթոռակին: Նա հաղթահարել էր իր րոպեական համարյա ամոթանքի շփոթությունը:— Ես պետք է խոստովանեմ, որ այս գրականությունը երբեմն ինձ թվում է տաղտկալի: Իմ կարծիքով այս գրքերում ու հանդեսներում հաճախ ճշմարտություն չեն ասում, կարծես դիտավորյալ ճշմարտությունը չեն ասում:

Կուրբատովն արագ նստեց աղջկա դիմաց, երկրորդ երկնագույն աթոռակին: Նրա դեմքը պայծառացավ և այժմ արտահայտում էր լարված ուշադրություն:

— Ձեզ չի՞ թվում, ֆրոյլայն Ռիզեման, որ այս գրողների ստեղծած ամեն ինչը գրված է պատվերով: Չե՞ք մտաբերում այն նկարիչներին, որոնք ձգտում են նկարի մեջ ամեն մի դեմք գեղեցիկ պատկերել, իմանալով, որ այդ դուր կգա պատվիրատուին, որ պատվիրատուների մեծ մասն այդ է ուզում:

— Այո,— պատասխանեց Ստելլան:— Դա նույնն է, ինչ ես միանգամայն գիտակցաբար կոչեցի դիտավորյալ ճշմարտությունը չասել: Ես տեսնում եմ, որ այստեղ ամեն ինչ գունազարդված է, անպայման գունազարդված, գունազարդված է դիտավորյալ, նախամտածված ձևով, միանգամայն ակներև մտադրությամբ ու ծրագրով: Տեսնում եմ, որ ճշմարտությունը դիտմամբ ծածկում են ինչ-որ վարագույրով... և դա վանում է:

— Իսկ ինչի՞ մեջ եք նկատում դուք այդ սուտը, իրականության այդ գունազարդումը,— հարցրեց Անդրեյ Պետրովիչը, որի այտերին կարմիր բծեր երևացին:

— Ինչի մեջ եմ նկատո՞ւմ: Չէ՞ որ ես տեսնում եմ մարդկանց և կյանքը: Նրանք ամենևին այդպիսին չեն, ինչպես նկարագրում են նրանց մեր գրքերում, մեծ մասամբ՝ կեղծ-ռեալիստական գրքերում: Բայց ես պետք է խոստովանեմ ձեզ, որ, այսուամենայնիվ, այդ գրքերը կարդացել եմ մեծ հափշտակությամբ, իսկ մի քանիսը հիմա էլ կարդում եմ:

— Չնայած նրան, որ դուք նրանց մեջ տեսնում եք ճշմարտության աղավաղո՞ւմը, ամեն տեսակ գունագեղո՞ւմը:

— Այո: Դուք չէ՞ք հավատում:

— Հավատում եմ: Բայց ինչո՞վ է բացատրվում դա:

— Այդ ես չգիտեմ:

— Գուցե նրանով, որ դուք ուրիշ գրքեր չունե՞ք:

— Թերևս:

— Թույլ տվեք մի ուրիշ պատճառ էլ նշել,— ասաց Անդրեյ Պետրովիչը աթոռակի հետ միասին մոտենալով աղջկան:— Դրա պատճառը ահա թե ինչն է. ձեզ, ֆրոյլայն, նույնպես դուր են գալիս գունագեղած նկարները: Միայն թե նրանք պետք է նկարված լինեն ավելի հմուտ ձեռքով: Դուք սիրով եք նայում «գեղեցիկ» նկարին: Հիանալով նրանով՝ դուք մոռանում եք, որ այդտեղ ամեն ինչ

գունագեղված է... մոռանում եք, որ այնտեղ ճշմարտությունը ծածկված է կեղծ դեկորով, որ այնտեղ դիտմամբ ճշմարտությունը չի ասված: Քի՞ չ մարդիկ կան, որոնց դուր են գալիս հրաշքներով լի հեքիաթները, բայց չէ՞ որ հեքիաթներում ամեն ինչ մտացածին է: Եվ գիտե՞ք Ֆրոյլայն Ռիզեման, թե *ինչու* երբեմն ձեզ դուր է գալիս գունազարդված նկարը:

— Ինչո՞ւ:

— Որովհետև դա ձեր *սեփական* նկարն է, ձեր *սեփական* գունազարդված նկարը... Եվ այդ նկարը շոյում է հենց ձեզ:

— Ի՞նչ եք ուզում ասել դրանով:

— Ես ահա թե ինչ եմ ուզում ասել: Դուք ասացիք, որ այս գրքերն ու հանդեսները կարդում է այն ամբողջ հասարակությունը, որի մեջ ապրում եք դուք ու ձեր հարազատները, և որ այդ գրքերը հենց այդպիսի հասարակության համար են գրված: Այդ ճշմարիտ է: Բայց մենք գիտենք, որ եթե մարդ պատվիրում է իր դիմանկարը նկարել, նա գոհունակությամբ իր նկարն ավելի գեղեցիկ կտեսներ, քան իրականում ինքը կա: Նկարիչն էլ այդպիսի նկար է պատրաստում: Շահը նրան ստիպում է կատարել պատվիրատուի ցանկությունը: Գրողն էլ նկարիչ է, որ տալիս է հասարակության պատկերը: Եթե այդ նկարիչը սոսկ պատվեր է կատարում, եթե նրան իր շահն է մտահոգում, եթե դրա հետ միասին նրան սոցիալական կապերը կապում են պատվիրատուի հետ, նա հասարակությանը, այլ խոսքով ասած՝ իր պատվիրատուին նկարում է հնարավորին չափ ավելի հրապուրիչ տեսքով: Պատկերը, իհարկե, դուր է գալիս պատվիրատուին, այսինքն՝ հասարակությանը, որովհետև այդ պատկերը նրան շողոքորթում է: Եվ այնքան ավելի է դուր գալիս, որքան ավելի հմտորեն է գունազարդված: Իսկ ինչ դուր է գալիս ամբողջ հասարակությանը, նույնը դուր է գալիս և այդ հասարակության յուրաքանչյուր առանձին անդամին, որը այս կամ այն չափով իրեն հարազատ է զգում այդ մթնոլորտում, որը ընթանում է նրա հետ ձեռք ձեռքի տված, որն այդ հասարակության հետ հայացքների, շահերի և զգացմունքների միասնություն ունի... Ֆրոյլայն Ռիզեման, այս կամ այն հմտորեն բայց կեղծ գրված գիրքը ձեզ դուր է գալիս նրա համար, որ դուրեկան է նկարագրում ձեր հասարակությունը և հենց ձեզ:

Ստելլան Անդրեյ Պետրովիչին նայեց լայն բացված աչքերի մտախոհ հայացքով: Նրա խոսքի մեջ հանկարծակի երևան եկած աշխուժությունը ասես զարմացրել էր աղջկան:

— Գուցե դուք իմ նկատմամբ անարդա՞ր եք, պարոն Կուրբատով,— խոսեց նա:— Չէ՞, ես ասացի, որ իրականության գունազարդումը, ճշմարտության դիտավորյալ աղավաղումը ես համարում եմ գրականության թերությունը և դատապարտում եմ որպես նրա արատը: Իսկ այստեղից էլ պարզ է, որ շողոքորթությունն ու ամեն տեսակ գունազարդումն իմ սրտովը չէ, որ նրանք ինձ համար զզվելի են, որ ես դրանք տանել չեմ կարող:

— Դուք ձեր զարգացած ճաշակով տանել չեք կարող միայն *ապաշնորհ* շողոքորթությունը, խիստ վառ գույները, կոպիտ, արհեստավորական գրականությունը: Բայց նույն նպատակը հետապնդող նուրբ, գեղարվեստական աշխատանքը դուք չեք ժխտում, հակառակ դեպքում նման գրքեր կարդալը ձեզ բավականություն չէր պատճառի:

— Դուք, նշանակում է, գտնում եք, որ ես տանել չէի կարող բացասական քննադատական դատողություններն իմ մասին և ինձ շրջապատող հասարակության մասին, որ շողոքորթությունը, գունազարդումը, սուտը այնուամենայնիվ իմ հոգու խորքում ինձ ավելի է դուր գալիս, քան բնականությո՞ւնը, ճշմարտացիությո՞ւնը:

— Ոչ, Ֆրոյլայն Ռիզեման, ես այդպես չեմ կարծում,— վստահ ու հաստատ առարկեց Անդրեյ Պետրովիչը:— Ճշմարտությունը, բացասական քննադատությունը ձեզ կնեղացներ, սկզբում ձեզ կբարկացներ, կվիրավորեր, բայց դուք կկարողանայիք դիմանալ նրան, և ով գիտե, գուցե և շուտով այն ձեր սրտովը կլիներ, և վերջ ի վերջո դուք էլ կսովորեիք շատ բան քննադատել: Ինձ թվում է նույնիսկ դրա հույսը կա:

— Բայց ինչպե՞ս կարող էի ես այդպես վերածնվել, դառնալ ուրիշ մարդ,— հարցրեց Ստելլան մի ժպիտով, որի մեջ, սակայն, հեգնանք չկար:

— Դրա մասին ինքներդ մտածեցեք,— պատասխանեց Կուրբատովը նույնպես ժպտալով:

Ստելլան մի քանի րոպե լուռ լուսամուտից դուրս էր նայում այգուն, որտեղ ուժեղ քամին ծառերի գագաթներն էր ճոճում, ապա դառնալով Կուրբատովին՝ արագ հարցրեց.

— Անդրեյ Պետրովիչ, իսկ դուք ի՞նչ գրքեր եք կարդում:

— Եթե ձեզ համար դժվար չէ, գնանք իմ սենյակը, և ինքներդ կտեսնեք,— պատասխանեց ուսանողը:

— Դուք ինձ որևէ բան կտա՞ք կարդալու:

— Հաճույքով, ֆրոյլայն Ռիզեման: Բայց ձեր մայրը...

— Մի մոռացեք, որ ես հիմա արդեն չափահաս եմ,— ժպտաց Ստելլան:— Այն օրը, երբ դուք եկաք, ես քսանմեկերորդ անգամ իմ ծննդյան օրն էի տոնում: Բացի դրանից, ես միշտ էլ անհնազանդ երեխա եմ եղել. մայրս ինձ համարում է անուղղելի և հաճախ թույլ է տալիս անել ինչ ուզենամ... Գնանք, Անդրեյ Պետրովիչ, ես կուզենայի հենց հիմա տեսնել ձեր գրքերը: Ի՜նչ երևելի միտք՝ դառնալ նույնպիսի անողոք քննադատ, ինչպիսին դուք եք:

Եվ ֆրոյլայն Ստելլան աշխուժորեն վեր թռավ տեղից:

— Ինչո՞ւ դուք ինձ անողոք եք համարում, — հարցրեց Կուրբատովը նույնպես վեր կենալով:

— Իսկ մի՞ թե դուք անողոք չեք: Կա՞ մեր տանը մի բան, որ դուք չքննադատեիք ու չդատապարտեիք: Մի՞թե կարծում եք, թե ես այդ չեմ նկատում: Իհարկե, դուք այդ անում եք լուռ, հոգու խորքում, այսօր ես առաջին անգամ լսեցի, թե ինչպես եք քննադատում խոսքով: Բայց ես ամեն ինչ տեսնում եմ, ամեն ինչ գիտեմ և վաղուց արդեն որոշել էի մի կերպ ձեր հախիցը գալ, մարտի կոչել ձեզ, համարձակորեն հանդես գալ ի պաշտպանություն մեր տան պատվի, մեր ընտանիքի և հասարակության պատվի...

— Դե ուրեմն հանդես եկեք, ֆրոյլայն Ռիզեման,— ուրախ գոչեց Անդրեյ Պետրովիչը:— Ինձ ոչ մի բան այնպես չի հետաքրքրում, ինչպես բանավոր ճակատամարտը գաղափարական հարցերի վերաբերյալ:

Նրանք դուրս եկան գրադարանից և արագ բարձրացան սանդուղքով, Կուրբատովն առջևից, Ստելլան՝ նրա ետևից: Երբ Անդրեյ Պետրովիչը հասնելով երկրորդ հարկ, որի միջանցքում ոչ ոք չկար, իր սենյակի դուռը բացեց, ֆրոյլայն Ռիզեմանը հանկարծ կանգ առավ: Նրա հայացքը սահեց շուրջը, ասես որոնում էր ինչ-որ մեկին:

— Խնդրեմ,— ասաց ուսանողը սենյակ մտնելով ու ետ նայելով:

— Իսկ... մի՞թե... Էբերհարդը վերևում չէ,— հարցրեց Ստելլան, և նրա դեմքին հանկարծակի մի շփոթմունք արտացոլվեց:

— Էբերհա՞րդը: Նա ձեզ հարկավո՞ր է:

— Ոչ... ես հենց այնպես...

— Ֆրոյլայն Ռիզեման, գուցե թե դուք մենակ...

Անդրեյ Պետրովիչի ավարտված խոսքի և նրա ձգված դեմքի արտահայտության մեջ կար մի այնպիսի բան, որից Ստելլայի այտերը հանկարծ շիկնեցին: Նա արագ մտավ սենյակ: Կուրբատովը դուռը ծածկեց:

Ստելլայի հետ կողք կողքի իր երկարավուն, ընդարձակ սենյակում քայլելիս Անդրեյ Պետրովիչը շեղակի նայեց աղջկա միամիտ պրոֆիլին: Ստելլան նրա հայացքը չնկատեց, բայց զգաց, որ նա

արտահայտում է զարմանք կամ որևէ նման բան: Այդ մարդուն կարծես անհասկանալի էր թվում, որ մի ջահել աղջիկ քաշվում է մենակ մտնել մի տղամարդու սենյակ, որ նրա կարծիքով դա անվայել բան է...

Ստելլան սպասում էր, թե Կուրբատովը որևէ դիտողություն չի՞ անի իր որպեսական երկչոտությանը, բայց երբ նա լուռ մնաց, աղջիկը որոշեց հաղթահարել իր շփոթմունքը կամ որևէ կերպ թաքցնել այն Անդրեյ Պետրովիչից: Թե ինչու այդպես եղավ, հայտնի չէ, բայց Ստելլայի մեջ հանկարծ երևան եկավ մի զգացմունք, իբր ինքը իր շփոթմունքով վիրավորել է մեկին, որ հիմա ինքը պիտի ամաչի իր ամոթից, որ ինքը նորից Անդրեյ Պետրովիչին քննադատելու և կշտամբելու առիթ է տվել: Ստելլային թվում էր, որ ինքն ուղղակի վիրավորել է Անդրեյ Պետրովիչին:

Ձանալով ազատվել այդ անախորժ զգացմունքից՝ նա Կուրբատովի առաջն ընկնելով արագ մոտեցավ փայլեցված գրադարակին, որի վրա ուսանողը խնամքով ու կանոնավոր շարել էր իր ունեցած գրքերը:

— Հենց միայն գիտություն ու քաղաքականությո՛ւն,— գոչեց Ստելլա Ռիզեմանը՝ իրար ետևից մի քանի գիրք վերցնելով դարակից, անվանաթերթերը նայելով և հուսախաբ տեսքով գրքերը ետ դնելով իրենց տեղը:

— Այդտեղ գեղարվեստական գրականություն էլ կա,— ասաց Անդրեյ Պետրովիչը:— Բայց դուք ինչո՞ւ դեմ եք գիտությանն ու քաղաքականությանը, ֆրոյլայն Ռիզեման:

— Դե, դա հո մեզ համար չէ, պարոն Կուրբատով:

— Ձեզ համար չէ՞:

— Այո, կանանց համար:

— Իսկ ինչո՞ւ կանանց համար չէ:

Ստելլան հարցական նայեց Կուրբատովին, և հանկարծ նրա աչքերը փայլեցին. նա հասկացավ երիտասարդի միտքը:

— Ես, իհարկե, գիտեմ, որ կան կանայք, որոնք զբաղվում են դրանով,— ասաց նա:— Ես լսել եմ կին գիտնականների և կին քաղաքական գործիչների մասին, ես կարդացել եմ այսպես կոչված՝ կանանց հարցի և կանանց շարժման մասին :Բայց, Անդրեյ Պետրովիչ, այդ բոլոր բաներն ի՞նչ կապ ունեն ինձ հետ: Իմ ինչի՞ն են պետք դրանք:

— Այդ ինչո՞ւ հենց ձեզ հարկավոր չեն դրանք:

— Դուք հո գիտեք, որ ես գործարանատեր Ռիզեմանի դուստրն եմ և շուտով ամուսնանալու եմ: Վաճառական Գեբլերի կնոջ ինչի՞ն են պետք գիտությունն ու քաղաքականությունը, նա ո՞ւր պիտի տանի դրանք: Իմ *«հարցերը»* այնքան էլ բարդ չեն, նրանք պտույտ են գալիս ընտանեկան գործերի շուրջը, իսկ իմ ամբողջ *«շարժումը»* սահմանափակված է հյուրասենյակով, զարդասենյակով, խոհանոցով և ... — Ստելլան հայացքը ցած գցեց.— հետո գուցե նաև մի ուրիշ սենյակով...

— Բայց դուք գոնե պետք է հետաքրքրվեք այդ հարցերով, ֆրոյլայն Ռիզեման:

— Ինչո՞ւ: Հենց թեկուզ նրա համար, որ դրանք կանանց են վերաբերում:

Ստելլան մտքի մեջ ընկած անփութորեն թերթում էր մի ռուսերեն գիրք:

— Գուցե և կհետաքրքրեն ինձ, համենայն դեպս կսկսեին հետաքրքրել, բայց ես դրանցով զբաղվելու հնարավորություն չունեմ, ես հիմա էլ դրա համար ժամանակ չունեմ, հետագայում էլ չեմ ունենա:

— Հարկավոր է, որ դուք դրա համար ժամանակ գտնեք, ֆրոյլայն Ռիզեման: Այդ անհրաժեշտ է, եթե միայն...

— Եթե ի՞նչ:

— Եթե դուք ցանկանում եք *քննադատ* դառնալ, այն էլ՝ անողոք քննադատ,— ժպտաց Անդրեյ Պետրովիչը:—Թե՞ կարծում եք, որ քննադատը կարող է յոլա գնալ առանց գիտության, առանց կյանքի երևույթներն ու հասարակական պայմանները տեսականորեն վերլուծելու:

— Բայց չէ՞ որ ես այդ ավելի շուտ կատակի համար ասացի, պարոն Կուրբատով: Եվ մենք, երբ խոսում էինք այնտեղ, ցածում, նկատի ունեինք միայն գեղարվեստական գրականությունը: Դուք ուզում էիք ինձ կարդալու տալ այնպիսի վեպեր, որոնց մեջ կյանքն ու մարդիկ շատ ավելի ճիշտ, ճշմարտանման ու անաչառ են նկարագրվում, քան այն գրքերում, որ ես կարդացել եմ մինչև այժմ:

— Դա կատա՞կ էր, ֆրոյլայն Ռիզեման: Դուք միայն կատա՞կ էիք անում: Նշանակում է դուք չե՞ք ցանկանում քննադատել սովորել, չե՞ք ցանկանում աշխարհին ու մարդկանց նայել ավելի լրջմիտ հայացքով, ավելի սուր ու խորաթափանց հայացքով... Բայց այդ դեպքում ձեզ ավելի ճշմարտացի գեղարվեստական գրականություն ևս հարկավոր չէ: Ձեր ինչի՞ն է պետք: Ինչո՞ւ անել առաջին քայլը, իմանալով, որ ավելի առաջ չես գնալու: Նշանակում է դուք կիսատ-պռատ միջոցների կողմնակից եք, ֆրոյլայն Ռիզեման:

— Ես արդեն ձեզ ասացի, որ առաջ գնալու, մինչև վերջ գնալու հնարավորություն չունեմ, և դա ինձ հարկավոր էլ չէ: Գրականությունը ես կարդում եմ զվարճության համար: Իսկ ավելի հեռուն գնալ և ավելի խորանալ ես չեմ կարող և չեմ ուզում:

— Որովհետև դրա համար ժամանակ չունե՞ք:

— Այո, որովհետև ժամանակ չունեմ:

— Բայց դուք ասացիք, որ շատ հարցեր, հենց նրանք, որ ավելի հեռու և խոր են, կարող էին ձեզ հետաքրքրել:

— Այո, եթե ազատ ժամանակ ունենայի:

— Դե, ֆրոյլայն Ռիզեման, ահա և մենք մոտեցանք ձեր այդ ամենալուրջ պրոբլեմին՝ ժամանակի սղությանը: Իսկ ես պնդում եմ, որ դուք բավական ժամանակ ունեք, որ նույնիսկ շատ ժամանակ ունեք, այնքան շատ, որ նույնիսկ կարողանում եք պարապ-սարապ անցկացնել: Առևտրական Գեբլերի կինը նույնպես շատ ազատ ժամանակ կունենա, ավելի շատ, քան հազարավոր ուրիշ կանայք, որոնք, այնուամենայնիվ, հնարավորություն են գտնում մասնակցելու հասարակական կյանքին... Ճիշտ որ խոսենք, ինչի՞ վրա է ծախսվում ձեր ժամանակը, ֆրոյլայն Ռիզեման: Թույլ տվեք ես անկեղծորեն ասեմ ձեզ: Ձեր ժամանակը ծախսվում է զուգվել-զարդարվելու վրա, դերձակուհիների մոտ գնալու, հյուրեր ընդունելու և հյուր գնալու վրա, ձիով, հեծանիվով շրջելու կամ ոտքով զբոսնելու և զրուցելու վրա...

— Իսկ իմ ամենօրյա աշխատա՞նքը, պարոն Կուրբատով,— հոնքերը վեր ձգելով գոչեց ֆրոյլայն Ռիզեմանը:

— Ձեր աշխատա՞նքը: Դուք խոսում եք ձեռագործի՞ մասին, որով ամեն օր զբաղվում եք ձեր քրոջ ու մոր հետ միասին: Գիտե՞ք ինչ, ֆրոյլայն Ռիզեման, այդ աշխատանքով դուք հանգիստ խղճով կարող էիք ամենևին չզբաղվել...

— Ինչպե՞ս:

— Դա աշխատանք չէ, այլ՝ սպորտ... Նույնիսկ սպորտ էլ չէ, այլ զվարճալիք, և նույնիսկ զվարճալիք էլ չէ, այլ — ներեցեք ինձ — ժամանակի դատարկ վատնում: Ես ամենևին դեմ չեմ սպորտին: Ես զվարճությանն էլ դեմ չեմ: Ուզում եմ միայն, որ սպորտի ու զվարճության մեջ էլ մի որևէ իմաստ, որևէ բավականություն լինի, գեթ որևէ նպատակ...

— Իսկ մեր ձեռագործում և մյուս աշխատանքներում այդպիսի բան չկա՞:

— Ո՛չ: Վաղուց արդեն չկա:

— Ի՞նչ է նշանակում՝ վաղուց արդեն չկա:

— Ձեր աշխատանքն իմաստ ու նպատակ է ունեցել այն ժամանակ, երբ դեռ ձեզ հարկավոր են եղել ձեր պատրաստած իրերը, թեև նրանց մեջ շատ կան ընդհանրապես միանգամայն անօգուտ բաներ: Բայց հիմա, երբ ձեր տունը լիովին զարդարված է նրանցով, ուղղակի չափից ավելի է զարդարված, ձեր աշխատանքն արդեն ոչ իմաստ ունի, ոչ նպատակ: Հիմա այն պետք է փոխարինվի որևէ ուրիշ բանով, որը գոնե մի որևէ օգուտ տա: Ասենք, օրինակ, այդ աշխատանքը կատարեիք ո՛չ միայն ձեզ համար:

— Բայց մենք հենց այդ ամենը միայն մեզ համար չենք անում,— առարկեց ֆրոյլայն Ստելլան, և բորբոքումից նրա նուրբ այտերին կարմիր գծեր երևացին:— Մեր պատրաստած իրերի մեծ մասը մենք տրամադրում ենք բարեգործական նպատակների. մեր պատրաստած իրերը տարեկան մի քանի անգամ բարեգործական շուկաներում վաճառվում են աղքատների օգտին: Դրա համար էլ, ես կարծում եմ, մեր աշխատանքը և՛ իմաստ ունի, և՛ նպատակ:

— Օ՜հ, այդ բարեգործական շուկանե՛րը,— բացականչեց Անդրեյ Պետրովիչը, և նրա այդ գործնական, զուսպ տոնի մեջ առաջին անգամ հեգնանք ու արհամարհանք հնչեց:— Երբ մարդիկ անելիք չունեն կամ երբ ուզում են առանց մեծ ծախսերի բարեգործի հռչակ ստանալ, ինչե՞ր ասես, չեն հնարում իրենց զվարճության համար:

— Զվարճության համա՞ր:

— Հապա էլ ինչի՞ համար, ֆրոյլայն Ռիզեման: Մի՞թե դա պարզ չէ ձեզ համար: Ամեն մի այդպիսի բարեգործական շուկա ոչ այլ ինչ է, եթե ոչ ուրախ տոնակատարություն՝ փոքր-ինչ ծածկված բարեգործության ու մարդասիրության քողով, իրենց և ուրիշներին խաբելու համար... Շատ ավելի պարզ, խելացի ու արդարացի չէ՞ր լինի ուղղակի դրամական օգնություն ցույց տալ չքավորներին: Ինչի համար շեղակի ճանապարհներ որոնել գործարանատիրոջ, վաճառականի, ձեր ձեռքերի միջոցով և, վերջապես բարեգործական շուկայի միջոցով:

— Դուք իրավացի եք, Անդրեյ Պետրովիչ,— արագ պատասխանեց Ստելլան: Նրա աչքերում բռնկեց այն աշխույժ կայծը, որ երևում է իր սեփական կարծիքը ուրիշի շուրթերից լսող մարդու աչքերում: Երբեմն ես մտածել եմ այդ շուկաների մասին և մոտավորապես նույն եզրակացությանն եմ եկել: Բայց դուք կցանկանայիք, որ մենք մեր տնային ձեռագործն անեինք ոչ միայն մեզ, այլ և ուրիշների համար, իսկ հիմա, երբ նրանք մեզ հարկավոր չեն, միայն ուրիշների համար: Ձեր կարծիքով ինչպե՞ս կարելի է անել այդ: Ո՞ւմ համար պիտի աշխատենք մենք:

— Նրանց համար, ում ձեր աշխատանքն օգուտ կբերեր: Եվ պետք է պատրաստել այնպիսի բաներ, որոնք իսկապես անհրաժեշտ են:

— Պարզաբանեցեք ձեր միտքը, պարոն Կուրբատով:

— Ֆրոյլայն Ռիզեման, դուք աշխատում եք կամովին, զվարճության համար, դուք շահագրգռված չեք որևէ վաստակ ունենալու, ձեզ այն հարկավոր չէ: Դուք աշխատում եք, ինչպես հիմա ասացիք և ինչպես ես էլ կարծում էի, մասամբ բարեգործական նպատակով: Դուք ցանկանում եք որևէ բան զոհաբերել, ընծայել, որևէ բաժին հանել ուրիշներին ձեր ունեցածից: Հասկանալի է՝ նրանց, ովքեր կարիքի մեջ են: Ընծայեցեք ու զոհաբերեցեք, միայն թե դա պիտի արվի խելամիտ ձևով, գործնական նպատակահարմար: Ձեր պատրաստած իրերն ընծայեցեք չքավորներին անմիջականորեն և պատրաստեցեք միայն այնպիսի բաներ, որոնք չքավորներին կարող են պետք գալ: Իսկ այն իրերը, որ դուք ուղարկում եք բարեգործական շուկաները, չքավորներին պետք չեն:

Ստելլան նստեց Կուրբատովի սեղանի մոտ և մտքի մեջ ընկած՝ իր խարտյաշ գլուխը հենեց ձեռքին:

— Բայց շուկաներն արդեն սովորություն են դարձել, և մենք մենակ ոչինչ չենք կարող փոխել,— մռայլ ասաց նա:— Բացի այդ, ձեռք չեն քաշում մեզանից, նվերներ են պահանջում... դուք հո գիտեք, թե ինչպես է լինում նման դեպքերում:

— Գիտեմ, բայց այստեղ էլ դուք կարող էիք ավելի ճիշտ ուղի գտնել,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը:— Այդ շուկաների համար իրեր պատվիրեցեք նրանց, ովքեր աշխատանք չունեն և ովքեր աշխատանքով են վաստակում իրենց մի կտոր հացը: Այդպիսով դուք բարի գործ արած կլինեք,— իսկ դուք չէ՞ որ բարի գործ անել եք ուզում,— և դրա հետ միասին դուք ազատ ժամանակ կունենաք, որ հիմա որպես թե չունեք: Ձեզ ազատ ժամանակ կունենաք ավելի հետաքրքիր զբաղմունքների համար, ֆրոյլայն Ռիզեման: Բայց գուցե դուք այդ ձեռագործն ու ասեղնագործը բավական հետաքրքիր զբաղմո՞ւնք եք համարում:

Ստելլան եռանդով գլուխն օրորեց ու ծիծաղեց:

— Ո՛չ, պարոն Կուրբատով: Ես անկեղծ կլինեմ և խոստովանում եմ, որ այդ աշխատանքն ինձ զզվեցրել է և երբեմն ես ուղղակի նզովում եմ այն: Մեր բոլոր ծանոթ տիկինների ու օրիորդների մեջ ես ամենածույլ ու անփույթ ձեռագործ անողն եմ, իհարկե, ի մեծ վիշտ իմ մոր: Ամեն օր ես գաղտնաբար նորանոր ծրագրեր եմ հորինում, թե ինչպես շուտ պրծնեմ աշխատանքը կամ ընդհանրապես ազատվեմ նրանից: Դրա համար է, որ այնքան հաճախ ցավում է իմ գլուխը կամ որևէ ամենապիտանի մատը... Այ, տեսեք:

Եվ ֆրոյլայն Ստելլան ծիծաղելով մեկնեց իր ցուցամատը, որին հագցրած էր սպիտակ կաշվե ձեռնոցից կտրած մի մատ:

— Դուք երևի կհարցնեք, թե ինչու ես չեմ աշխատում բոլորովին ազատվել այդ տաղտկալի զբաղմունքից,— լրջանալով շարունակեց ֆրոյլայն Ռիզեմանը, տեսնելով, որ Կուրբատովը իրեն է նայում համարյա խղճահարությամբ:— Բայց դա ամենևին էլ հեշտ բան չէ: Իմ մայրն այդ կարգի գործունեությանը մեծ նշանակություն է տալիս: Հայրս նույնպես: Նրանք գտնում են, որ այդ զբաղմունքն անհրաժեշտ է առաքինությունն ու բարեկրթությունը պահպանելու համար և միևնույն ժամանակ հաճո է աստծուն, որովհետև մեր աշխատանքի մի մասը բարեգործական բնույթ է կրում: Այս բանին առանձնապես հաստատ համոզված է իմ աստվածավախ մայրը: Ծնողներիս կարծիքով մեր աշխատանքը մեր ընտանեկան կարգ ու կանոնի մասն է: Իսկ ընտանեկան կարգ ու կանոնը փոխելու համար պահանջվում է համարձակություն, ուժ, պայքար: Դա կառաջացներ անվերջ վեճեր ու անախորժություններ: Բացի դրանից ինձ մխիթարում է այն միտքը, որ շուտով ինքնուրույն կդառնամ և կազատվեմ այդ ստրկությունից: Իմ տանը, Անդրեյ Պետրովիչ, այդպիսի դատարկ զբաղմունքներ քիչ կլինեն...

Կուրբատովն ուզում էր հարց տալ Ստելլային, թե Ռիզեմանի պես հարուստ գործարանատիրոջ տանն ինչպե՞ս է կարողացել երևան գալ այդպիսի ցուցադրական քաղքենիական աշխատասիրությունը, ինչպես է դա կարողացել սովորություն դառնալ: Բայց նա այդ հարցը չտվեց. Պատասխանն ինքնին պարզ էր և Անդրեյ Պետրովիչն իսկույն էլ գտավ այն:

Պարոն և տիկին Ռիզեմանները քաղքենիներ էին եղել, այդպիսիք էլ մնացել էին նաև փոփոխված պայմաններում: Նրանք սերվել էին արհեստավորական միջավայրից, ամուսինը մի ժամանակ եղել էր վարպետի օգնական, ինքը՝ վարպետի դուստր: Նրանք որոշ չափով նոր մթնոլորտն էին բերել իրենց նախկին միջավայրի սովորությունները, հայացքները, համոզմունքները, ոգին: Այն նորը, որ ձեռք էին բերել, սոսկ մի բարակ ոսկեզօծ շերտով էր ծածկում հին էությունը և զուտ արտաքին երևույթ ուներ: Մանրբուրժուական հիմքի վրա էր հանգրվանում նրանց ընտանեկան կարգ ու կանոնը, նրանց կյանքը, նրանց փոխհարաբերությունը հասարակության հետ, նրանց ներքին աշխարհը: Այդ մանրբուրժուական հիմքն էր պատճառը նաև, որ պարոն Ռիզեմանն այնպես բացահայտորեն պարծենում էր իր հարստությամբ (մինչդեռ տոհմական խոշոր բուրժուազիայի մեջ դա երևան է գալիս ավելի նուրբ, քողարկված ձևով), իսկ տիկին Ռիզեմանը դիտավորյալ ցուցադրում էր այնպիսի առաքինություններ, ինչպիսիք են աշխատասիրությունը, աստվածավախությունը, մինչդեռ խոշոր բուրժուական շրջաններում իրենց ամբողջ շքեղությամբ ցուցադրելու համար ուրիշ միջոցներից են օգտվում: Այդ նույն մանրբուրժուական էությամբ է բացատրվում և այն, որ Ռիզեման ամուսինները համառորեն պահպանում էին որոշ արտաքին աննշան սովորություններ, իսկ բարձրաշխարհիկ սովորությունների և լավ ճաշակի դեմ իրենց լուրջ մեղանչումները չէին էլ նկատում, մանավանդ պարոն Ռիզեմանը: Այդ նույն

մանրբուրժուական էությամբ էր բացատրվում նաև Ռիզեմանների գծուծ ժլատությունը, երբ խոսքը վերաբերում էր մանրունքներին և դրա հետ միասին անսահման առատաձեռնությունը, եթե փողը ծախսվում էր հասարակության մեջ տպավորություն գործելու համար: Կուրբատովն այս բանը շատ անգամ էր նկատել: Ռիզեմանի քսակը միշտ էլ լայն բաց էր, եթե հարկավոր էր փայլել, տպավորություն թողնել, բայց խոհարարուհուն ռոճիկ վճարելիս պարոն Ռիզեմանը զուտ հրեական համառությամբ կարող էր սակարկել մի հիսուն կոպեկի համար:

Ցուցամոլ շքեղության ձգտելով՝ երկու ամուսիններն էլ խնամքով հետևում էին, որ և՛ իրենք, և՛ իրենց երեխաները լավ հագուստ ու թանկագին զարդեր ունենան, որ այդ բանում ոչ ոք չկարողանա գերազանցել իրենց: Նրանք աշխատում էին մասնակցել այն բոլոր զվարճություններին, որոնք ընդունված էին բարձր հասարակության մեջ կամ «մոդա» էին: Ռիզեմաններն արտասահման էին գնում, ինչպես Անդրեյ Պետրովիչն իմացավ նրանց խոսակցություններից: Թատրոնում նրանք իրենց օթյակն ունեին, նրանք կանոնավորապես հաճախում էին «հռչակավորների» համերգներին: Ստելլան, Ռիտան ու Էբերհարդը հեծնելու ձիեր ու հեծանիվներ ունեին, իսկ հայր Ռիզեմանը մտադիր էր իր համար ավտոմեքենա դուրս գրել արտասահմանից, որովհետև ձի հեծնելը նրա համար հեշտ բան չէր:

Այս ամենը արտաքինի ոսկեզօծում էր, որ փոխ էր առնվել խոշոր բուրժուաներից, իսկ նրա բարակ շերտի տակ… տանը կարում էին, ասեղնագործում, գործում, քանդակարում, աղոթում և սպասուհու ռոճիկից հիսուն կոպեկ կտրում կոտրված բաժակի համար, և այս էլ բավական չէ, նախատում ու հայհոյում էին ամենաքաղքենիական ձևերով...

— Դե, ահա, ֆրոյլայն Ռիզեման,— ասաց Անդրեյ Պետրովիչը, երբ այս բոլոր մտքերն անցավ նրա գլխով:— Հուսով եմ, այժմ մենք պարզեցինք, որ ձեզ ժամանակ պիտի մնա նաև ուրիշ գործերի համար, բացի նրանցից, որոնք այժմ լցնում են ձեր կյանքը:

Ստելլան հայացքը բարձրացրեց գրքից, որն սկսել էր կարդալ:

— Այո, Անդրեյ Պետրովիչ,— պատասխանեց նա:— Ես արդարանում էի ավելի շատ ձևի համար: Ձեզ հետ վիճելով միայն ցանկանում էի իմանալ ձեր կարծիքը, որպեսզի դա համադրեմ այն զգացմունքի հետ, որ հենց իմ մեջ առաջացնում են իմ սովորական զբաղմունքներն ու զվարճությունները և որը երբեմն հալածում է ինձ:

— Եվ ի՞նչ զգացմունք է դա:

— Որ ես ոչինչ չեմ անում: Որ ես դատարկ բաներով եմ զբաղվում: Իզուր ժամանակ եմ վատնում: Որ ես պետք է անեի **այնպիսի մի բան**, որը ներքին բավականություն պատճառեր ինձ, տար ինձ կյանքի ոչ թե դատարկության, այլ լիության զգացմունք...

Անդրեյ Պետրովիչը նստեց սեղանի մոտ, ֆրոյլայն Ռիզեմանի դիմաց: Նրա աչքերը շողացին և այտերը ծածկվեցին կարմիրով:

— Ստելլա Մարտինովնա...— Կուրբատովը, որ սովորաբար նրա հետ խոսում էր գերմաներեն և կոչում էր «ֆրոյլայն», առաջին անգամ այսպես դիմեց աղջկան:— Ստելլա Մարտինովնա, հիմա դուք ասացիք այն, ինչ ես սպասում էի ձեզանից: Այո՛, ես ձեզանից սպասում էի այդպիսի խոստովանություն: Եվ, այսուամենայնիվ, հիմա ես զարմանում եմ... Դուք խոստովանում եք, որ ձեր ամբողջ նախկին աշխատանքն ու զվարճությունները դատարկ բաներ են եղել, բայց և այնպես արհամարհանքով նորից դարակին եք դնում գիտական ու քաղաքական գրքերը:

— Բայց մի՞թե ինձ համար պարզ է, թե ինչ եմ զգում ես և ինչ եմ ցանկանում,— ջերմորեն գոչեց Ստելլան:— Ես խարխափում եմ խավարի մեջ, ես որոնում եմ... ո՛չ, ես նույնիսկ չեմ որոնում, ես միայն կուզենայի որոնել, բայց չգիտեմ, թե ինչ որոնեմ... Ես զգում եմ, որ ինձ ինչ-որ բան պակասում է, բայց ի՞նչ բան և որտե՞ղ գտնեմ այն, ես չգիտեմ... Եթե այն, ինչ ես որոնում եմ, կարելի է գտնել գիտության կամ քաղաքականության մեջ, ապա ուրեմն տվեք ինձ այդ գրքերը, Անդրեյ Պետրովիչ: Տվեք ինձ ձեր բոլոր գրքերը, և ես ձեզ շուտով կասեմ՝ գտե՞լ եմ այն, ինչ ցանկանում եմ, ինչ որոնում էի:

— Ստելլա Մարտինովնա, դուք **աշխատանք** եք որոնում: Առողջ մարդն ամաչում է պարապ-սարապ ապրել: Նա իրեն զգում է անօգուտ մարդ: Նա զգում է, որ ինքն ավելի ցած է, քան նրանք, ովքեր աշխատում են: Նա զգում է, որ ապրում է ուրիշի աշխատանքի հաշվին: Դուք աշխատանք եք որոնում, Ստելլա Մարտինովնա, որովհետև ամաչում եք ապրել առանց մի բան անելու:

— Դե ուրեմն աշխատանք տվեք ինձ:

— Ես ձեզ աշխատանք կտամ:

Անդրեյ Պետրովիչը մոտեցավ գրադարակին, արագ գտավ այնտեղից միջին մեծության երկու գիրք և մեկնեց Ստելլային՝ նախ մեկը, ապա՝ մյուսը:

— Վերցրեք նախ այս, սա ձեզ կսովորեցնի հասկանալ և հարգել աշխատանքը... Իսկ եթե կհոգնեք, հանգստանալու համար կարդացեք այս վեպը: Երբ կվերջացնեք, եկեք ինձ մոտ, մենք միասին քննադատաբար կքննարկենք սրանց բովանդակությունը, ազատ մտքերի փոխանակություն կունենանք, և դուք էլի մի քանի գիրք կվերցնեք:

Ֆրոյլայն Ռիզեմանն առանց վերնագրերին նայելու գրքերը թևի տակ դրեց, սեղմեց կրծքին և շնորհակալություն հայտնելով արագ դուրս գնաց սենյակից:

5

Պարոն Մարտին Ռիզեմանի դեմքից երևում էր, որ իր գործարանը Կուրբատովին ցույց տալը մեծ բավականություն է պատճառում իրեն: Նրա դեմքն ասես լուսնի մեղմ փայլ էր ստացել, իսկ շուրթերին խաղում էր լիակատար ինքնագոհության ու հպարտության հայրական ժպիտը: Նա իր հյուրին առաջնորդում էր մի մրոտված ցեխից մյուսը և անվերջ բացատրում: Կուրբատովին թվում էր, որ պարոն Ռիզեմանը երբեք այդպես զրուցասեր չէր եղել: Գործարանի շենքերում նա բաց չէր թողնում շատ թե քիչ նկատելի որևէ առարկա, ամեն ինչ ցույց էր տալիս ու բացատրում: Այդ բացատրություններն այնքան ավելի ընդարձակ էին դառնում և պարոն Ռիզեմանի տրամադրությունն այնքան ավելի էր բարձրանում, որքան ավելի նա համոզվում էր, որ այդ բաներն Անդրեյ Պետրովիչին իսկապես հետաքրքրում են: Որպեսզի հյուրին ցույց տա իր տիրական անսահման իշխանությունը, նա վարպետներին ու ավագ բանվորներին համարյա ստիպում էր պարել իր առաջ և իր դաժան ու հրամայական տոնով նրանց լիակատար ստորացման էր հասցնում:

Ռիզեմանի մեքենաշինական և չուգունաձուլական գործարանը գտնվում էր քաղաքի արևելյան ծայրին, մի մեծ բլրի վրա: Այստեղից գործարանի շարունակ ծխող ծխնելույզը և մրոտած շենքերը ճակատամարտի կրակի տակ ընկած ամրոցի աշտարակների պես նայում էին ցած, հովտում սպիտակին տվող քաղաքին: Անդրեյ Պետրովիչն ավելի խոշոր գործարաններ էլ էր տեսել, բայց շենքերի կառուցվածքով, ներքին կահավորումով և աշխատանքի լարվածությամբ նրանք հազիվ թե ավելի բարձր մակարդակի վրա լինեին կանգնած: Կուրբատովը շուտով համոզվեց, որ այստեղ ղեկավարությունն իսկապես գտնվում է «երկաթե ձեռքերի մեջ», որ այս ձեռնարկության ոգին հաստատակամ, հաջողակ, անխոնջ ու անողոք շահասերի մեկն է: Պարոն Մարտին Ռիզեմանն իր տեսակետով, անշուշտ, կարող էր պարծենալ իր նվաճումներով:

Գործարանի ընդարձակ բակում երկար շարքերով դասավորված էին պատրաստի շոգեկաթսաները, գյուղատնտեսական մեքենաներն հակավորած մեքենաների մասերը: Մատնացույց անելով այդ ամենը՝ պարոն Ռիզեմանն ուրախ ժպիտը դեմքին ասաց, թե «շուտով այդ ամբողջ հնոտին կցրվի աշխարհի բոլոր կողմերը, իսկ նրա փոխարեն երևան կգա նորը»: Լայնածավալ բարձր ծածկի տակ, որտեղ կաթսաներն էին մշակվում, հարյուրավոր մուրճեր մետաղին զարկվելով խլացուցիչ աղմուկ էին բարձրացնում: Մրաթաթախ բանվորները սև-սև ճանճերի պես կպել էին չուգունե կաթսաների պատերին՝ ոմանք ներսի կողմից, ոմանք՝ դրսի: Այդ մարդիկ երևի խուլ էին, այլ կերպ չէին կարող դիմանալ այդ դժոխային դղրդոցին, որ բարձացնում էին իրենք երկաթե վիթխարի մուրճերը շրխկացնելով ամրիչներին: Իսկ հետո գալիս էին վիթխարի

ցեխերը՝ դժժացող թափանիվներով, դազգահներով, զնդաններով՝ փականագործների, խառատների, հատիչների, շաղափողների, դարբինների բազմություններով:

Երեկոյան, երբ մյուս ցեխերից բանվորները ցրվում էին իրենց տները, ձուլարանում սկսվում էր մետաղի ձուլումը: Էբերհարդին, որն ամենուրեք ուղեկցում էր Անդրեյ Պետրովիչին և այսօր էլ նրա հետ միասին քաղաք էր եկել, գործարանի աշխատանքի այս պահը միշտ էլ առանձնապես հետաքրքրել էր: Դա մի հոյակապ, մռայլ պոեզիայով լեցուն տեսարան էր: Սև, երկաթաձեռ մարդիկ բոցկլտացող մետաղահալոցների առաջ կանգնած՝ երկաթե անոթները լցնում էին հրահեղուկով և շիկացած թշշացող զանգվածը, որն իր ահասարսուռ բոցավառությամբ այրում էր ձուլողների դեմքերն ու ձեռքերը, լցնում էին վիթխարի ցեխի հատակին պատրաստած կավե ու հողե կաղապարների մեջ: Սկված դիտողների առաջ ասես ծավալվում էր դժոխքի պատկերը՝ այնքան գունեղ և միաժամանակ այնքան մռայլ, ցնորական, սրտակեղեք: Հնոցներից ցայտող բոսորաշողը հրակարմիր ցոքլեր էր նետում ցեխի հողե սև հատակին, մրոտված պատերին, բարձր առաստաղին, իսկ շերեփների մեջ լցվող հեղուկ մետաղի բոսորագույն լույսն ընկնելով ձուլող բանվորների երեսին՝ այդ մարդկանց ինչ-որ չարագույժ գործ կատարող ուրվականների տեսք էր տալիս: Նույնիսկ ցեխի պատերից դուրս, գործարանի բակում էլ դեռ զգացվում էր ձուլարանի մռայլ պոեզիան: Երկինքը լիզող վիթխարի լեզվի պես ծխնելույզից դուրս էր ժայթքում բոցի հսկայական սյունը՝ ամպերը շառագունելով հրդեհի նման և ամբողջ շրջակայքը լուսավորելով կայծկլտուն կարմիր ցոլքերով:

Անդրեյ Պետրովիչը և Էբերհարդը քաղաք էին եկել հեծանիվներով և նույն ձևով էլ ուզում էին տուն վերադառնալ, բայց զիջելով պարոն Ռիզեմանի համառ պնդումին՝ հեծանիվները թողին Ռիզեմանների քաղաքային բնակարանում և նստեցին գործարանատիրոջ նոր, շողշողուն կառքը, որին լծված մի զույգ հիանալի վարգուն ձիերը ասես խաղս էին տալիս աշխուժությունից: Երևում է՝ հայր Ռիզեմանն շտապում էր իմանալ՝ դուր եկա՞վ արդյոք Անդրեյ Պետրովիչին իր գործարանը, իր պարծանքն ու զավակը: Դեռ նոր էին նրանք հեռացել տնից, որ գտնվում էր գործարանի կողքին, երբ սիրալիր գործարանատերը խոսքը շուռ տվեց այդ ուղղությամբ:

— Է՛, պարոն Անդրեյ Պետրովիչ, գո՞հ եք արդյոք ձեր այս ուղևորությունից: Որևէ հետաքրքիր բան գտա՞ք իմ հավաքնում:

Կուրբատովը նստած էր խոր մտքի մեջ ընկած: Գործարանատիրոջ հարցը նրան սթափեցրեց:

— Հետաքրքիր բան շատ կար,— պատասխանեց նա մի պահ լռությունից հետո:

— Այո՞: Անչափ շոյված եմ... Բայց դուք, թույլ տվեք ասել, բացառիկ չափով հետաքրքրասեր եք: Դուք հետաքրքրվում եք ամեն ինչով, նույնիսկ այնպիսի բաներով, որոնք ձեզ ամենևին չպիտի հետաքրքրեին և որոնք ձեզնից շատ հեռու են... Անդրեյ Պետրովիչ,— և հայր Ռիզեմանը մտերմաբար թփթփացրեց ուսանողի ուսին,— եթե էլի ցանկանաք... Խնդրեմ, բոլոր դռները բաց են ձեր առաջ: Ես ձեզ կծանոթացնեմ իմ ինժեների հետ — այսօր նա բացակա էր — և նա ձեզ կառաջնորդի…

— Շնորհակալ եմ ձեզնից, պարոն Ռիզեման,— ընդհատեց նրան Անդրեյ Պետրովիչը:— Երևի ես շուտով կօգտվեի ձեր թույլտվությունից, եթե միտք չունենայի ձեզնից խնդրել մի բան, որ կապված է գործարանում մուտք ունենալու ավելի լայն թույլտվության հետ:

Ռիզեմանը հարցական նայեց ուսանողին և պատրաստ էր համաձայնություն տալ նրա խնդրանքին:

— Ես ձեզ լսում եմ, Անդրեյ Պետրովիչ:

— Ես կուզենայի մի քիչ աշխատել ձեր գործարանում, օրական մի քանի ժամ:

Գործարանատերը կառքի փափուկ նստատեղում իր ամբողջ ծանր մարմնով շուռ եկավ և հայացքը հառեց խոսակցին, ասես կասկածում էր, թե ինքը ճի՞շտ է լսել նրա խոսքերը:

— Աշխատե՞լ... գործարանո՞ւմ. . . Այդ ի՞նչ ասացիք, Անդրեյ Պետրովիչ:

— Դուք ինձ ճիշտ եք հասկացել,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը:— Ես ուզում եմ մի որոշ ժամանակ աշխատել ձեր գործարանում: Դուք ինձ կընդունե՞ք:

Պարոն Ռիզեմանը մի սուր հայացք գցեց ուսանողի դեմքին և ասես տատանվում էր՝ բարկանա՞լ, թե՞ ծիծաղել:

— Ինչի՞ համար է այդ կատակը,— հարցրեց նա վերջապես:— Դուք... դուք... պարոն թեկնածու, դուք ցանկանում եք բանվո՞ր ընդունվել իմ գործարանում:

— Այո. . . ժամանակավոր, ինչպես արդեն ասացի:

— Դուք ցանկանում եք գործարանում **աշխատե՞լ**, և ո՞չ թե դիտել այն:

— Այո:

— Բայց դա ձեր ինչի՞ն է պետք, պարոն թեկնածու,— գոչեց գործարանատերը և ձեռքերը շրխկացրեց իր ծնկներին:— Ինչի՞ համար: Ի՞նչ կտա ձեզ այդ և ի՞նչն է դրա նպատակը:

— Դա ինձ հետաքրքրում է,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը:— Չէ՞ հենց դուք ասացիք, պարոն Ռիզեման, որ ես հետաքրքրվում եմ նույնիսկ այնպիսի բաներով, որոնք հեռու են ինձանից... Դուք ճիշտ եք նկատել: Կտա՞ ք ինձ այդպիսի թույլտվություն:

Պարոն Մարտին Ռիզեմանը ձեռքերը ծնկներին հենած ու ցած նայելով ծիծաղում էր ինքն իր մտքերի վրա: Նա փորձում էր պատկերացնել, թե ինչպես պարոն թեկնածուն բանվորական վերնաշապիկը հագին, երեսը մրոտված՝ հալոցահնոցից դուրս է քաշում չուգունի ձուլվածքը կամ ինչպես ծանր մուրճը ձեռքին բռնած ծանր հարվածներ է տալիս կաթսայի պատերին: Այս պատկերը Ռիզեմանին այնքան կոմիկական էր թվում, որ նա քրքջում էր ամբողջ կոկորդով:

— Կարող եք սկսել, Անդրեյ Պետրովիչ, կարող եք սկսել,— գոչեց նա, և նրա ծաղրական հայացքը լրացնում էր այն, ինչ խոսքով չէր ասել. «Հապա մի փորձիր, ախպերս: Կես ժամ չանցած՝ մուրճը դեն կշպրտես և գործարանից կփախչես առանց ետ նայելու»:

Եվ պատկերացնելով, թե Կուրբատովն ինչպես է փախչելու գործարանից, Ռիզեմանը նորից քրքջաց: Բայց Անդրեյ Պետրովիչի դեմքին նայելուն պես միանգամից լրջացավ: Այդ դեմքի վրա նա կարդաց այնպիսի մի բան, որը ամեն մի հիմքից զրկեց նրա ծաղրը և զգալիորեն փոխեց իր իսկ երևակայության մեջ ստեղծած պարոն թեկնածուի պատկերը բանվորի դերում: Գործարանատերը, ճիշտ է, հաստատ համոզված էր, որ ինքը գործ ունի մի շատ յուրօրինակ մարդու հետ, որին հատուկ են անհասկանալի քմահաճություններ, բայց դրանց մեջ ոչ մի ծիծաղելի բան չէր գտնում:

— Դուք, երևի, ուզում եք իմանալ, թե ինչ օր են քաշում բանվորները կամ գուցե մտածում եք երբևիցե տեխնիկայի բնագավառո՞ւմ աշխատել:— Հարցրեց նա դեռ էլի ժպտալով, բայց նրա խոսքերի մեջ այլևս ծաղր չկար:

— Ես կուզենայի ծանոթանալ գործարանի պայմաններին,— հանգիստ պատասխանեց Կուրբատովը:— Ես գտնում եմ, որ մարդ ինչքան ավելի շատ ճանաչի կյանքը, այնքան ավելի լավ... Դուք, ուրեմն, թույլ տալի՞ս եք, պարոն Ռիզեման:

— Դե դա ինքնին հասկանալի է, սիրելի բարեկամս: Ես ինչո՞ւ պիտի դեմ լինեմ, եթե դուք այդպիսի ցանկություն և ժամանակ ունեք... Դուք ասացիք օրական մի քանի ժա՞մ:

— Այնքան, որքան թույլ կտա իմ դասատուական աշխատանքը, այնպես որ իմ աշակերտը դրանից ամենևին չտուժի...Ես կուզենայի սկսել հենց վաղը ճաշից հետո:

— Լավ: Բայց գիտե՞ք արդյոք, պարոն թեկնածու, որ ես կարող եմ ձեզ աշխատանքի ընդունել միայն որպես աշակերտ, կամ, եթե ցանկանում եք սևագործ բանվոր:

— Այդ հասկանալի է:

— Ձեր ռոճիկը մի մեծ բան չի լինելու. աշակերտն ինձ մոտ ստանում է օրական քսանհինգ կոպեկ, իսկ սևագործը՝ յոթանասուն: Բայց քանի որ դուք լրիվ օր չեք աշխատելու, իհարկե, ավելի պակաս կստանաք. . . Համաձա՞յն եք:

Պարոն Ռիզեմանը կատակ էր անում, բայց նրա կատակի մեջ նենգություն չկար, և իր տոնով, և իմաստով լիովին քաղաքավարի էր, նրա մեջ նույնիսկ մեղմ հարգանք էր զգացվում: Չնայած դրան, Անդրեյ Պետրովիչը գործարանատիրոջ հարցին չպատասխանեց, այլ նրա խոսքերը կատակի տեղ դնելով լռության մատնեց: Ուսանողի հայացքը կանգ առավ դիմացը նստած իր աշակերտի դեմքի վրա. այն արտահայտում էր մեծագույն զարմանք, համարյա տագնապ: Երևում էր, որ տղան ուզում է ինչ-որ բան ասել, հարցնել, բայց հոր ներկայությամբ չի համարձակվում: Չէ՞ որ նա չէր կարող հոր մոտ «դու» ասել իր բարեկամին ու ընկերոջը:

Բայց հենց որ նրանք տուն հասան և Էբերհարդը Կուրբատովի հետ մենակ մնաց, տղան շտապեց իր սիրտը բանալ:

— Անդրեյ Պետրովիչ, դու գնալու ես գործարանում աշխատելո՞ւ:

— Այո, բարեկամս:

— Ես էլ կուզեի գալ:

— Դո՞ւ: Ինչո՞ւ:

— Ես էլ կուզեի լինել... **ծանր աշխատանքի** մեջ...

— Ծանր աշխատանքի՞... Ծանր աշխատանքը հեշտ բան չէ, Էբերհարդ... Քո ուժը չի պատի:

— Կպատի, Անդրեյ Պետրովիչ: Գործարանում աշխատող տղաներ կան, որոնք ինձանից էլ թուլակազմ են: Մի՞թե դու չտեսար:

— Տեսա: Բայց նրանք վարժվել են ծանր աշխատանքի, իսկ դու՝ ոչ:

— Բայց չէ՞ որ դու էլ վարժված չես:

— Ես կվարժվեմ:

— Ես էլ կուզենայի:

Կուրբատովը ձեռքը գցեց տղայի վզով և նրա գլուխը սեղմեց իր ուսին:

— Կեցցե՛ս դու, Էբերհարդ: Բայց ասածդ չի լինի, հայրդ չի թույլ տա: Իսկ ես այդ բաներին խառնվելու իրավունք չունեմ:

— Բայց ես ուզում եմ քեզ հետ լինել,— գոչեց տղան համարյա լալագին:— Ես ի՞նչ եմ անելու այստեղ, երբ դու գործարանում լինես: Հարցրու հայրիկիս, գուցե թույլ կտա: Եթե դու խնդրես, երևի թույլ կտա:

— Խելացի եղիր և այդ բանը մի՛ պահանջիր,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը մեղմ, բայց լուրջ տոնով:— Դա ինձ անախորժ դրության մեջ կգցեր, իսկ դու, երևի, չե՞ս ուզում, որ այդպես լինի:

— Իհարկե չեմ ուզում, Անդրեյ Պետրովիչ: Բայց ի՞նչ անախորժություն կարող է լինել քեզ համար:

— Հայրդ կբարկանար թե դու ինձնից օրինակ վերցնելով նույնպես ձգտում ես գործարան ընկնել, իսկ քո ուսումը թողնել ես ուզում: Այդ դեպքում նա ինձ էլ չէր թողնի աշխատանքի գնալ, իսկ դա ինձ կվշտացներ:

— Այդ դեպքում ես չեմ ուզում,— արագ որոշեց տղան:

— Բայց ես քեզ հաստատ խոսք եմ տալիս մի բան. Դու հաճախ ինձ հետ միասին գործարան կգաս և կտեսնես բանվորներն ինչպես են աշխատում այնտեղ:

Սրանով էլ Էբերհարդը հանգստացավ:

Հենց հետևյալ օրվանից Անդրեյ Պետրովիչն սկսեց հետճաշյա ժամերին աշխատել Ռիզեմանի գործարանում: Նա քաղաք էր գնում հեծանիվով կամ գնացքով և վերադառնում էր ուշ երեկոյան, երբեմն էլ միայն լուսաբացին, եթե գիշերն զբաղված էր լինում ձուլարանում:

Պարոն Ռիզեմանը սխալվել էր, ենթադրելով, թե գործարանի ցեխերի տոթն ու կեղտոտ, ծանր աշխատանքը շուտով կձանձրացնեն ու կհոգնեցնեն պարոն թեկնածուին: Անդրեյ Պետրովիչը գործարանից չփախավ ո՛չ առաջին և ո՛չ հաջորդ օրերին, և պարոն Ռիզեմանն անձամբ համոզվեց և գլխավոր ինժեներից ու վարպետներից էլ իմացավ, որ պարոն թեկնածուն չի խորշում ամենածանր աշխատանքներից, որ նա իր համար հենց այնպիսի առաջադրանքներ է ընտրում, որոնք ուժերի մեծ լարում են պահանջում, որ նա աշխատում է լինել նույնպիսի ճշտակատար աշակերտ, ինչպես և սևագործ բանվոր: Ճիշտ է, նա մյուսներից ավելի քիչ դիմացկուն էր, շուտ հոգնում էր ու դադար առնում, որի կարիքը մյուս բանվորները չէին զգում: Բայց հետո նա կրկին ու կրկին մեծ սիրով և ոգևորությամբ գործի էր անցնում, ֆիզիկապես կոփվում, մարզում իր մկանները և այդպիսով, վերջ ի վերջո, սկսեց հոգնածությունը հաղթահարել:

Այն հանգամանքը, որ Ռիզեմանների ընտանեկան ուսուցիչը գործարան է մտել որպես բանվոր, իհարկե, գրավել էր նրանց բոլոր ծանոթների ուշադրությունը, նույնիսկ «շատ անբարյացակամ ուշադրությունը», ինչպես պնդում էր տիկին Գեբլերը: Սկզբում զարմանում էին, գլուխներն օրորում, ձեռքերն իրար զարկում, ապա սկսեցին ծիծաղել, ծաղրել, ձեռք առնել, խոսել նրա հիմար խեղկատակության մասին, իսկ վերջում սկսեցին ամեն տեսակ աղետներ կանխագուշակել:

Նա աշխատում է հետաքրքիր մարդ երևալ, տարօրինակության ետևից է ընկել, ուզում է փայլել իր օտարոտիությամբ — այսպես էր Ռիտա Ռիզեմանի, Օսվալդ Գեբլերի, Հայնրիխ Բերգմանի և ուրիշ շատերի նախնական կարծիքը:

Հետո հանդես եկան տիկին Ռիզեմանը, տիկին Գեբլերը և ուրիշ պատվավոր տիկիններ: Նրանք եկան այն եզրակացության, թե գործարանատեր Ռիզեմանի ընտանեկան ռեպետիտորին այդպիսի «ֆոկուսները» չեն սազում: Դա, ասում էին, գցում է ընտանիքի արժանապատվությունը, դե հո Էբերհարդ Ռիզեմանը չի կարող դասեր ստանալ գործարանային բանվորից, իսկ գործարանային բանվորը, ինչպես սրամտորեն նկատել էր ոմն տիկին Մեյեր, չի կարող դասեր տալ Էբերհարդ Ռիզեմանին: Նորից ուսուցչի հեղինակությունն սպառնալիքի տակ էր. ինտելիգենտ ընտանիքի երեխան ի՞նչ կարող է սովորել մի մարդուց, որն ամեն օր շփվում է բանվորների հետ, որն իրեն հավասարացրել է բանվորներին, համարյա եղբայրացել է նրանց հետ:

Վերջ ի վերջո այդ բանը համարեցին քաղաքականապես վտանգավոր և սկսեցին պարոն Ռիզեմանին զգուշացնել իր գործնական շահերին սպառնացող վտանգից:

— Մեկ էլ տեսար՝ կսկսի գրգռել ձեր բանվորներին, խռովության կոչել նրանց,— ասաց Ռիզեմանին նրա ապագա փեսան, այն նույն պարոն Գեբլերը, որը մինչ այդ գտնում էր, թե ռուս ուսանողը պարզապես ուզում է հետաքրքիր մարդ երևալ:

— Կամ ծայրահեղ դեպքում գործարանում մի կարգին գործադուլ կսարքի,— ավելացրեց տարտուեցի ուսանողը, այն նույն պարոն Հայնրիխ Բերգմանը, որը մինչ այդ պնդում էր, թե պետերբուրգցի իր կոլեգան ուզում է փայլել իր տարօրինակությամբ:

— Դուք ինչո՞ւ այդպես եք կարծում,— հարցրեց պարոն Ռիզեմանը:

— Հենց թեկուզ նրա համար,— պատասխանեց Օսվալդ Գեբլերը,— որ եթե մի մարդ առանց որևէ խելացի հիմքի գործարան է մտնում որպես հասարակ բանվոր, ուրեմն նա ինչ-որ գաղտնի միտք է իրականացնում: Իսկ որ այդ մտադրությունը ամենևին էլ անմեղ բան չէ, դա պարզ է ամեն մեկին, ով գիտե հասարակական պայմանները:

— Եվ մանավանդ նրան, ով ճանաչում է ռուս ուսանողներին,— վրա բերեց Հայնրիխ Բերգմանը:— Ախր մենք նույնիսկ Տարտուում ամեն օր տեսնում ու լսում ենք, թե ինչով են զբաղվում նրանք ազատ ժամանակ, նրանք գաղտնի ժողովներ են ունենում, թռուցիկներ են կազմում ու տարածում, կապ են պահպանում ամեն տեսակ հեռավոր ու մոտիկ դավադիրների հետ, որպեսզի բանվորներին իրենց շարժման մեջ քաշեն: Ես ամենևին չեմ զարմանա, եթե մի գեղեցիկ օր դուք պարզեք, որ այդ անվնաս ռեպետիտորը ձեր բանվորների գրպաններն է խցկել թռուցիկներ, որոնք կոչ են անում ձեզնից պահանջել ութժամյա աշխատանքային օր և աշխատավարձի բարձրացում մինչև հիսուն տոկոսով:

Գործարանատեր Ռիզեմանը տարակուսանքով գլուխն օրորեց: Նախ՝ նա լիովին վստահում էր Անդրեյ Պետրովիչին, որովհետև երբեք ռուս ուսանողի մեջ ոչ մի կասկածելի բան չէր նկատել ո՛չ տանը, ո՛չ գործարանում: Եվ երկրորդ՝ նա ճանաչում էր իր բանվորներին և ընդհանրապես տեղացի բանվորներին, նա ճանաչում էր էստոնացի բանվորներին: Հազիվ թե նրանք սկսեին որևէ բան «պահանջել»: Նրանք շնորհակալ էին և նրանից, որ իրենց աշխատանք են տվել և ռոճիկ են վճարում: Նրանք գործարանատերերին բարերար էին համարում և ոչ մի բան այնքան խորթ չէր նրանց համար, որքան գործադուլի կամ որևէ խռովության միտքը: Երիտասարդ պարոններն անպայման չափազանցնում էին, նրանց աչքին երևում էին հենց իրենց մտքի ստեղծած ուրվականները: Պարոն Ռիզեմանի կարծիքով այդ կողմից ինքը վախենալու բան չուներ:

Բայց որովհետև Անդրեյ Պետրովիչի վարմունքն ընդհանուրի ուշադրությունն էր գրավել, գործարանատեր Ռիզեմանը դժվարին դրության մեջ էր ընկել: Նա թերևս վերջ կդներ ռուս ուսանողի այդ մտահոգացումին, եթե, իր կամքին էլ հակառակ, չզգար այդ մարդու ազդեցությունն իր վրա: Նա Կուրբատովի նկատմամբ մեծարանքի հասնող հարգանք էր տածում, ինչպես ամեն մի տգետ, բայց բախտի բերմամբ վեր բարձրացած մարդ, որքան էլ գոռոզանա իր հարստությամբ, գաղտնաբար, սրտի խորքում, համարյա անգիտակցաբար հարգանք է տածում կրթությամբ իրենից բարձր կանգնած մարդու նկատմամբ: Ռիզեմանը չէր կարող մոտենալ Անդրեյ Պետրովիչին և ասել. «Իմ ծանոթներին դուր չի գալիս, որ դուք աշխատում եք գործարանում, ուստի այլևս այնտեղ մի՛ գնացեք»: Իսկ ինչ վերաբերում է հենց իրեն՝ Ռիզեմանին, ապա նա ամենևին էլ դեմ չէր ուսանողի այդ տարօրինակություններին: Նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե իր որդուն, իր ընտանիքին, իր ծանոթներին ի՞նչ վնաս կարող է լինել նրանից, որ պարոն թեկնածուն զվարճության համար, հենց **որպես կատակ**, աշխատում է իր գործարանում: Ընդհակառակն, գործարանատիրոջը շոյում էր այն միտքը, որ պարոն թեկնածուն աշխատում է Մարտին Ռիզեմանի գործարանում և այդ գործարանն այնքան հետաքրքիր է համարում:

Մյուս կողմից էլ հենց պարոն Ռիզեմանի ընտանիքում գտնվել էր մի անվեհեր պաշտպան այդ մարդուն, որն իր արարքով այդպիսի անցանկալի ուշադրություն էր գրավել: Ֆրոյլայն Ստելլան դեմ էր դուրս գալիս բոլորին, ովքեր ծաղրում, կշտամբում էին Կուրբատովին, ամեն տեսակ կասկածներ էին հայտնում: Նա դեմ էր դուրս գալիս նույնիսկ իր փեսացուին ու ապագա կեսուրին այնպիսի ծանրակշիռ ու համոզիչ առարկություններով, որ բորբոքված խոսակցությունը փոխարինվում էր մռայլ լռությամբ: Նա ոչ միայն կարողանում էր ապացուցել, որ այդ բոլոր երկյուղները ոչ մի հիմք չունեն, այլև նույնիսկ նրան հաջողվեց բացատրել այն, ինչ բոլորին անհասկանալի էր. թե ինչու պարոն թեկնածուն որոշել է բանվոր դառնալ:

— Այդ մարդն անում է այն, ինչ ձեր մտքով էլ չէր անցնի անել, թեև դա ձեզ նույնքան անհրաժեշտ է, որքան նրան: Նա ուսումնասիրում է կյանքն ու նրա բազմապիսի երևույթները, որպեսզի դրանցից ճիշտ ու անաչառ եզրակացության գա, որպեսզի դրանց քննադատության ու վերլուծման ժամանակ հենվի իր կենսաճանաչողության վրա և դրանով իսկ հնարավորին չափ ճիշտ հիմքի վրա լինի կանգնած: Հաճախ դուք խոսում եք հասարակական հարցերի մասին, ձեր հետևություններն եք անում, ձեր եզրակացությունները, բայց այդ ամենը դուք վերցնում եք ուրիշներից, հաճախ այնպիսի մարդկանցից, որոնք իրենք էլ ոչինչ չգիտեն և իրենց հերթին օգտվում են ուրիշների մտքերից: Եվ, բնականաբար, դուք հանգում եք անճիշտ հետևությունների, սխալ եզրակացությունների: Ճիշտ այնպես, ինչպես հիմա դուք ճիշտ չեք դատում Անդրեյ Պետրովիչ Կուրբատովի մասին:

Այս քարոզը ֆրոյլայն Ստելլան ուղղեց գլխավորապես Օսվալդ Գեբլերին և Հայնրիխ Բերգմանին, երբ սրանք բավական խիստ արտահայտություններով իրենց կարծիքը հայտնեցին ռուս ուսանողի մասին:

Օսվալդ Գեբլերը և Հայնրիխ Բերգմանը հարցական հայացքով նայեցին իրար. այդ ինչպե՞ս է, որ ֆրոյլայն Ստելլան այդպիսի **գովասանական** հետևության է եկել Անդրեյ Պետրովիչի մասին, իսկ իրենց՝ երկուսի մասին՝ ոչ **գովասանական**: Եվ նրանք երկուսն էլ մտածեցին, թե այստեղ հավանորեն մեղավոր է Անդրեյ Կուրբատովը, այդ կասկածելի անձը, որի մասին իրենք այնքան վատ կարծիքի էին:

Իսկ Անդրեյ Պետրովիչ Կուրբատովը շարունակում էր ամեն օր աշխատել գործարանում, պարոն Ռիզեմանի գործարանում, և ոչ ոք այդ չէր արգելում, որքան էլ բարոյազուրկ ու վտանգավոր անձ թվար նա Ռիզեմանի ընտանիքի բոլոր ծանոթներին:

6

Շաբաթ առ շաբաթ Ստելլա Ռիզեմանն ու Անդրեյ Կուրբատովն ավելի հաճախ էին հանդիպում իրար, օրըստօրե նրանք հոգեպես ավելի էին մտերմանում: Անդրեյ Պետրովիչի համար երևան եկավ մի նոր աշակերտուհի, իսկ Ստելլա Ռիզեմանի համար՝ ընկեր ու բարեկամ: Եվ որպիսի՜ ջանասիրությամբ էր պարապում այդ նոր աշակերտուհին, ինչպիսի՜ առաջադիմություն էր ցույց տալիս նա: Եվ նրա ընկերն ու բարեկամը ինչպիսի՜ հոգատարությամբ էր հետևում աղջկա հոգևոր զարգացմանն ու աճմանը, ինչպե՜ս էր ձգտում նրա մտքի և սրտի մեջ նորանոր ձայներ արթնացնել, նախկին մթնոլորտից փոխադրել նրան մի ուրիշ մթնոլորտ, որտեղ թարմություն էր բուրում, որտեղ շնչելն ավելի դյուրին էր:

Նրանց բարեկամությունն աննկատ չմնաց ընտանիքում և հասարակության մեջ: Ո՜չ, այդ բարեկամությանը հետևում էին հարաճուն զարմանքով, սրտնեղությամբ, խանդով, իսկ հետո էլ արդեն նույնիսկ տագնապով ու վախով: Բայց որովհետև Ստելլան բավական ուժեղ բնավորություն ու կայունություն ուներ և կարող էր պաշտպանել իր ազատությունը, որովհետև մոր փնթփնթոցն ու խրատները նրա վրա չէին ազդում այնպես, ինչպես և փեսացուի մանր-մունր խանդալից կշտամբանքներն ու Ռիտայի ծաղրը, ապա շրջապատն անզոր էր խանգարելու այդ անցանկալի բարեկամությունը, որին կարող էր վերջ տալ միայն ռուս ուսանողի մեկնումը ամառային արձակուրդից հետո:

Ստելլայի օրվա զբաղմունքների կարգն զգալիորեն փոխվեց: Առավոտները նա ավելի շուտ էր վեր կենում, քիչ էր հետաքրքրվում արդուզարդով, ավելի քիչ էր երևում քաղաքի խանութներում, սակավ էր այցելում ծանոթներին, մոռացության էր տվել ձիով կամ հեծանիվով պտույտի դուրս գալը, խույս էր տալիս իր շրջանի ջահել աղջիկներից և համարյա լիովին ազատվել էր մոր մոտ ձեռագործային պարտականություններ կատարելուց: Այս ամենին փոխարինելու էր եկել մտավոր աշխատանքը՝ Կուրբատովի գրքերի ընթերցանությունը և մտքերի մշտական աշխույժ փոխանակությունը նրա հետ: Միայն իր փեսացուին էր, որ Ստելլան ժամանակ և ուշադրություն էր հատկացնում, այն էլ ավելի պակաս, քան առաջ, այնպես որ պարոն Գեբլերի կարծիքով ինքը պատճառներ ուներ գանգատվելու, թե Ստելլան իրեն բանի տեղ չի դնում: Այդ գանգատները, պետք է ասել, անարձագանք չէին մնում. աղջիկն աշխատում էր իր մեղքը հարթել կրկնապատկված քնքշությամբ և փեսացուի հետ պահպանել նախկին հարաբերությունները: Բայց շուտով արդեն նա չէր կարող թաքցնել, որ իր հոգին, իր ամբողջ ներքին կյանքը ասես երկու մասի է բաժանվել, որ իր վրա իշխում են նաև ուրիշ ուժեր ու ազդեցություններ. նա նորից փեսացուի նկատմամբ նույն սխալներն էր գործում և նոր գանգատների առիթ տալիս:

Ստելլան հաստատ համոզված էր, որ իրեն Անդրեյ Պետրովիչի հետ միացնում է միայն հոգեկան կապը, որ իրենց մերձեցումը տեղի է ունեցել միայն գաղափարական հիմունքով, որ իրենց միջև ծագած, աստիճանաբար ամրապնդված և այժմ տիրապետող դարձած փոխհարաբերությունը միայն արտաքին, գործնական բնույթ ունի: Այս համոզմունքը աղջկան վստահություն էր ներշնչում

իր նկատմամբ, թույլ էր տալիս իր հարաբերությունները Կուրբատովի հետ համարել միանգամայն օրինաչափ, բնական և քաջաբար հանդես գալ պաշտպանելու իրեն նրանց դեմ, ովքեր այդ հարաբերությունների մեջ ինչ-որ ուրիշ բան էին տեսնում և ինչ-որ կասկածներ հայտնում: Բայց այն ուժը, համարձակությունն ու ինքնավստահությունը, որ ծնունդ էին առել այդ համոզմունքից, աստիճանաբար աղջկան ավելի հեռուն տարան, քան նա կարող էր մտածել: Դրանք նրան մի ուրիշ մարդ դարձրին: Դրանք նրա մեջ հարուցեցին այնպիսի ձգտումներ ու պահանջներ, որոնց վրա ինքն առաջ միայն կծիծաղեր գլուխն օրորելով: Նա աճելով դարձել էր մի խիզախ քննադատ, որ պատրաստ էր վիճելու և՛ ինքն իր հետ, և՛ հասարակության հետ: Անդրեյ Պետրովիչի հետ ունեցած զրույցները, նրա օրինակը, նրա ազդեցությունը Ստելլայի հոգում հետք կթողնեին նույնիսկ եթե նրա մեջ այդպիսի համոզմունք չլիներ: Բայց այդ դեպքում աղջիկն իր մեջ ոչ ուժ կգտներ, ոչ վստահություն, որպեսզի կարևոր, վճռական քայլն աներ: Այն դեպքում նա կկասկածեր ինքն իրեն, այն միտքը, որ իրեն ինչ-որ ուրիշ մղումներ են ղեկավարում, կկասեցներ նրան, կստիպեր տատանվել իր որոշման մեջ:

Բայց այժմ այնպես պատահեց, որ Ստելլան մի անգամ իր բարեկամին դիմեց այնպիսի խոսքերով, որոնք շատ զարմացրին տղային, համարյա վախեցրին: Զարմանալին այն մտքերը չէին, որ Ստելլան արտահայտեց Անդրեյ Պետրովիչին,— դրանք նրանց հոգեկան շփման պտուղն էին, աղջկա հոգեկան զարգացման պտուղը,— զարմանալի էին այն գործնական հետևությունները, որ աղջիկն անում էր այդ մտքերից, զարմանալի էր այն, թե ինչպես են այդ մտքերը նրա գլխում աճելով ռեալ գործ դարձել: Կուրբատովին ապշեցրեց աղջկա վճռականությունն ու համարձակությունը, նրա ցանկությունը՝ արմատապես փոխել իր կյանքը:

— Անդրեյ Պետրովիչ, ես ցանկանում եմ մարդ դառնալ,— սկսեց Ստելլան:— Ես ամաչում եմ շարունակել այսպիսի կյանքը: Չեմ ուզում ուրիշների հաշվին ապրել... Օգնեցեք ինձ մի բարի խորհուրդով, Անդրեյ Պետրովիչ:

Ստելլան, ինչպես նկատեց Անդրեյ Պետրովիչը, ասում էր հենց իր՝ ուսանողի սեփական խոսքերը և, ըստ երևույթին, դա պատահականություն չէր: Թվում էր, թե աղջիկն ուզում է դրանով ազդել իր ղեկավարի ու դաստիարակի վրա և ստանալ այն խորհուրդը, որի կարիքն ուներ ինքը:

— Բայց ի՞նչ մտադրություն ունեք դուք,— հարցրեց Անդրեյ Պետրովիչը մի զննական հայացք գցելով աղջկա հանգիստ, համարյա պաղ դեմքին:

— Ես կցանկանայի դառնալ աշխատանքի մարդ, այնպես, ինչպիսին դուք եք: Առանց աշխատանքի ես ապրել չեմ կարող ո՛չ հիմա, ո՛չ էլ հետագայում: Ես հաստատ որոշել եմ, որ իմ կյանքը պետք է բովանդակություն ստանա: Ես ծարավի եմ աշխատանքի, գործի, նպատակասլաց աշխատանքի և օգտակար գործի:

— Օրինա՞կ:

— Այդ ինձ համար էլ դեռ պարզ չէ: Հենց դրա համար էլ ձեր խորհուրդն եմ հարցնում... Ես մանկավարժ կդառնայի ձեզ պես,— սրա մասին ամենից ավելի եմ մտածել,— բայց եկել եմ այն եզրակացության, որ չունեմ այդ գործի համար անհրաժեշտ հատկությունները, ամենից առաջ՝ համբերություն, ձեր համբերությունը... Իսկ որովհետև ես կուզենայի լիարժեք աշխատող դառնալ, հրաժարվեցի իմ այդ մտքից...Անդրեյ Պետրովիչ, ի՞նչ զբաղմունք խորհուրդ կտայիք ինձ ընտրել:

— Ինչ զբաղմո՞ւնք... Բայց չէ՞ որ դուք ամուսնանում եք, Ստելլա Մարտինովնա:

— Այո, բայց դա չի կարող խանգարել ինձ զբաղմունք ու աշխատանք ընտրել: Ես չեմ ցանկանում ամուսնությունը կյանքի նպատակի պես բան դարձնել... այժմ արդեն չեմ ցանկանում, Անդրեյ Պետրովիչ:

Ֆրոյլայն Ռիզեմանը խոսում էր այնպիսի հանդարտ, գործնական տոնով, որ հուզմունքով համակված Կուրբատովն ստիպված էր մտքերը ժողովել, որպեսզի խորհի նրա ասածի մասին և հասկանա նրա տրամադրությունը:

— Իսկ ինչպե՞ս եք մտածում հաղթահարել այն խոչընդոտները, որոնք, անտարակույս, կստեղծի ձեզ համար ամուսնությունը,— հարցրեց նա վերջապես։— Ձեր ամուսինը, խոշոր վաճառական Գեբլերը, ես կարծում եմ, չի կարող հաշտվել այն բանի հետ, որ իր կինը, ապրելով իր հետ նույն հարկի տակ, ծառայում է ինչ-որ մի տեղ, ունի ինչ-որ պրոֆեսիա։ Դա ուղղակի կհակասեր այն մտածողությանն կենսաձևին, որ ընդունված են նրա հասարակության մեջ և որոնց ազդեցության տակ է գտնվում ինքը։

— Նա պետք է հաշտվի դրա հետ։

— Որովհետև սիրո՞ւմ է ձեզ։

— Այո։ Որովհետև ուրիշ կերպ ես չեմ կարող և չեմ ցանկանա ապրել նրա հետ։

— Բայց չէ՞ որ բարձրագույն կրթություն պահանջող ամեն մի պրոֆեսիայի համար,— իսկ դուք երևի այդպիսի պրոֆեսիա նկատի ունեք,— նախապատրաստություն է հարկավոր, իսկ դա մի քանի տարով ձեզ կանջատեր ձեր փեսացուից կամ ամուսնուց։ Դուք կարծում եք նա դրա՞ն էլ կհամաձայնի։

— Նա պետք է համաձայնի, եթե ինձ սիրում է, եթե ընդհանրապես ուզում է, որ մենք միասին լինենք։

— Դուք ուզում եք այդպիսի պայմա՞ն դնել նրա առաջ։

— Այո։

— Իսկ մտածե՞լ եք, թե ինչ կարող է լինել, եթե նա չընդունի ձեր պայմանը։

Ստելլան շրթունքները սեղմեց և հայացքը ցած գցեց։ Նրա հոնքերը կիտվեցին, բերանի անկյուններում ծալքեր գոյացան։ Խոսակիցներն, ըստ երևույթին, մոտեցել էին գործի ամենադժվար կողմին։

— Այո, Անդրեյ Պետրովիչ, ես մտածել եմ դրա մասին և կարծում եմ կարող եմ հաստատ ու անսասան մնալ իմ որոշման մեջ, որքան էլ այդ ծանր լինի ինձ համար։ Բայց ես դեռ այդպիսի հետևանքների երկյուղ չունեմ, հույս ունեմ, որ նպատակիս կհասնեմ խաղաղ ճանապարհով, առանց այդպիսի ցնցումների։ Ես, թանկագին բարեկամս, համառորեն կպայքարեմ իմ շրջապատի բոլոր նախապաշարմունքների դեմ և նրանց կամքին հակառակ վերջին քայլը կանեմ միայն այն ժամանակ, երբ մյուս բոլոր զենքերն արդեն օգտագործված կլինեն, մյուս բոլոր միջոցները՝ փորձված։

— Դուք ստիպված կլինեք պայքարել ոչ միայն ձեր փեսացուի դեմ, այլև ձեր ծնողների, ծանոթների և, վերջապես, ամբողջ հասարակության դեմ, որը կանգնած է նրանց թիկունքում։ Դուք կարծո՞ւմ եք, որ կարող եք անել այդ, Ստելլա Մարտինովնա, հույս ունե՞ք որ ձեր ուժն ու հաստատակամությունը կբավականացնի այդպիսի պայքարի համար, որ դուք հաղթանակի կհասնեք։

— Այո, ես դրանում վստահ եմ։

— Իսկ վստա՞հ եք նաև, որ ձեր որոշումը վաղանցուկ պոռթկումի, մտացածին հրապուրանքի արդյունք չէ, որ այն հիմնված է հասուն համոզմունքի վրա, գործունեության իրական ծարավի, աշխատանքի սիրո վրա։ Եվ, վերջապես, արդյոք հաստա՞տ համոզված եք, որ բավականաչափ ուժ ու հաստատակամություն կունենաք մշտական գործնական աշխատանքի համար, որ չի սպառվի ձեր հետաքրքրությունը, չեք հոգնի, չեք թուլանա։ Արդյո՞ք դուք ափսոսանքով ետ չեք նայի, հիշելով, թե ինչեր եք կրել դուք և ինչ եք զոհաբերել հասնելու համար մի նպատակի, որը հուսախաբ է արել ձեզ և սպասված բավականությունը չի տալիս ձեզ, որովհետև ձեզանից շատ ավելին է պահանջում, քան դուք կարող եք տալ։

— Անդրեյ Պետրովիչ, ես վստահ եմ, որ դրա համար էլ իմ արիությունն ու տոկունությունը կբավականացնի։

— Այս դեպքում՝ հառա՛ջ, Ստելլա Մարտինովնա, համարձակորեն հառա՛ջ: Ես հավատում եմ ձեր ուժերին, հավատում եմ ձեր հաղթանակին, հաջողություն եմ ցանկանում ձեզ:

Եվ ասես վայր ընկավ մի քող, որ շրջապատում էր Անդրեյ Պետրովիչին, չքացավ նրա պաղ, զգաստ շրջահայացությունն ու զսպվածությունը, նրա խանդավառ աչքերը շողացին, ձայնի մեջ հնչեց հաղթանակի հրճվանք ու հպարտություն: Իր բանվորական կոշտ ձեռքով նա բռնեց աղջկա նուրբ ձեռքը և սեղմեց, այդ սեղմումի մեջ դնելով իր ամբողջ ընկերական, բարեկամական զգացմունքը, իր ամբողջ եղբայրական նվիրվածությունը...

— Անդրեյ Պետրովիչ, դուք այս չէի՞ք սպասում ինձնից,— հարցրեց Ստելլան նրան դարձնելով իր բոցկլտուն դեմքը և շողշողուն աչքերը:

— Սպասում էի,— պատասխանեց Կուրբատովը, բայց չէի կարծում, թե այս ամենը տեղի կունենա այսպես շուտ ու հանկարծակի, չէի կարծում, որ դուք այդքան վճռական կլինեք: Ես տեսնում էի, թե ինչպիսի արագությամբ ու հաջողությամբ եք դուք առաջադիմում, զարմանում էի, թե ինչպիսի աշխույժով եք ամեն ինչ ընկալում ու յուրացնում, բայց չէի ենթադրում, թե ձեր համարձակությունն ու կամքի ուժն այդքան մեծ են:

— Դրա համար էլ ես մեծ չափով ձեզ եմ պարտական: Գիտե՞ք, թե ինչն էր առաջ մղում ինձ, կոփում իմ կամքը, եռանդ ու քաջություն տալիս ինձ... Այն, որ դուք բանվոր դարձաք, Անդրեյ Պետրովիչ:

— Մի՞թե: Բայց չէ՞ որ դրա համար մի առանձին խիզախություն ու արիություն չէր պահանջվում:

— Ուրեմն՝ առավել ևս հարկավոր էր անձնվիրություն, գաղափարական պոռթկում, իսկ ամենից առաջ՝ սեր: Մարդկանց և կյանքի նկատմամբ ունեցած ձեր սերը, Անդրեյ Պետրովիչ, այդ սերը, որ ավելի թանկ է ամեն մի անձնական էգոիստական սիրուց, ինձ օգնեց հոգեպես հասունանալ, ներքին ուժ տվեց ինձ, որի շնորհիվ էլ իմ մեջ ծագեց վճռական քայլի միտքը:

Եվ, ասես իրեն պարտավոր զգալով հաշիվ տալ Անդրեյ Պետրովիչին, իր դաստիարակին ու ղեկավարին ուսման ընթացքում, Ստելլան սկսեց մանրամասն բացատրել, թե ինչպես ընթացավ իր հոգեկան զարգացումը: Աղջիկը պատմեց, որ ինքը առաջ էլ բնազդաբար, անգիտակցորեն շատ բան էր ժխտում իրեն շրջապատող միջավայրից. շատ երևույթներ, բարքեր, սովորություններ, հայացքներ նրա մեջ բողոք էին առաջացնում, ձգտում էին հարուցում դուրս գալու դեպի ազատ տարածություն, դեպի ազատ օդ: Բայց քանի որ ինքը, հետևելով իր համար միս ու արյուն դարձած սովորական հասկացողություններին, գոյություն ունեցող կենսաձևը համարում էր հավերժական, անսասան ու անխախտելի, ապա և վարվում էր այնպես, ինչպես բոլորն են վարվում, այսինքն հաշտվում էր այդ կենսաձևի հետ, ընդունում էր այն այնպես, ինչպես կար, չէր քննադատում ու չէր հակադրվում: Բայց ահա երևան եկավ Անդրեյ Պետրովիչը որպես պատգամաբեր մինչ-որ բոլորովին ուրիշ աշխարհի, զգալիորեն փոփոխված, այնպիսի մի աշխարհի, որը դեռևս մեծ չափով հանդիսանում է միայն մտքերի, գաղափարների աշխարհ, ոգու թագավորություն: Եվ ահա այնտեղից այնպիսի մի պայծառ լույս շողաց, այնպիսի մի թարմ շունչ փչեց, որ աղջիկը կարճ տատանումից հետո մտավ այդ աշխարհը՝ ձգտելով իրավունք նվաճել այդ նոր աշխարհի բնակիչն ու քաղաքացին լինելու: Նա արագորեն սովորեց տեսնել, լսել, կողմնորոշվել այդ աշխարհում, սովորեց մտածել: Իսկ հիմա նա, իր ասելով, այնպես է վարժվել նոր կյանքին, այնպես է հարազատացել նրան, որ հին կյանքին վերադառնալ չի կարող և ոչ մի րոպե, և հենց միայն դրա մասին մտածելը իրեն թվում է հանցագործություն իր իսկ դեմ, այն նոր աշխարհի դեմ, որի մեջ ինքն ապրում է:

— Ես արդեն գործարանատեր Ռիզեմանի դուստրը չեմ,— խոսքը վերջացրեց Ստելլան,— և չեմ կարող վաճառական Գեբլերի կինը լինել: Այն իմաստով, ինչպես նրանք երկուսն էլ հասկանում են: Եթե նրանք դեռ ցանկանում են ինձ իրենց մոտիկ մարդ համարել, պետք է ինձ թողնեն իմ սեփական աշխարհում, այլ կերպ՝ բոլորովին կզրկվեն ինձնից: Ես այլևս չեմ կամենում նրանց կամքով կամ նրանց հասարակության կամքով միայն մանեկեն լինել դերձակուհու ու մոդիստուհու համար, չեմ ցանկանում խաղալիք լինել ծնողներիս կամ ամուսնուս ձեռքին, չեմ ուզում սուրճի

սեղանի առաջ նստած բամբասանքներ անել, չեմ ցանկանում անբան բոռ լինել աշխատավոր մեղուների մեջ, լինել պարազիտ, որ ապրում է ուրիշների աշխատանքով: Ինձ ձանձրացրել է այն աշխարհը, որ միջնապատերով բաժանված է մի շարք խցերի, որոնք կոչվում են հյուրասենյակ, զարդասենյակ, մանկական սենյակ...Ես ուզում եմ ապրել ազատության մեջ, ազատ երկնքի տակ, արևի տակ, ազատ հողմի առաջ, ես ուզում եմ ազատորեն շուրջս նայել, ազատորեն շարժվել... Անդրեյ Պետրովիչ, ես ձեզ հետ միասին կգնամ այդ լայնարձակ աշխարհը:

— Դուք ցանկանում եք ուսանողուհի՞ դառնալ, Ստելլա Մարտինովնա:

— Այո:

— Ամուսնությունից առա՞ջ, թե՞ հետո:

— Կարծում եմ՝ նախքան ամուսնանալս: Այդ դեպքում ես այնքան էլ ամուր կապանքներ չեմ ունենա ոտքերիս:

— Դուք ինձնից խորհուրդ էիք հարցնում, թե ի՞նչ սովորեք, ի՞նչ մասնագիտություն ընտրեք: Ես ձեզ կասեմ իմ կարծիքը, բայց նկատի ունեցեք, որ այդպիսի խորհուրդները մեծ արժեք չունեն: Դուք ավելի ճիշտ վարված կլինեք, եթե ինքներդ որոշեիք ձեր ապագա մասնագիտությունը, այն էլ միայն այն ժամանակ, երբ արդեն լավ ուսումնասիրած կլինեիք գիտության աշխարհը... Բացի մանկավարժությունից ուրիշ ի՞նչ աշխատանքի մասին եք մտածել դուք:

— Ես կուզենայի բժիշկ դառնալ, ինչպես դուք:

— Դուք, իհարկե, պատկերացնում եք այդ մասնագիտության բոլոր դժվարություններն ու առանձնահատկությունները և հույս ունեք, որ կհաղթահարեք այդ ամենը:

— Այո:

— Այդ դեպքում սովորեցեք բժշկական գիտությունը, Ստելլա Մարտինովնա: Այդտեղ դուք կգտնեք գործունեության լայն ասպարեզ և օգտակար, ազնիվ աշխատանք... Դուք մտածում եք Պետերբո՞ւրգ գնալ ուսանելու:

— Այո:

— Ե՞րբ:

— Շուտով: Ձեր գնալուց քիչ հետո:

7

Անդրեյ Կուրբատովը Ռիզեմանների տանը նորանոր դժգոհություններ էր առաջացնում: Նա շարունակ ավելացնում էր իր մեղանչումների բեռը, բայց զղջումի ամենափոքր նշան անգամ չէր ցույց տալիս և չէր ձգտում հարթել դրանք, թեև շատ լավ հասկանում էր, թե ինչպես են դատապարտում իրեն: Անդրեյ Պետրովիչի բանը երևի այնքան էլ լավ չէր լինի, եթե Էբերհարդի վերաքննությունների կապակցությամբ նրա վրա մեծ հույսեր չլինեին դրված: Տանը նկատում էին, որ տղան Կուրբատովի ղեկավարությամբ իսկապես սովորում է և առաջադիմում: Այդ գարշելի մարդը, անտարակույս, փորձված դասատու էր, բայց որպես դաստիարակ ու որպես հասարակության մարդ բանի պետք չէր: Այսպիսին էր Ռիզեման ընտանիքի ընդհանուր կարծիքը, իհարկե, բացառությամբ Ստելլայի:

Ի՜նչ դաստիարակ է նա եթե, օրինակ, իր սանին ներշնչում է, որ նա կարող է գյուղական երեխաների հետ շփվել ու խաղալ այնպես, ինչպես լավ հասարակության զավակ իր հասակակիցների հետ: Որպես թե դա ամենևին էլ անվայել բան չէ կամ արգելված, որպես թե դա նույնիսկ ցանկալի է, որովհետև, իբր թե, գյուղական երեխաները շատ ավելի լավն են ու խելացի, քան պարոններինը:

Այսպես էր բացատրում ռեպետիտորն իր սանին, երբ նա իր դասային գոռոզությունն էր ցուցաբերում, արհամարհաբար էր վերաբերվում գյուղացիների տղաների հետ:

— Բայց հայրիկս ու մայրիկս ինձ թույլ չեն տալիս խաղալ գյուղական երեխաների հետ,— պատասխանեց գործարանատիրոջ որդին:

— Ինչո՞ւ:

— Չէ՞ որ նրանք ռամիկներ են:

— Իսկ դո՞ւ:

— Ես աղայի տղա եմ:

— Ուրեմն դու նրանցից լա՞վն ես:

— Այո:

— Ինչո՞վ ես ավելի լավ:

Տղան պատասխան գտնել չի կարողանում:

— Դու նրանցից ոչ լավն ես, ոչ էլ վատ, դու միայն նրանցից հարուստ ես,— խրատում է այդ նմուշ դաստիարակը,— ահա միակ տարբերությունը քո և նրանց միջև, գյուղացու և աղայի միջև: Բայց այդ տարբերությունը հիմք չի տալիս գոռոզանալու նրանց առաջ, որովհետև քո հարստությունը դու չես վաստակել, իսկ նրանց աղքատությունը իրենց մեղքը չէ: Դու էլ նրանց պես ծնվել ես առանց մի գրոշ ունենալու:

Այս դեռ բավական չէ: Աշակերտը հարցնում է. քաղաքո՞ւմ էլ ինքը կարող է խաղալ փողոցի երեխաների հետ, և իմաստուն դաստիարակը պատասխանում է ամենայն հանգստությամբ:

— Իսկ ինչո՞ւ չպիտի խաղաս նրանց հետ:

— Բայց նրանք այնպե՛ս գջլոտված ու կեղտոտ են,— գոչում է տղան:

— Հենց դրա համար էլ դու նրանց հետ չե՞ս խաղում:

— Այո:

— Իսկ եթե նրանք էլ քեզ պես լավ հագնված լինեին, դու նրանց հետ ընկերություն կանեի՞ր:

— Երևի:

— Դու կարծում ես նրանցից ամեն մեկը գոհունակությամբ չէ՞ր հագնի այնպիսի լավ շոր, որ դու ունես:

— Երևի կհագներ:

— Իսկ ինչո՞ւ նրանք չեն հագնում:

— Նրանք այսպիսի շոր չունեն:

— Ինչո՞ւ չունեն:

— Նրանք չքավոր են:

— Իսկ դու ունես, որովհետև դու հարուստ ես… Տեսնո՞ւմ ես. նույն տարբերությունը, որ կա քո և գյուղական երեխաների միջև: Բայց քանի որ լավ հագուստի արժեքը ինքդ քո աշխատանքով չես վաստակել, ուրեմն և ոչ մի հիմք չունես գոռոզանալու փողոցի երեխաների առաջ, նրանց վատ համարելու և խորշելու նրանցից: Դու իրավացի չես նրանց նկատմամբ, որովհետև նրանք աղքատ են ո՛չ իրենց մեղքով: Իսկ ազնիվ մարդը պետք է արդարացի լինի ուրիշների նկատմամբ:

— Հայրիկս ու մայրիկս ասում են, որ ես նրանցից չարություններ կսովորեմ:

— Բայց հայրիկդ ու մայրիկդ գանգատվում են, որ դու ինքդ էլ բավական չարաճճի տղա ես:

— Եվ որ ես նրանցից զանազան վատ խոսքեր կսովորեմ,— ավելացրեց տղան:

— Իսկ հիմա դու խաղո՞ւմ ես փողոցային տղաների հետ, Էբերհարդ:

— Ոչ:

— Բայց և այնպես վատ խոսքեր շատ գիտես, որքան լսել եմ ես: Ումի՞ց ես սովորել հայհոյական խոսքերը, Էբերհարդ:

— Դպրոցի տղաներից:

— Այ, տեսնո՞ւմ ես: Իսկ դպրոցականները չէ՞ որ փողոցային և գյուղական երեխաներ չեն: Դե ուրեմն ինչո՞վ ես դու ավելի լավ այդ երեխաներից: Իսկ եթե դու իրոք ավելի լավը լինեիր, Էբերհարդ, գիտե՞ս ինչ պետք է անեիր: Դու պետք է միշտ նրանց հետ լինեիր, որպեսզի նրանց էլ լավ-լավ բաներ սովորեցնեիր: Այն ժամանակ դու վարված կլինեիր արդարացի և կատարած կլինեիր քո պարտականությունը նրանց հանդեպ:

Ահա թե ինչպիսի խենթ ու խելառ բարոյական սկզբունքներ էր ներշնչում իր աշակերտին այդ դաստիարակը: Ֆրոյլայն Ռիտան պատահաբար լսել էր նրանց խոսակցությունը, այդ ամենը ցասումից բորբոքված հայտնել էր ծնողներին, և Էբերհարդը, որին հայրն ու մայրը խիստ հարցաքննել էին, կարողացել էր միայն հաստատել նրա ասածները:

Լա՜վ դաստիարակ է: Նա ոչ միայն գործարանատեր Ռիզեմանի տղային ստիպել է մտերմանալ գյուղական գջլոտների և փողոցային տղաների հետ, այ և իր աշակերտին ներշնչել է, թե նրա ծնողների պահանջները ստահոդ են և դատապարտել է նրանց հայացքները: Միևնույն ժամանակ նա իր խրատները հաճախ իրական գործեր էր դարձնում և իր սանի հետ միասին, գյուղական երեխաներով շրջապատված, թափառում էր գյուղի փողոցներում, մտնում խղճուկ խրճիթները:

Ռիզեմաններն այլևս հաշտվել չէին ուզում նաև այն բանի հետ, որ իրենց ընտանեկան ուսուցիչն աշխատում է գործարանում:

Աստիճանաբար Ռիզեման հայրն էլ սկսեց համոզվել, որ դա, իսկապես, հակասում է ամեն կարգ ու կանոնի և անվայել բան է, և որ ինքը շատ ավելի լավ վարված կլիներ, եթե իր համաձայնությունը տված չլիներ դրան: Մանավանդ Ռիզեմանը շուտով նկատեց, որ պարոն թեկնածուն բանվորների հետ, նույնիսկ սևագործների ու աշակերտների հետ չափից ավելի սիրալիր ու բարեկամաբար է վարվում: Բանվորական վերնաշապիկը հագնելով՝ այդ մարդը բոլորովին մոռացել է, որ ինքը բանվորների մեջ է մտել հենց միայն զվարճության համար, որպես սոսկ վաղանցուկ մի քմահաճույք: Այս բանը վիրավորում էր պարոն Ռիզեմանին: Պարոն թեկնածուն չէր կարողանում պահպանել իր, հետևապես և գործարանատիրոջ դասային արժանապատվությունը հասարակ ժողովրդից ելած մարդկանց առաջ: Նա բոլորովին զուրկ էր հպարտության այն զգացմունքից, որն անհրաժեշտ սահմանագիծ է քաշում տարբեր շրջանների մարդկանց միջև: Բանվորները հիմա երևի իրար հետ փսփսում ու ծիծաղում են, թե՝ «Տե՜ս, ինչպիսի՜ հասարակ մարդու է իր տնային ուսուցիչ վարձել մեր տերը»: Իսկ այդ միտքը պարոն Ռիզեմանի համար անհանդուրժելի բան էր:

Սրա հետ միասին գործարանատերն արդեն սկսել էր գաղտուկ երկյուղ կրել այն բանից, ինչից սկզբում չէր վախենում. չլինի՞ թե ռուս ուսանողը բանվորների մեջ վատ սերմեր ցանի: Ճիշտ է, պարոն Ռիզեմանը ոչ մի որոշակի ապացույց չուներ, բայց հարաճուն սրտնեղությամբ նկատում էր, իսկ ինժեներն ու վարպետներն էլ հաստատում էին նրա դիտողությունները, որ Անդրեյ Պետրովիչը խիստ շատ է զրուցում բանվորների հետ, որ նա երբեմն կարծես ինչ-որ բաներ է քննարկում նրանց հետ, որ նրանց ինչ-որ բաներ է բացատրում ու սովորեցնում: Այդ զրույցների բովանդակությունը քիչ էր հայտնի, իսկ այն, ինչ հաջողվել էր իմանալ, կասկածելի ոչ մի բան չէր պարունակում: Այնուամենայնիվ պարոն Ռիզեմանը որպես զգույշ մարդ, որի վստահությունն արդեն խախտվել է, մտածեց, որ ավելի լավ է վտանգը կանխել, քան հետո ափսոսալ: Վերջին

ժամանակներս նա սկսել էր, որպես թե ի միջի այլոց, ակնարկել Անդրեյ Պետրովիչին, թե շատ ցանկալի կլիներ, եթե նա, վերջապես, վայր գցեր բանվորական վերնաշապիկը և նորից դառնար միայն պարոն Ռիզեմանի որդու ռեպետիտորը:

Բայց Ռիզեմանի ընտանիքում ամենամեծ դժգոհություն, ուղղակի կատաղություն էր առաջացնում այն ազդեցությունը, որ ռուս ուսանողն ուներ գործարանատիրոջ ավագ դստեր, վաճառական պարոն Գեբլերի հարսնացուի վրա: Այդ ազդեցությունն ավելի ու ավելի վտանգավոր էր դառնում և չլսված դժբախտություն էր սպառնում: Ստելլան ոչ միայն կամաց-կամաց հեռացավ այն ամենից, ինչ մինչև այժմ կազմում էր նրա կյանքի և՛ բովանդակությունը, և՛ արտաքին կողմը, ոչ միայն սկսել էր կտրվել իր ծանոթներից, հրաժարվում էր նախկին զբաղմունքներից ու զվարճություններից, այլև ազատվել էր տնային ու ընտանեկան ընդունված բոլոր կարգ ու կանոններից, թուլացրել էր այն կապերը, որոնք նրան միացնում էին ծնողների ու քրոջ հետ և նույնիսկ ի զարմանս և ի սարսափ շրջապատի՝ սկսել էր անփույթ ձեռքով քանդել այն կապերը, որոնք նրան միացնում էին փեսացուի հետ: Նա նույնիսկ չէր փորձում Օսվալդ Գեբլերից թաքցնել իր հոգեկցությունը և հայացքների ընդհանրությունը Անդրեյ Պետրովիչի հետ, նա երբեմն կարծես հենց դիտմամբ դրանով գրգռում էր փեսացուին և քննադատելով այն հայացքներն ու դատողությունները, որ պաշտպանում էր Գեբլերը, հաճախ էր աշխատում նրան սկզբունքային վեճի մեջ քաշել, որպեսզի ցույց տա, թե որքան շատ են տարբերվում իրենց կարծիքները կյանքի հիմնական հարցերի վերաբերյալ: Ճիշտ է, այդպիսի կատաղի վեճերին, որոնք երբեմն համարյա կռվի էին փոխվում, սովորաբար հաջորդում էր քնքուշ հաշտությունը և երկու կողմերն էլ ցավում էին պատահածի համար: Բայց ամեն ոք, ով ուշադիր հայացքով հետևում էր երիտասարդների փոխհարաբերություններին, տեսնում էր, որ դրությունն այնքան էլ փայլուն չէ և նրանց ապագան շատ մռայլ ու տխուր է պատկերանում:

Եվ ահա վրա հասավ վճռական օրը, վճռական և՛ երիտասարդ զույգի համար, և՛ պարոն Ռիզեմանի, և՛ Անդրեյ Կուրբատովի համար:

Ստելլա Ռիզեմանն իր փեսացուին հայտնեց, որ ինքը որոշել է առայժմ մնալ Ստելլա Ռիզեման, իսկ հետո, տիկին Գեբլեր դառնալով, էլի լինել Ստելլա Ռիզեման և նրա հետ ապրել նույնպես որպես Ստելլա Ռիզեման, ո՛չ որպես գործարանատեր Ռիզեմանի դուստր, այլ պարզապես, որպես Ստելլա Ռիզեման:

— Ես ուզում եմ **ինքս ինձ հետ լինել ոչ թե քեզ հետ**,— ասաց Ստելլա Ռիզեմանն իր ապագա ամուսնուն:

Պարոն Օսվալդ Գեբլերը հիմար մարդ չէր: Նա որոշ բան սովորել էր, որոշ բան տեսել, որոշ բան լսել, որոշ բան կարդացել էր: Նա դուրս էր գրում գերմանական երկու քաղաքական թերթ, որոնցից մեկը լիբերալ ուղղության էր, մյուսը՝ պահպանողական, երբեմն նույնիսկ այդ թերթերը ձեռքն էր առնում ու կարդում: Երբեմն նրան կարող էր ցնծության մեջ գցել Մաքսիմիլիան Գարդինի հրապարակած «Ցուկուն ֆտ» հանդեսի մի որևէ կորովի հոդված, մանավանդ եթե այնտեղ գովաբանում ու պաշտպանում էին հանգուցյալ Բիսմարկին, իսկ իրենց ակումբում Օսվալդ Գեբլերը համաշխարհային քաղաքականությունը լավ հասկացող մարդու համբավ ուներ, մանավանդ պատերազմի ու խաղաղության, ինչպես և առօրյա հարցերում: Քաղաքական վեճերը, որոնց նա մասնակցում էր, միշտ էլ շատ աշխույժ էին անցնում: Նա խիզախում էր դեմ դուրս գալու նույնիսկ տեղական գերմաներեն թերթի խմբագրին: Պարոն Օսվալդ Գեբլերը նաև գրքեր էր կարդում, այնքան էլ ո՛չ վատ գրքեր: Գրախանութներից նրան ուղարկվող վեպերը միշտ վերաբերում էին «մոդայիկների» թվին, եթե, ի դեպ, այն կարգի վեպեր չէին, որոնք պատշաճ է կարդալ միայն ամուրիններին: Պարոն Օսվալդ Գեբլերը թատրոն էլ էր հաճախում, ոչ միայն կիրակնօրյա ներկայացումներին, ինչպես մանրավաճառներն ու գործակատարներն են անում, այլև այն օրերին, երբ բեմադրում էին Զուդերման, Հաուպտման կամ Իբսեն: Եվ նա հասկանում էր այդ պիեսներում պատկերացվողը, համենայն դեպս նրանց վերաբերյալ արտահայտում էր մտքեր ու դատողություններ, որոնք հաճախ նույնիսկ տարբերվում էին տեղական գերմաներեն թերթի թատերական քննադատի կարծիքից: Եվ, վերջապես, որ ամենագլխավորն է, պարոն Օսվալդ Գեբլերը բարձրաշխարհիկ մարդ էր և մարդկանց լավ ճանաչող: Նա մի սովորական փորձված

բոնվիվան[4] չէր, որոնց կոչում են «հասարակության հոգի», միջակ ճարպիկ կավալեր չէր, որը «դուր է գալիս» դամաներին, նա մի որոշ չափով յուրօրինակ միտք ուներ, յուրօրինակ հումոր, որի շնորհիվ հասարակության մեջ սրամիտ մարդու համբավ էր ստացել և այդ ո՛չ առանց հիմքի:

Պարոն Օսվալդ Գեբլերն, իրոք, հիմար մարդ չէր: Բայց և այնպես նա չէր հասկանում այն, ինչի մասին խոսում էր Ստելլա Ռիզեմանը: Նա Ստելլային չհասկացավ և այն ժամանակ, երբ աղջիկը ամենապարզ խոսքերով բացատրեց նրան, որ ուզում է մտնել Պետերբուրգի բժշկական դասընթացները, բժշկուհի դառնալ և այդ մասնագիտությամբ աշխատել նաև հետագայում, երբ պարոն Գեբլերի կինը կլինի: Պարոն Գեբլերին առանձնապես անհասկանալի էր, թե ինչ պատճառներ են դրդում Ստելլա Ռիզեմանին հետաձգել ամուսնությունն իր՝ Օսվալդ Գեբլերի հետ, և թե ինչ պատճառներ խոշոր վաճառական Օսվալդ Գեբլերի կնոջը կարող էին ստիպել աշխատել, երբ նա աշխատելու ոչ մի անհրաժեշտություն չէր ունենա: Չէ՞ որ աշխատում է միայն նա, ով ուրիշ կերպ իր գոյությունը պահել չի կարող:

Այդ ի՞նչ է նշանակում՝ «ես ուզում եմ ինքս վաստակել ինձ համար, վաստակել իմ աշխատանքով, չեմ ցանկանում ապրել ուրիշի աշխատանքով, չեմ ուզում, որ ուրիշներն ինձ համար աշխատեն, իսկ ես մնամ պարապ-սարապ, ես ուզում եմ մարդ լինել և ոչ թե պարազիտ»:

Պարոն Օսվալդ Գեբլերը երկար ժամանակ նայում էր իր հարսնացուին այնպիսի մի արտահայտությամբ, ասես կանգնած էր անլուծելի հանելուկի առաջ: Վերջապես նա մտածում էր և արտահայտեց այն, ինչի մասին ամենից առաջ ինչ ամենից առաջ հուզում էր նրան:

— Բայց հասկացիր, ի՞նչ կասեն իմ մասին մարդիկ: Ինքդ մտածիր, ի՞նչ կմտածեն իմ մասին, եթե ես իմ հարսնացուին թողնեմ մի քանի տարով գնա աստված գիտե թե ուր, եթե ես թույլ տամ իմ կնոջը աշխատել ինչ-որ բանի համար:

Թե ինչ կմտածեին մարդիկ Ստելլա Ռիզեմանի և տիկին Գեբլերի մասին՝ այս հարցը պարոն Գեբլերի գլխում ծագեց միայն երկրորդ հերթին: Ստելլան, իհարկե, այդ նկատեց:

— Բայց չէ՞ որ մեզ համար միևնույն է, թե մարդիկ ինչ կմտածեն մեր մասին,— ասաց Ստելլան:— Մենք հո ոչ մի վատ բան չենք անում:

Սակայն, ինչպես բացատրեց պարոն Գեբլերը, նրա համար ամենևին էլ միևնույն չէր, թե ինչ են մտածում իր մասին մարդիկ. նա չէր ուզում ծաղրի առարկա դառնալ նրանց համար: Նա գտնում էր, որ պետք է հոգ տանի հասարակության մեջ իր ունեցած դիրքի մասին, պահպանի իր բարի անունը:

Հարսնացուն պատասխանեց, թե պարոն Գեբլերի դիրքին ու բարի անվանը ոչ մի վտանգ չի սպառնում, բայց նրա խոսքերը փեսացուին ամենևին չհամոզեցին:

— Ես երբեք հիմար չեմ եղել և հիմար լինել չեմ ցանկանում,— գոչեց պարոն Գեբլերը՝ անողոքաբար գզգզելով իր հիանալի բեղերը: Այն նույն պարոն Գեբլերը, որն իր համար կանոն էր դարձրել մինչև ամուսնանալը կուրորեն կատարել իր հարսնացուի բոլոր քմահաճույքները, հանկարծ կատաղեց և նույնիսկ չմտածեց կատարել նրա ցանկությունը: Բայց նրա կատաղությունն ուղղված էր գլխավորապես նրա դեմ, ով, պարոն Գեբլերի կարծիքով, իր հարսնացուի գլուխն էր մտցրել այնպիսի մի ցանկություն, որը փեսացուն ոչ մի կերպ չէր կարող կատարել: Նա սկսեց մտովին նախատել, նզովել այդ մարդուն և իր զգացմունքներն արտահայտեց նաև բարձրաձայն, թեև մի քիչ ավելի մեղմ ձևերով:

— Ես դատի կտայի այդպիսի սադրիչին, ահա թե ինչի է արժանի նա,— գոչեց պարոն Գեբլերը աչքերը շողացնելով:— Եթե ես ու քո ծնողներն իմանայինք, որ նա այդպիսի ցնդաբանություններ է մտցնելու քո գլուխը, վաղուց արդեն նա չքված կլիներ այստեղից ստվերի պես: Դավաճանի մե՛կը: Գայթակղի՛չ, ռուս նիհիլի՛ստ:

---

[4] Բոնվիվան — մարդ, որ սիրում է ապրել իր հաճույքի համար, շքեղ, փարթամ, անհոգ: Ծ. Թ.

— Դու բոլորովին զուր ես մեղադրում կարգին մարդուն,— սառն հանգստությամբ ասաց ֆրոյլայն Ռիզեմանը:— Ես ազնվորեն ասում եմ քեզ, որ այդ որոշմանն եմ եկել ես ինքս, միանգամայն ինքնուրույն: Անդրեյ Պետրովիչն, ընդհակառակն, աշխատում էր զգուշացնել ինձ այդ քայլից, նկարագրելով դրա բոլոր հնարավոր հետևանքները:

— Ինչպիսի՞ կեղծավորություն,— վրդովված գոչեց պարոն Օսվալդ Գեբլերը:— Դա հո խորամանկություն է եղել, ուրիշ ոչինչ: Դու կարծում ես ինձ հայտնի չէ՞, թե ինչպիսի գաղտնի միսիոներական աշխատանք է կատարել նա քո նկատմամբ, ինչպես է աստիճանաբար թունավորել քո հոգին իր քայքայիչ ճառերով, իր հրձիգ լոզունգներով, իր արգելված գրքերով, ինչպես է քո գիտակցությունը թմրեցրել ամեն տեսակ քաղցր ուտոպիաներով, քեզ կուրացրել ամեն տեսակ ցնորամտության կեղծ շլացուցիչ փայլով, որպեսզի իր ցանցի մեջ գցի: Իսկ ինչ էլ որ չգիտեմ, այժմ կարող եմ ենթադրել. չէ՞ որ հիմա ես այդ ամենը լսում եմ քեզանից իմ սեփական ականջներով: Ես հո գիտեմ, թե ով է ներշնչել քեզ այդ ցնորքը, հասկանում եմ, թե ինչպես են քո ինքնասիրությունը շոյում «ֆրոյլայն դոկտոր» կամ «ֆրաու դոկտոր» բառերը... Համոզված եղիր, մենք ճանաչում ենք հիմունքների այդ գաղտնի ավերիչներին, հոգիների այդ մութ որսորդներին, որոնց ցանցի մեջ ես ընկել դու:

Պարոն Օսվալդ Գեբլերը, եթե ցանկանում էր, կարողանում էր խոսել շատ ազդու, պատկերավոր ու արտահայտիչ: Նա գործի էր դնում ակումբում ձեռք բերած իր ամբողջ պերճախոսությունը, որպեսզի հարսնացուի առաջ իրեն ցույց տա որպես սրամիտ մարդ, հաղթի նրան դիպուկ խոսքերով: Չէ՞ որ այդ պայքարի մեջ բարձրագույն պարգևն էր հարսնացուի փրկությունը վտանգավոր գայթակղիչի ճանկերից... Բայց, ավա՜ղ, «փրկիչը» շուտով համոզվեց, որ իր խոսքերը խեղճ խաբված աղջկա վրա շատ ավելի քիչ տպավորություն են թողնում, քան գայթակղիչի ճառերը: Ստելլան առաջվա պես իրեն պահում էր պաղ, վստահ և լսում էր համարյա վիրավորական հանգստությամբ:

— Այն աշխատանքի համար, որ Անդրեյ Պետրովիչ Կուրբատովը կատարել է ինձ հետ, ես միայն շնորհակալ եմ նրանից, որովհետև նա ինձ վատ բան չի սովորեցրել այլ՝ լավ բան,— ասաց նա վերջապես:— Եվ դու էլ պատճառներ չունես նրանից շնորհակալ չլինելու: Այն, ինչ տեղի է ունեցել, միևնույն է, երբևիցե պիտի տեղի ունենար և գուցե թե ավելի պակաս հարմար ժամանակի և ավելի անցանկալի ձևով: Անդրեյ Պետրովիչն օգնեց իմ հոգեկան արթնացմանը, բայց վաղ թե ուշ ես ինքս էլ կարթնանայի կամ նրա փոխարեն որևէ մեկ ուրիշը հրապարակ կգար: Համենայն դեպս հիմա դու կանգնած ես մի փաստի առաջ, որը փոխել չեն կարող ո՛չ մեղադրանքները, ո՛չ գանգատները:

— Նշանակում է դու հաստա՞տ ես որոշել:

— Անսասան:

— Իսկ մտածե՞լ ես դու, որ քո ծնողները երբեք քեզ չեն թույլատրի այդ:

— Այն ժամանակ ես այդ կանեմ առանց նրանց թույլտվության:

— Ինչպե՞ս կանես դու այդ: Չէ՞ որ դու ամբողջովին կախված ես քո ծնողներից: Ապրելու համար քեզ միջոցներ են հարկավոր:

— Կարծում եմ ես դրանից գլուխ կհանեմ: Ինչ անհրաժեշտ է, ես ինքս կվաստակեմ:

— Դու առանց իմ թույլտվության է՞լ կգնաս:

— Նաև առանց քո թույլտվության:

Պարոն Գեբլերին մի վայրկյան թվաց, թե իր առաջ կանգնած է մի մարդ, որը զրկվել է առողջ բանականությունից:

Պարոն Գեբլերն սկսեց սենյակում քայլել ու խորհել: Միշտ էլ օգտակար բան է հարցը լրջորեն ուսումնասիրել, խորհել ու քննարկել: Այդ այստեղ էլ բավական շուտ երևաց:

Պարոն Գեբլերը հանկարծ սկսեց ժպտալ: Նա ժպտում էր այնպես սիրալիր, այնպես մեղմ ու ներողամիտ, ճիշտ և ճիշտ հայրական ժպիտ... Տվյալ դրության մեջ այդպես ժպտալ կարող էր միայն այն մարդը, որը լիովին հանգստացել է, հաղթահարել է իր հոգսերն ու վտանգները, որը ամենաբարդ գործի մեջ եկել է մխիթարական հետևության:

Պարոն Գեբլերն իսկապես որ այդպիսի հետևության էր հանգել: Այժմ նա հասկացավ, որ իր առաջ առողջ բանականությամբ մարդ է կանգնած, բայց այդ մարդը **կին է**, այդ մարդը դեռ **երեխա է**:

Ստելլա Ռիզեմանի շուրթերով խոսում էր միայն կինը, միայն երեխան: Դա միայն կանացի տարօրինակություն է, մանկական քմահաճույք: Ե՛վ մեկը, և՛ մյուսը այնպե՛ս անցողիկ է, այնպե՛ս հեշտ է հաղթահարել: Բայց հարկավոր է մի քիչ համբերել: Հարկավոր է սպասել: Փուքը կիջնի, և ամեն ինչ կմոռանա: Վատագույն դեպքում պետք է ձևացնել, թե ամեն ինչ լուրջ ես համարում, բեկումն ինքն իրեն կգա: Բեկումը կգա հենց այն ժամանակ, երբ հարկ կլինի որոշումն իրագործել, ո՛չ ավելի ուշ: Հենց այն րոպեին, երբ Ստելլա Ռիզեմանը դռան բռնակը կբռնի, որպեսզի հեռանա հայրական տնից: Դե հո քարից չէ նա և ոչ էլ փայտից. մի՞թե նրա սիրտը չի ճմլվի այն մտքից, թե ինչ է կորցնում ինքը, ինչ է դեն շպրտում առանց երկար մտածելու, թե ինչ է սպասում իրեն առջևում: Կին, երեխա չէր լինի նա, եթե այդ րոպեին էլ չհասկանար, որ հենց միայն կամակորության պատճառով թողնում է եղեմը և գնում դեպի անպտուղ անապատ...

Բայց այդքան երկար սպասելու կարիք էլ չի լինի: Ստելլան երեխա է, նա մինչև դուռն էլ չի հասնի: Ավելի շուտ կդառնա: Չէ՞ որ իրեն սպասող պայքարը վեր է իր ուժերից: Պարոն Օսվալդ Գեբլերի գլխում չէր նստում, թե ինչպես կարող է Ստելլան, այդ կինը, այդ երեխան, չնայած ծնողների ու փեսացուի հորդորներին ու արգելքին, այդպիսի վճռական քայլ անել: Իսկ որպեսզի ծնողները համաձայնություն չտան, դրա մասին արդեն ինքը՝ պարոն Գեբլերը կհոգա, եթե ընդհանրապես իր միջամտության կարիքը լինի:

Պարոն Օսվալդ Գեբլերը անհոգ ժպտաց, ինչպես վայել է երջանիկ փեսացուին, քնքշորեն բռնեց հարսնացուի կզակը և սիրալիր, հայրական տոնով ասաց.

— Անուշի՛կ մանկիկս, այդ գործի մասին մենք մի ուրիշ անգամ կխոսենք: Դե հո այնքան էլ շտապ չէ: Իսկ հիմա, իմ անուշիկ, իմ թանկագին, ոսկե թռչնիկ, մի ուրիշ բանի մասին խոսենք...

Ստելլա Ռիզեմանը պարոն Գեբլերի քնքուշ ձեռքը ետ քաշեց իր երեսից և հարցրեց.

— Ինչո՞ւ ուրիշ բանի մասին: Ես ուզում եմ իմանալ քո վճիռը: Եվ ուզում եմ հենց հիմա իմանալ, որովհետև շտապում եմ:

— Բայց... բայց դու պետք է մտածելու ժամանակ տաս ինձ:

— Մտածելո՞ւ: Բայց մի՞ թե քեզ հարկավոր է մտածել: Կարծես ես չգիտեմ, որ դու արդեն ամեն ինչ վճռել ես... Օսվալդ, դե ճիշտն ասա, խոստովանիր, որ դու ինձ չես թողնի, որ ոչ մի դեպքում դու ինձ թույլ չես տա:

— Բայց, անուշիկ մանկիկ, ես քեզ ոչինչ չեմ կարող ասել, մինչև դու չխոսես քո ծնողների հետ: Չէ՞ որ վճռական խոսքը նրանց է պատկանում: Եթե նրանք թույլ տան, ես էլ չեմ առարկի...

— Դու ստո՛ւմ ես,— գոչեց Ստելլան տեղից վեր թռչելով:— Դու նույնիսկ այնքան համարձակություն ու ազնվություն չունես, որ ճշմարտությունն ասես ինձ: Դու գիտես, որ ծնողներս ինձ թույլ չեն տա գնալ, մինչև դու ինքդ թույլ չտաս, և գիտես նաև, որ նրանք թույլ կտային, եթե դու հավանություն տայիր. չէ՞ որ Ռիզեմանի դուստրը Գեբլերի հարսնացուն է և ապագա կինը: Բայց դու բոլորովին ուրիշ բան ես մտածել: Ես այդ տեսնում եմ քո դեմքից: Դու ուզում ես իմ ծնողների վրա այնպես ազդել, որ նրանք ինձ թույլ չտան, այլ արգելեն գնալ... Օսվալդ, դու ստախոս ես:

— Բայց, սիրելիս, իմ անուշիկ մանկիկ...

Մինչ պարոն Գեբլերը բառեր էր որոնում, Ստելլան բոլորովին մոտեցավ նրան, չարությամբ ծիծաղեց նրա երեսին և ասաց.

— Ես մանկիկ չե՞մ: Դու երեխայի հետ չես խոսում, այլ հասուն մարդու հետ: Դու մտածում ես գլուխս յուղել ինչպես մի փոքրիկ աղջկա, փորձում ես քնքշանքով այնպես անել, որ ես ինքս ինձ խաբեմ: Բայց սխալվում ես: Ես քնած չեմ, ես արթուն եմ և միշտ արթուն կլինեմ: Ես այլևս չեմ ուզում խաբել ո՛չ ինձ, ո՛չ քեզ, ո՛չ էլ ուրիշներին:

Խե՜ղճ պարոն Գեբլեր: Նա վատ խաղաց իր դերը. Նրա խորամանկությունը հասկացվել էր: Նա իր հարսնացուի մեջ վիրավորել էր նրա համար ամենաթանկագինը՝ ինքնավստահությունը: Այն վստահությունը, որ աղջկա մեջ արթնացել էր այնպիսի ուժով և որը նրա համար իր մարդկային լիարժեքությունն էր, իր արժանիքն ու հպարտությունը: Խեղճ պարոն Գեբլերը վիրավորել էր իր հարսնացուին, որին նա դադարել էր հասկանալ և ի դեմս նրա ձեռք էր բերել մի հակառակորդ, որի ուժի մասին նույնիսկ հասկացողություն չուներ:

Պարոն Գեբլերը թերևս ավելի մեծ հաջողության հասներ, եթե միանգամից խոսեր իր զգացմունքների մասին, եթե իր հարսնացուի ծրագրին դեմ դուրս գար որպես սիրահարված երիտասարդ, եթե նրա առաջ կանգներ բորբոքված սրտով ու թախծոտ դեմքով և ասեր. «Դու ուզում ես երկար տարիներով անջատվել ինձնից... Ես չեմ կարող դրան դիմանալ, դա ինձ համար շատ վշտալի բան կլինի: Խղճա ինձ, զոհաբերիր քո ձգտումները հանուն մեր սիրո, ընտրիր քեզ համար որևէ մի այլ աշխատանք, ուրիշ գործունեության ասպարեզ, որը մեզ չբաժաներ իրարից»:

Այսպիսի աղաչանքը հարսնացուի գութը կշարժեր: Հենց այդպիսի աղաչանքից էլ հարսնացուն առաջուց վախենում էր: Եվ եթե նույնիսկ պարոն Գեբլերը չհասներ իր նպատակին և չսասաներ հարսնացուի մտադրությունը, այնուամենայնիվ նրանց միացնող կապն այդպես հանկարծ ու խիստ չէր կտրվի, որովհետև Ստելլան սիրում էր Օսվալդին, համենայն դեպս հաստատ համոզված էր, թե սիրում է: Նա ձգտում էր այդ երիտասարդին, նրա կողքին եղած ժամանակ իրեն երջանիկ էր զգում և մեղմ ուրախությամբ էր մտածում իր ու նրա առաջիկա կապի մասին: Նրանք իրենք էին մտերմացել իրար հետ, նրանց հարաբերություններին չէին միջամտել ո՛չ ծնողները, ո՛չ ուրիշ որևէ մեկը: Նրանք հասարակության մեջ հանդիպել էին արդեն շատ տարիներ առաջ, և նրանցից ամեն մեկը կարծում էր, որ գիտե մյուսի հոգեկան հատկություններն ու ներքին կյանքը:

Մինչև այսօր:

Մինչև այդ րոպեն:

Այժմ հանկարծ ամեն ինչ փոխվեց: Եվ այդ բանում մեղավոր էր պարոն Գեբլերը:

Ստելլա Ռիզեմանը տեսավ, որ իրենք խորթ են իրար համար: Օսվալդ Գեբլերը նրան երեխա էր համարում, փորձում էր քնքշանքով քնեցնել նրան, և դա աղջկա աչքերը բացեց: Նա զգաց, որ այդ մարդը երբեք չի հասկանա իրեն, որ նա իրեն հասկանալ չի կարող, չի ցանկանա, չի համարձակվի, որ նա միշտ էլ իրեն համարելու է միայն կին, երեխա կամ իսկ սա պակաս վտանգավոր չէ մի մարդ, որի ինքնուրույնությունն իրեն հաճելի չէ, վիրավորական է, իրեն համարելու է **տղամարդու մտածողությամբ** կին, որի հետ նա չի կարող ապրել, չի կարող երջանիկ լինել, որովհետև ուժը չի պատի այդ կնոջը ենթարկել իրեն, ճնշել նրան իր «ես»-ով, որպես ամուսին ու տիրակալ նրա վզին փաթաթել իր տրամադրությունը:

Իսկ ի՞նչ է ներկայացնում նրա սերը: Գեբլերը հավաստիացնում էր, թե իր սերը մեծ է ու զորեղ: Բայց իսկական մեծ սերը ոչ միայն ընծաներ է պահանջում, այլև ինքն է ընծայում սիրելուն, ընծայում է՝ փոխարենը ոչինչ չպահանջելով: Այդ սերը հաճությամբ զոհաբերություն է անում, նույնիսկ ամենածանր զոհաբերություն, այն մարդկանց սովորեցնում է անձնազոհություն, այն բարություն է անում փակ աչքերով:

Այդպիսի՞ն էր, արդյոք, պարոն Օսվալդ Գեբլերի սերը:

Ո՛չ:

Պարոն Գեբլերի սերը զոհաբերության անընդունակ էր: Այն ոչինչ չէր ընծայում, այն միայն պահանջում էր ու վերցնում: Սա պարզ էր նրանից, որ պարոն Գեբլերը ոչ միայն չկարողացավ

կատարել հարսնացուի ցանկությունը, այլև նրա մտադրության մեջ տեսնում էր ոչ թե նրան, այլ միայն այն վտանգները, որ սպառնում էին իրեն: Անձամբ իրեն: Նա ինքն իրեն ավելի էր սիրում, քան իր հարսնացուին: Նրա անձնավորությունն այնքան էր գերակշռում հարսնացուի նկատմամբ տածած սիրուց, որ չխորշեց նույնիսկ այնպիսի միջոցներից, ինչպիսիք են խաբեությունն ու խորամանկությունը, որպեսզի իր անձը պաշտպանի ամեն տեսակ վնասից:

Այս բանը հասկանալով՝ Ստելլա Ռիզեմանը մտածեց, թե միանգամայն բնական կլինի քակել այն խաբուսիկ, տեսլային կապերը, որ միացնում է իրենց և քամուն տալ դրանք ինչպես մշուշի մի շերտ:

Ստելլան ձեռքը դրեց փեսացուի ուսին, նայեց նրա դեմքին այն տխուր հայացքով, որով սովորաբար հրաժեշտ են տալիս լավ բարեկամին, և ասաց.

— Օսվալդ, ես էլ, դու էլ խելահաս մարդիկ ենք և ճիշտ վարված կլինենք, եթե դադարենք մեկս մյուսի համար բեռ լինել: Ազատ համարենք մեզ: Այս րոպեից ես այլևս քեզ հետ կապված չեմ:

Առաջին բանը, որ արտացոլեց Օսվալդ Գեբլերի դեմքին, թերահավատության զգացմունքն էր: Նա նույնիսկ փորձեց ժպտալ: Նրա հայացքը կարծես հարցնում էր. «Հնարավո՞ր բան է, որ այդպիսի խոսքեր ասվեն ինձ»: Բայց մի քանի րոպե անց նա սփրթնեց, նրա աչքերում երևան եկավ վրդովմունքի հետ խառնված վախի ու զարմանքի արտահայտություն:

— Այդ ի՞նչ է նշանակում, Ստելլա,— դանդաղորեն ասաց նա, իր ուսն ազատելով աղջկա ձեռքի տակից:— Դու մտածել ես մեր նշանադրությունը լուծե՞լ...

— Այո, Օսվալդ:

— Բայց չէ՞ որ այդ նշանադրության մասին բոլորը գիտեն, բոլորին հայտարարված է...

— Բոլորին հայտարարվա՞ծ է... Բայց մենք կարող ենք ճիշտ այդպես էլ հայտարարել, որ նշանադրությունը լուծված է:

— Այդ անկարելի է:

— Ինչո՞ւ:

— Նշանակում է, դու ուզում ես ինձ ամբողջ աշխարհի առաջ…

Պարոն Գեբլերն ստորին շրթունքը կծեց: Ստելլայի դեմքից նա գլխի ընկավ, որ սխալ քայլ է արել և շտապեց նահանջել:

— Այդ անկարելի է, որովհետև ես սիրում եմ քեզ, սիրում եմ աշխարհում ամեն բանից ավելի...

Եվ պարոն Գեբլերը փորձեց ձայնի ու հայացքի մեջ դնել իր ամբողջ սերը, իսկ այդ սերը առօրյա հասկացողությամբ իսկապես բավական ուժեղ էր: Պարոն Գեբլերը կարող էր երդվել, որ սիրում է իր հարսնացուին, և ամեն ոք առանց տատանման կարող էր դրան հավատալ: Բայց, իհարկե, նա աղջկան այն չափով էր սիրում, որքան թույլ էին տալիս իր հոգեկան ուժերը: Այստեղ նա ոչինչ չէր կարող անել. Նրանից ավելին էին պահանջում, քան սովորաբար պահանջում են սովորական մարդուց...

Ստելլա Ռիզեմանը կրկին մոտեցավ նրան, նորից ձեռքը դրեց նրա ուսին և նայեց դեմքին իր կապուտակ աչքերով, որոնք այդ րոպեին տղայի համար այնքան անհաճո խորաթափանց էին:

— Դու ասում ես, որ սիրո՞ւմ ես ինձ, Օսվալդ:

— Ինքդ գիտես:

— Դու ինձ սիրում ես աշխարհում ամեն բանից ավելի՞:

— Այո, իմ Ստելլա:

— Դե ուրեմն գնանք իմ ծնողների մոտ, ասա նրանց, որ դու համաձայն ես ինձ հետ և այնպես արա, որ նրանք ինձ թույլ տան գնալ: Այդ թույլտվությունն ստացիր ինձ համար և ես կհավատամ, որ դու սիրում ես ինձ: Բայց մինչև այս չանես, ինձ քո հարսնացուն մի համարի, ինչպես և ես քեզ իմ փեսացուն չեմ համարում:

Պարոն Օսվալդ Գեբլերը մի վայրկյան իրեն կորցրեց: Նա շփոթված ցած գցեց հայացքը, երեսը դարձրեց, զգալով աղջկա ջերմ շնչառությունը: Նրա դողացող մատները ջղայնորեն խաղում էին ժամացույցի ոսկե շղթայի հետ:

— Իսկ եթե նրանք ոչ մի կերպ չհամաձայնե՞ն:

— Այն ժամանակ անհապաղ ամուսնացիր ինձ հետ, որպեսզի ես նրանց թույլտվության կարիքը չունենամ, և ինքդ թույլ տուր ինձ գնալ:

Պարոն Գեբլերի ձեռքերը դանդաղորեն ցած ընկան, բաց թողնելով ժամացույցի շղթան: Նա մի քանի քայլ հեռացավ հարսնացուից: Ըստ երևույթին մտքերն էր ժողովում և իր առևտրական ամբողջ ուղեղը լարում, որպեսզի մի ելք գտնի այն դժվարին դրությունից, որի մեջ վերջնականապես խճճվել էր:

Ստելլան նրան նայում էր կարեկցանքով ու խղճահարությամբ: Բայց դա այն հեգնական կարեկցանքն էր, այն ծաղրական խղճահարությունը, որ մարդ զգում է, երբ տեսնում է, թե խորամանկն ինչպես է ընկել ի՛ր իսկ սարքած որոգայթի մեջ:

Եվ Ստելլան հանկարծ հասկացավ, որ ինքը չի սիրում այդ մարդուն, որ երբեք էլ չի սիրել նրան: Առաջին անգամ նա այնպես պարզ տեսավ, թե որքան չնչին է այդ մարդը և զարմացավ, թե այդ ինչպե՞ս է պատահել, որ ինքը մտերմացել է նրա հետ, հանդիպել նրա հետ մինչև այսօրվա օրը, պատրաստվում էր ընդմիշտ կապվել նրա հետ... Ինչպե՞ս է կարողացել խաբել իրեն, ինչպե՞ս է այդքան կույր եղել:

Երբ պարոն Գեբլերը նորից շուռ եկավ դեպի Ստելլան, աղջիկը գոչեց.

— Ես գիտեմ, թե ինչ ես ուզում ասել: Դու նորից մտածելու ժամանակ կպահանջես ինձնից:

— Այո,— պատասխանեց Օսվալդը, և նրա ձայնի մեջ չարություն զգացվեց:— Ես սովոր եմ ամեն մի լուրջ քայլի մասին նախապես խորհել:

— Լա՛վ, երեք օր եմ տալիս քեզ խորհելու համար: Այդ երեք օրը տալիս եմ քեզ, թեև շատ լավ գիտեմ, թե ինչպես ես օգտագործելու այդ ժամանակը և ինչ որոշում ես հայտնելու ինձ: Բայց հետո դու չես կարող ինձ կշտամբել, թե քեզ լուրջ քայլի մասին խորհելու ժամանակ չեմ տվել:

Այս բացատրության ժամանակ պարոն Գեբլերը զայրանալու շատ առիթներ ունեցավ, բայց նրբակիրթ վերաբերմունքի կանոնները նրան թույլ չէին տալիս մոռանալ, որ իր առաջ կին է կանգնած, և նրան հաջողվում էր զսպել իրեն, մնալ հանգիստ ու քաղաքավարի: Սակայն Ստելլայի վերջին խոսքերի մեջ այնքան ստորացուցիչ կասկածանքներ էին թաքնված, տղամարդու արժանապատվությունը և պարոն Գեբլերի պատիվը վիրավորող այնպիսի կծու ծաղր, որ երիտասարդի հոգու մեջ նրբակիրթ կավալերը փեշերը հավաքելով մի անկյուն քաշվեց՝ իր տեղը զիջելով զգացմունքները խոցված, գազազած խանդոտ տղամարդուն:

Գեբլերի գեղեցիկ, նուրբ աղայական դեմքը գունատվեց, ճակատին մի հաստ, կապույտ երակ փքվեց, լայն բացված աչքերը շողացին սուր փայլով:

— Վե՛րջ: Բավակա՛ն է,— գոռաց նա:— Դու մոռանում ես, որ քո առաջ երեխա չի կանգնած, այլ՝ տղամարդ, բոլորի կողմից հարգված անբիծ անունով մի կարգին մարդ, և նա թույլ չի տա թքել իր երեսին, ցեխի մեջ տրորել իր արժանապատվությունը... Բավական է, ինձ այլևս հարկավոր չէ խորհելու ժամանակ, ես արդեն ամեն ինչ վճռել եմ: Ահա իմ որոշումը. ես քեզ արգելում եմ գնալ և բոլոր միջոցներով ու եղանակներով կաշխատեմ, որ քո ծնողներն էլ թույլ չտան, որ նրանք էլ, եթե հարկ լինի, զոռով պահեն քեզ:

— Ես այդ գիտեի,— ժպտաց Ստելլան:

— Բայց դու դեռ բոլորը չգիտես: Դու չգիտես այն պատճառները, որոնք ինձ ստիպում են այդպես վարվել. դու կուրացել ես, դու հեռացել ես կարգին հասարակությունից... Եթե դու, Ստելլա, չհրաժարվես քո մտադրությունից, ուրեմն՝ ազատ ես, ես քեզ հետ ոչ մի ընդհանուր բան չունեմ: Եվ այնուամենայնիվ ես կպնդեմ, որ քո ծնողները և բոլորը, ովքեր ազդեցություն ունեն քեզ վրա, խափանեն քո ծրագիրը...

— Դա վրեժ է,— նորից քմծիծաղ տվեց Ստելլան:

— Ո՛չ, սա վրեժ չէ, սա ձգտում է պաշտպանել ինձ մոտիկ մի ընտանիքի պատիվը, սա մի փորձ է այդ ընտանիքը փրկել **խայտառակությունից**, իսկ այդ ընտանիքի ավագ դստերը՝ **կործանումից**… Եվ եթե ես այս անում եմ ուրիշների համար, ապա կարող ես դատել, թե ինչպես եմ աշխատում ինքս ինձ պաշտպանել այդպիսի անպատվությունից...

— Խայտառակությո՞ւն... կործանո՞ւմ... անպատվությո՞ւն...— Ստելլան աչքերը շողացնելով մի քայլ արեց դեպի նա:— Օսվալդ, ի՞նչ ես ուզում ասել դրանով...

— Ես սրանով ուզում եմ ասել, որ ոչ մի կարգին մարդ իր հարսնացուին և առավել ևս իր կնոջը չի թույլ տա մեն-մենակ գնալ մի մեծ քաղաք, լկստվել ուսանողների հետ և անառակ կյանք վարել: Ոչ մի կարգին մարդ չի հանդուրժի, որ իր հարսնացուն կամ կինը մի ինչ-որ քոսոտ ուսանողի **սիրուհին** դառնա...

— Օսվա՛լդ:

— Եվ ես կարծում եմ ամեն մի կարգին մարդու պարտքն է այդպիսի ճանապարհ բռնած աղջկա ծնողներին նախազգուշացնել, թե ինչպիսի վտանգ է սպառնում նրանց...

Տիրեց լռություն: Այդ լռության մեջ լսվում էր միայն Ստելլայի ընդհատուն շնչառությունը: Աղջկա երեսին արյան նշույլ անգամ չկար, նրա գունատ շրթունքները ջղաձգաբար ցնցվում էին, ասես նա խոսելու ապարդյուն փորձեր էր անում:

— Ինչպե՞ս ես համարձակվում այդպես վիրավորել ինձ: Ի՞նչ հիմքեր ունես դու,— վերջապես ասաց նա խուլ, ճնշված ձայնով:

— Միանգամայն հավաստի փաստեր, որոնց մասին բոլորը գիտեն: Ո՞ւմ հայտնի չէ, որ դու վազում ես ահա նրա ետևից, որ վերևումն է, որ դու մտերմացել ես նրա հետ, որ այդ մտերմությունը վաղուց արդեն անցել է պատշաճության բոլոր սահմանները, որ դու ժամերով մնում ես նրա սենյակում... Ձեր տան ծառաներն անգամ սեպերն են բացում այդ առթիվ, իսկ հասարակության մեջ դա խոսակցության սովորական նյութ է դարձել... Միայն կույրը կարող է պնդել, թե դու սիրահարված չես նրան, և հենց դա, այդ կեղտոտ սերն է քեզ ներշնչել քո այդ ցնորամիտ ծրագիրը. դու ուզում ես նրա ետևից Պետերբուրգ վազել:

Այսպես: Պարոն Օսվալդ Գեբլերը վերջապես թափեց այն ամբողջ մաղձը, որ վաղուց արդեն կուտակվել էր նրա խանդոտ սրտում, թափեց ամբողջը, մինչև վերջին կաթիլը: Նախորդ վեճերի ժամանակ նա իրեն զուսպ էր պահում, որովհետև մի կողմից հավատը չէր գալիս, թե Ստելլայի ու Կուրբատովի հարաբերությունները կարող են մի լուրջ բանի փոխվել, մյուս կողմից հպարտությունը թույլ չէր տալիս հարսնացուին ցույց տալ, որ ինքը՝ հարուստ ու գեղեցիկ պարոն Գեբլերը խանդում է այնպիսի մի չնչին արարածի, ինչպիսին էր այնտեղ, վերևում գտնվող այն անձը: Միևնույն ժամանակ պարոն Գեբլերը իրեն մխիթարում էր նրանով, որ ռուս ուսանողը շուտով կգնա և դա ինքնին իրեն՝ պարոն Գեբլերին կազատի կոշմարային խանդից, իսկ Ստելլային՝ նրա գայթակղիչից: Բայց այժմ, երբ բանը հասել էր հարսնացուի հետ կապերը խզելուն, երբ, ինչպես նա գտնում էր, բոլոր կասկածները հաստատվել էին, նա կանգ չառավ նույնիսկ կոպիտ չափազանցությունների առաջ, որպեսզի որքան կարելի է վառ գույներով Ստելլային ցույց տա նրա մեղքը, որքան կարելի է ավելի ուժեղ զգացնել տա նրան իր ցասումը:

Եվ, ինչպես թվում էր պարոն Գեբլերին, նա կարող էր միանգամայն գոհ լինել իր խոսքերի ներգործությունից:

Որովհետև ինչո՞ւ հանկարծ այդպես շփոթվեց այդ քաջարի աղջիկը, ինչո՞ւ ցած կախեց իր գեղեցիկ, հպարտ գլուխը, ինչո՞ւ նրա եռուն ցասումը, համարձակ հայացքը հիմա այդպես անօգնական ու շփոթված ցած է հառվել, ինչո՞ւ նա, որ սովորաբար այնքան հնարամիտ է, հիմա ապարդյուն բառեր է որոնում, որպեսզի ետ վանի իրեն նետված նախատինքները:

Ստելլա Ռիզեմանը կարողացավ միայն լուռ, հրամայական մի շարժումով դուռը ցույց տալ իրեն վիրավորողին. . . Հետո ուժասպառ ընկավ աթոռին, գլուխը ձեռքերի մեջ առավ և սկսեց մտածել, մտածել, մտածել...

8

Ֆրոյլայն Ռիզեմանը իր վերջին հաշիվները փեսացուի հետ մաքրեց օրվա երկրորդ կեսին, իսկ երեկոյան արդեն նա ստիպված էր այդ առթիվ ընդհարվել ծնողների, առանձնապես հոր հետ: Բանն այն է, որ պարոն Գեբլերը տիկին Ռիզեմանին որպես թույլ կնոջ մի կողմ թողնելով՝ շտապել էր ուղիղ դեպի քաղաք, պարոն Ռիզեմանի մոտ, որպեսզի կարգին մարդու պարտքը կատարելով նախազգուշացնի նրան սպառնացող վտանգի մասին:

Գործարանատերը քաղաքից տուն վերադարձավ բավական ուշ, ըստ երևույթին ընթրելով ակումբում, պարոնայք Գեբլերների հետ միասին: Շուտով սպասուհին ավագ դստերը խնդրեց ներկայանալ հորը, որը նրան սպասում էր իր առանձնասենյակում:

Երբ Ստելլան ներս մտավ, հայրը փակում էր Ռիզեման ֆիրմայի շտամպը կրող մի մոխրագույն ծրար: Աղջիկը նկատեց միայն ծրարի մեջ դրվող թղթադրամի ծայրը: Հետո պարոն Ռիզեմանը զմուռսով կնքեց այն, անփութորեն ինչ-որ ազգանուն խազմզեց վրան, զանգակը զնգզնգացրեց և նամակը ներս մտնող սպասուհուն հանձնելով ասաց.

— Վերև, պարոն ուսուցչին:

Սկզբում պարոն Ռիզեմանը ձևացնում էր, թե աղջկան չի էլ նկատում: Մեծագույն հանգստությամբ նա մի սիգար վերցրեց գրասեղանին դրված տուփից և դանդաղորեն վառեց այն: Հետո վեր կացավ, ձեռքերը խրեց շալվարի գրպանը, կանգնեց աղջկա առաջ և առանց մի խոսք ասելու սկսեց նայել նրան, սիգարն ատամների արանքում բռնած և թեթևակի օրորվելով ոտքի ծայրից դեպի կրունկը: Միաժամանակ նա շրթունքներն արհամարհաբար ծռմռելով քմծիծաղ էր տալիս, և վերջապես, բռնվեց մի երկար, բամբ քրքիջով, որ ասես ստամոքսի խորքից էր գալիս:

— Ուրեմն, նշանակում է, ուզում ես, հա՛-հա՛-հա՛, ուզում ես գլուխդ խուզել, տղամարդու շալվար հագնել ու փախչել Պետերբո՞ւրգ, իսկ այնտեղ — հա՛-հա՛-հա՛ — այնտեղ պանդոկներում ուսանողների հետ օղի կոնծել, ծխախոտ ծխել և «Դե լի՛ց, ախպերս, լի՛ց բաժակը» երգել: Հա՛-հա՛-հա՛:— Եվ պարոն Ռիզեմանին բռնեց քրքիջի մի նոր նոպա:

Պարոն Ռիզեմանն, ըստ երևույթին, Գեբլերների հետ ընթրելիս խմել էր. ամեն մի «հա-հա-հա»-ին նրանից գինու հոտ էր փչում:

Ստելլան առանց մի բառ արտասանելու մի քայլ ետ քաշվեց նրանից:

— Մի՛ վախեցիր, թանկագին բալիկս,— ասաց հայրը:— Ես քեզ ոչինչ չեմ անի... ես միայն ուզում էի մի քիչ նայել քեզ վրա, որ տեսնեմ, թե ինչպես է բանը այստեղ,— և նա մատով թխկթխկացրեց աղջկա ճակատին,— արդյոք ամե՞ն ինչ կարգին է... Բայց ես տեսնում եմ, որ իմ երկյուղն իզուր է եղել: Քո աչքերը պարզ են:...

Նա կարծես սպասում էր, որ աղջիկն իրեն կպատասխանի, բայց Ստելլան լուռ էր: Նրա դեմքն անտարբեր էր, ասես քար էր կտրել: Բայց դա չփչացրեց հոր բարեհոգի, ուրախ տրամադրությունը:

— Այսօր դու շատ տգեղ ես վարվել քո փեսացուի հետ, բալիկս,— շարունակեց հայրը:— Ինչպե՞ս կարելի է, որ բարեկիրթ աղջիկը, այն էլ հարսնացուն, այդքան խև ու քմահաճ լինի: Ամո՛թ քեզ... Վաղը առաջին հերթին բարեհաճիր ներողություն խնդրել նրանից... նա կգա մեզ մոտ:

Ստելլան լուռ էր:

— Իսկ ինչ վերաբերում է քո նշանավոր բժշկական պրոբլեմին, թույլ տուր ինձ մի անգամ ևս սրտանց ծիծաղել դրա վրա:

Եվ հայրիկ Ռիզեմանն սկսեց ծիծաղել ամբողջ սրտով: Բայց այդ ծիծաղը, թվում էր, ստամոքսից է գալիս:

— Իսկ հիմա գնա քնիր,— ասաց հայրը հակիրճ, մեջքը դարձրեց աղջկան և նստեց գրասեղանի առաջ:

Ստելլան շարունակեց կանգնած մնալ: Նրա գունատված դեմքին հոգեկան պայքար էր արտացոլվում: Ռիզեմանն ուզում էր լրագրերը աչքի անցկացնել, երբ հանկարծ նրա ուսին իջավ աղջկա թեթև ձեռքը:

— Հայրի՛կ:

— Ի՞նչ կա:

— Հայրիկ, դու ինձ սիրո՞ւմ ես:

— Դա ի՞նչ հարց է:

— Եվ ուզո՞ւմ ես, որ ես երջանիկ լինեմ:

— Բայց, բալիկս...

— Եթե դու ինձ սիրում ես, հայրիկ, և ցանկանում ես, որ ես կյանքում երջանիկ լինեմ, թույլ տուր ինձ սովորել և բժիշկ դառնալ: Դե հո վատ բան չէ, եթե մարդ մի բան է սովորում... Եվ, գիտե՞ս հայրիկ, ինչ եմ խոստանում քեզ, հանդիսավորապես, երդումով խոստանում եմ, ես լավ բժիշկ կլինեմ, այնպիսի բժիշկ, որը գիտե և սիրում է իր գործը: Դե հո վատ բան չէ, եթե մարդ աշխատում է... Եվ ես քեզ խոստանում եմ էլի մի բան. ես ինձ անբասիր կպահեմ, ոչ ոք չի համարձակվի ինձ մատով ցույց տալ, քո պատիվը ոչ մի բանով չի արատավորվի... Հա՛յր, թույլ տուր ինձ սովորել:

Ստելլայի այս պարզ խոսքերի մեջ այնքան անկեղծ աղաչանք կար, որ դրանք կարող էին ջերմացնել ու հուզել ամեն մի սիրտ: Գուցե և պարոն Ռիզեմանի վրա ևս այս խոսքերը որոշ ազդեցություն ունեցան, բայց նա չէր ուզում ցույց տալ իր զգացմունքը, դա հայրական թուլության արտահայտություն կլիներ և կխրախուսեր աղջկան: Նա աթոռի վրա շուռ եկավ և հարցրեց միևնույն կոշտ ու ծաղրական տոնով, որով խոսում էր և սկզբում:

— Ստելլա, դու երևի դեռ չե՞ս մոռացել, թե ինչ բան է ճիպոտը:

— Հայր, ես այլևս երեխա չեմ,— գոչեց մատաղահաս աղջիկը, և նրա աչքերը լցվեցին ամոթի ու զայրույթի արցունքներով:

— Դու դեռ բոլորովին երեխա ես, այն էլ հիմար ու խելառ երեխա, որին ճիպոտը շատ կսազեր,— պատասխանեց Ռիզեմանն արդեն ավելի խիստ ու անողոք:— Եվ լսի՛ր, Ստելլա, տես ինչ եմ ասում քեզ. եթե դու մինչև վաղը առավոտ գլխիցդ դուրս չշպրտես այդ խենթությունը, ես ճիպոտի փոխարեն մահակ կվերցնեմ և ինքս քեզանից դուրս կքշեմ այդ խևությունը... Կարող ես հավատացած լինել: Ծերունի Ռիզեմանը չի թողնի, որ իր զավակները կործանվեն:

Եվ պարոն Ռիզեմանը ամբողջովին կարմրատակած՝ շըխկոցով բաց արեց հարևան սենյակի դուռը և գոչեց.

— Մա՛յր, այստեղ արի, այս խելագար աղջկան տար քնելու:

Ստելլայի արցունքներն արագ ցամաքեցին և երբ դուրս գնալիս նայեց հորը, նրա դեմքն ավելի պաղ էր, ինքնամփոփ ու անշարժ, քան առաջ, և այդ դեմքին ավելի մեծ վճռականություն էր արտացոլվել:

Ռիզեմանների դստեր համար այսօրվա կռիվը սրանով չվերջացավ: Հորից հետո հանդես եկավ մայրը, որը ամուսնուց իմացել էր, թե ինչ աղետ է եկել իրենց գլխին:

Այս հակառակորդը մոլորված երեխայի վրա էր գրոհում արցունքով ու աղաչանքով, աստծո խոսքով ու կշտամբանքներով: Տիկին Ռիզեմանն, ըստ երևույթին, այնպիսի լայն մտահորիզոն և երևակայության ուժ չուներ, որ պատկերացներ, թե ինչ արդյունքների կարող է հասցնել աղջկա՝ իր համար որոշակի պրոֆեսիա ընտրելու մտադրությունը: Տիկին Ռիզեմանը չէր էլ փորձում քննադատել այդ պլանները, հավանություն տալ դրանց կամ դատապարտել: Նրա միտքը պտտվում էր միայն այն «խայտառակության» շուրջը, որ տեղի կունենար, եթե հասարակության մեջ իմանային Ստելլայի և Օսվալդի նշանադրության լուծումը: Նա նորից ու նորից կրկնում էր, որ եթե բանն այդտեղ հասնի, ինքը երես չի ունենա մարդկանց աչքին երևալու, նույնիսկ իրենց ծառաների, որ ամոթից գետը կնետվի: Ստելլայի կրծքին փարած նա այնպես էր հեկեկում, ասես իր աղջկան ինչ-որ հասարակաց տան մեջ էր գտել: Ամեն տեսակ երդում ու խոստում պահանջելով նա խեղճ աղջկա հոգին այնպես էր հանում, որ Ստելլան հալից ընկած պոկվեց նրա ձեռքերից ու փախավ:

Երբ Ստելլան մտավ ննջարան, Ռիտան արդեն պատրաստվում էր անկողին մտնելու: Կուրծքն ու ձեռքերը բաց՝ նա կանգնել էր հայելու առաջ և մազերն էր հյուսում ակներև բավականությամբ հիանալով իր կուսական գեղեցկությամբ: Հետո նա մեջքի քուղն արձակեց, մահճակալի առաջ հատակին գցեց ամբողջ ցածի հագուստը և միայն շապկանց մնալով սուզվեց անկողնի մեջ: Նրա ներքին յուբկան ու ոտաշորը գորգի վրա մնալով անիվի նման մի բան էին դարձել: Այսպես էր նրա հանվելու սովորությունը: Առավոտներն էլ մահճակալից դուրս գալով ընկնում էր հագուստներից կազմված այդ շրջանակի ուղիղ մեջտեղը:

Վերմակի տակ նա բավականությամբ ձգվեց իր ամբողջ ծաղկափթիթ մատաղ մարմնով և մեջքի վրա պառկելով ձեռքերը խաչեց գլխի տակ ու նայեց առաստաղին: Քրոջ հոգնած դեմքին նա միայն մեկ-երկու անգամ թռուցիկ հայացք գցեց, որը հետաքրքրություն էր արտահայտում կամ ծաղր: Չէ՞ որ ֆրոյլայն Ռիտան միշտ էլ դատապարտում էր քրոջ բացահայտ մտերմությունն այդ չեչոտ ռուսի հետ, իսկ հիմա էլ խև Ստելլան այնքան է ընկել այդ զզվելի մարդու ազդեցության տակ, որ ուզում է փեսացուին թողնել և ռուսի ետևից գնալ մի օտար քաղաք: Իսկ ինչ վերաբերում է գիտության ծարավին, որ երևան է եկել Ստելլայի մեջ, ապա Ռիտան ոչ մի որպե չէր հավատում դրան: Նրա կարծիքով դա միայն մի խորամանկություն էր, որով քույրն ուզում էր թաքցնել իր անհեթեթ զգացմունքն այդ այլանդակ մարդու նկատմամբ:

Ստելլան նայեց Ռիտայի անտարբեր, համարյա ծաղրական դեմքին, և մի դառն ժպիտ սահեց նրա շուրթերի վրայով: Էլի՜ մի անհաշտ հակառակորդ: Ոչ մեկի մեջ չի գտնվում կարեկցություն, ըմբռնողություն կամ գոնե ըմբռնելու ցանկություն:

Քույրերից ոչ մեկը ոչ մի խոսք չասաց:

Ստելլան իր մտքերի մեջ խորասուզված՝ սկսեց դանդաղորեն հանվել: Դեռ նա շորերը չէր հանել, երբ Ռիտան արդեն քուն մտավ: Նրա աչքերը փակ էին, շնչում էր համաչափ: Նա քնեց այս անգամ առանց բարի գիշեր մաղթելու քրոջը:

Ստելլան լույսը մարեց և յուբկան ու գիշերային կոֆտան հագին պառկեց մահճակալին, հենց վերմակի վրա: Նա նայում էր խավարին և ականջ դնում տան ամեն մի խշշյունին: Այսպես նա մի

ժամից ավելի անշարժ պառկած մնաց: Հետո զգուշությամբ վեր կացավ, կամացուկ բացեց չփակված դուռը և սենյակից դուրս պրծավ: Միջանցքում ոչ ոքի չհանդիպելով՝ նա իջավ այգի:

Ցերմ անձրև էր մաղում, որը փափուկ, խոնավ շղարշի նման դիպավ նրա երեսին: Ծառերն ու թփերը ասես քուն մտած կանգնած էին անշարժ: Խոր լռություն, դեղնավուն մշուշ և՛ մոտիկում, և՛ հեռվում:

Ճանապարհը հազիվ որոշելով Ստելլան խոնավությունից լպրծուն ծառուղիներով գնում էր ավելի ու ավելի առաջ, դեպի այգու խորքը: Նա շուռ գալով նայեց տանը և վերին հարկում տեսավ մեկ լուսավոր պատուհան. մյուս բոլոր լուսամուտները խավար էին: Ստելլան լավ գիտեր այդ լուսամուտը: Նա այդպես էլ ենթադրում էր, որ այս գիշեր այդ պատուհանը սովորականից ավելի երկար է լուսավոր մնալու: Լույսի նեղ, դեղնավուն շերտը, որ ընկնում էր այգի, ասես աղջկան ճանապարհ էր ցույց տալիս, և Ստելլան այգին լայնքին ու երկայնքին կտրելուց հետո սկսեց այդ լուսավոր շերտի երկարությամբ ետ ու առաջ քայլել անդադրում, հանգիստ չգտնելով ու չնկատելով, որ անձրևը գնալով ուժեղանում է...

Չէ՞ որ նրան հարկավոր էր այնքան շատ մտածել, մինչև որ վերջնականապես վճռի:

Նա հաճախ հայացքը դարձնում էր դեպի վեր, լուսավոր պատուհանին, և նրան թվում էր, թե այնտեղից իր հոգու մեջ ուժ է լցվում, կայտառություն ու հաստատամտություն...

9

Այն նամակով, որ Անդրեյ Պետրովիչը երեկոյան ստացավ Ռիզեմանից, վերջինս ռեպետիտորի ծառայությունից հրաժարվում էր ժամանակից մի քիչ առաջ. մինչև Էբերհարդի առաջին վերաքննությունը դեռ տասն օր ժամանակ կար: Աշակերտի հայրը ուսուցչին էր ուղարկել նրան հասանելիք ռոճիկը, վճարելով նաև մնացած օրերի վարձը, և մի քանի բավական անքաղաքավարի խոսքերով, առանց որևէ հիմնավորման ցանկություն էր հայտնել, որ պարոն Կուրբատովը որքան կարելի է շուտ հեռանա իր տանից: Երբ այդ նամակը բերին Անդրեյ Պետրովիչին, դեպի Պետերբուրգ գնացող երեկոյան գնացքն արդեն անցել էր, ուստի նա որոշեց մեկնել առավոտյան գնացքով և իսկույն էլ սկսեց իրերը դասավորել:

Սակայն, որքան էլ նա սովոր էր նման գործերի և որքան էլ քիչ էր նրա ունեցած-չունեցածը, այսօր գործը ոչ մի կերպ առաջ չէր գնում. ձեռքը ոչ մի բան չէր բռնում և հաճախ տեսնում էր, որ իր անուշադրության պատճառով սխալներ է անում և գործը մինչև վերջ չի հասցնում:

Եվ դա զարմանալի էլ չէ. նրա գլխում մտքերը պտտվում էին մեղվի պարսի պես, կուրծքը սեղմվում էր հուզմունքից:

Անդրեյ Պետրովիչի համար չէր կարող ծանր լինել հեռանալ այն տանից, որտեղ ամբողջ կենցաղավարությունն ամենևին իր սրտովը չէր: Նա իրեն վիրավորված էլ չէր զգում, որ իրեն ժամանակից շուտ են արձակում, թեպետ և այդ արվել էր բավական կոպիտ ձևով. պարզապես իրեն վռնդում էին: Դրանից նա իրեն վիրավորված չէր զգում, որովհետև գլխի էր ընկնում իրեն արձակելու պատճառը և տեսնում էր, որ ինքն ամաչելու հիմք չունի:

Իր աշակերտի մասին նա չէր անհանգստանում. համոզված էր, որ Էբերհարդը վերաքննությունները կտա և գտնում էր, որ կատարել է իր պարտականությունը ինչպես աշակերտի, այնպես էլ ընտանիքի գլխավորի առաջ, որը վճարել է ուսուցման համար: Կուրբատովին առանձնապես չէր մտահոգում նաև Ստելլայի վիճակը, որովհետև աղջիկը պիտի պայքարեր իրեն սիրող մարդկանց դեմ, որոնք չէին կարող նեղացնել նրան: Եվ, այնուամենայնիվ, երբ Անդրեյ Պետրովիչը կարդաց Ռիզեմանի նամակը, երբ իմացավ, որ տասներկու ժամ հետո հեռանալու է այս տանից, հոգու մեջ ծանրություն զգաց: Նրա կրծքի տակ մի ցավ շարժվեց, անջատումի խոր ու ճմլող մի ցավ, այն տարօրինակ, կրծող զգացմունքը, որպիսին ունենում է մարդ, երբ ստիպված է հեռանալ իր համար ամենաթանկագին մարդուց:

Արդյոք Ստելլան հաղթանակի կհասնի՞ իր պայքարում, կիրականացնի՞ արդյոք իր մտադրությունը, կգա՞ Պետերբուրգ. այս հարցը հանկարծ Անդրեյ Պետրովիչի համար մի նոր, խոր նշանակություն ստացավ: Հանկարծ Անդրեյ Պետրովիչին թվաց, թե այդ հարցը իր համար ամենակարևորն է, թե այդ հարցի լուծումից է կախված իր ներկան ու ապագան: Հանկարծ փոթորկի պոռթկումի նման նրան համակեց այն գիտակցությունը, որ ինքը չի կարող ընդմիշտ անջատվել Ստելլայից:

Այժմ անջատման ցավով համակված Անդրեյ Պետրովիչի համար պարզ դարձավ այն, ինչ մինչև այժմ նա միայն աղոտ էր զգում հոգու խորքում, ինչին կասկածում էր, ինչի դեմ աշխատում էր պայքարել, ինչպես խելամիտ և ուշիմ մարդը պայքարում է անհեթեթ թուլության, խաբուսիկ տեսիլքի դեմ: Անդրեյ Պետրովիչը հանկարծ զգաց, որ ինքը սիրում է Ստելլա Ռիզեմանին:

Այս մտքերն այնպես արագ համակեցին երիտասարդին, ասես ջլատեցին նրա հոգեկան ուժերը, ասես շշմեցրին նրան: Նա ուժասպառ ընկավ աթոռին: Կյանքում առաջին անգամ կարծես ընկել էր անթափանց խավարի մեջ և խարխափելով ճանապարհ էր որոնում. ի՞նչ անել, ինչպե՞ս վարվել, ի՞նչ նախաձեռնել: Նա զգում էր, որ գետինը շարժվում է իր ոտքերի տակ, օդը ցնցվում է իր շուրջը: Նրա զգացմունքների աշխարհով ասես ավերիչ մրրիկ էր անցնում:

Նա փորձեց ուշքի գալ, ուժերը ժողովել, բայց դա նրան հաջողվեց միայն մի վայրկյան: Իսկ հետո նորից նստում էր, ձեռքին մի որևէ հագուստ կամ գիրք, անօգնական շուրջը նայելով, և եթե նրա ուղեղում որևէ պարզ միտք էր երևան գալիս, ապա այն վերաբերում էր ոչ նրան, ինչ անում էր տվյալ պահին և ոչ մոտակա իրականությանը: Անդրեյ Պետրովիչն անրջում էր, բայց չէ՞ որ մինչև այժմ նա այնքան քիչ էր հակված երազանքի ու անուրջների:

Երևի արդեն գիշերվա ժամը երկուսը կլիներ, երբ, վերջապես, Կուրբատովը իր գործը վերջացրեց այնքան, որ կարող էր ճամպրուկը կապել ու փակել: Նա նստեց ճամպրուկի եզրին, արմունկները հենեց ծնկներին և գլուխը հենեց ձեռքերին: Լամպի լույսն ընկնում էր նրա գունատ դեմքին, մուգ մազերի ու մորուքի վրա, որոնք արդեն սկսել էին արծաթազօծվել սպիտակ փնջերից: Թեև Անդրեյ Պետրովիչը գործարանից գալուց հետո լվացվել էր, այնուամենայնիվ նրա երեսին մնացել էին ծխի ու մրի մեջ անցկացրած աշխատանքային օրվա հետքերը. կոպերի շուրջը սևին էին տալիս շրջանակներ, որոնցից նրա աչքերն ավելի խոշոր էին երևում: Մետաղագործ բանվորի համար այդ սև շրջանակներ լվանալը հեշտ բան չէ, դրանք ասես նրա զբաղմունքի նշաններն են: Անդրեյ Պետրովիչի հագին ռուսական կապույտ վերնաշապիկ էր, որ նման էր բանվորական հագուստի. այն երեկոներին, երբ նա գործարանումն էր լինում, ընդհանուրի հետ չէր ընթրում, նրա ընթրիքը իր սենյակն էին բերում: Եվ այժմ, երբ նա այդպես նստել էր ճամպրուկի եզրին, նրան կարելի էր բանվորի տեղ դնել, որը զրկվել է աշխատանքից և տխուր-տրտում՝ մտածում է, թե հիմա ուր գնա, որտեղ մի կտոր հաց ու մի օթևան գտնի...

Արդյոք էլի կհանդիպի՞ ինքը Ստելլային, կկարողանա՞ գեթ մի քանի խոսք փոխանակել նրա հետ: Թե՞ նրան զոռով կարգելեն հանդիպել վտանգավոր գայթակղիչի հետ, մինչև որ նա կհեռանա տան սահմաններից: Այսպիսի մտքեր էին անցնում Կուրբատովի գլխով, երբ հանկարծ կամացուկ ու վեհերոտ բախեցին նրա դուռը: Անդրեյ Պետրովիչը դեռ չէր հասցրել պատասխան տալ ու բարձրանալ տեղից, երբ դուռը բացվեց և ներս մտավ ֆրոյլայն Ստելլա Ռիզեմանը՝ երկար, մուգ մոխրագույն անձրևանոցը հագին և սև ժանեկազարդ շալն անփութորեն գլխին գցած: Նրա դեմքը ասես սպիտակ մարմար լիներ մուգ ժանյակի ու խարտյաշ մազերի շրջանակի մեջ, որոնց վրա արծաթափայլ մարգարիտների պես շողշողում էին անձրևի կաթիլները: Նրա փայլուն աչքերը սովորականից ավելի խոշոր ու մուգ էին թվում: Զգուշությամբ դուռը ծածկելով՝ նա դանդաղ ու հանգիստ մոտեցավ Անդրեյ Պետրովիչին: Երիտասարդը շվարած մնացել է իր տեղը նստած և վեր կացավ միայն այն ժամանակ, երբ աղջիկը ետ գցելով իր թաց անձրևանոցը՝ բարևելու համար մեկնեց իր անձրևից թրջված ձեռքը:

— Ստելլա Մարտինովնա, այդ որտե՞ղ եք եղել դուք:

— Այգում:

— Այսպես ուշ ժամի՞ն:

— Այո: Ինձ հարկավոր էր այնտեղ լինել:

Կուրբատովը մի հարցական, զննող հայացք գցեց աղջկա լուրջ, հանգիստ, համարյա պաղ դեմքին: Ստելլան նրան պատասխանեց խոր ու առեղծվածային հայացքով:

— Անդրեյ Պետրովիչ, ես եկել եմ ձեզ բարի ճանապարհ մաղթելու:

— Իսկ ե՞ս ինչ կարող եմ մաղթել, Ստելլա Մարտինովնա:

— Քիչ ժամանակ անց՝ նույնպես բարի ճանապարհ:

— Դուք գնալո՞ւ եք...

— Գնալու եմ:

— Ձեր մերձավորների համաձայնությա՞մբ, թե՞ նրանց կամքին հակառակ:

— Նրանց կամքին հակառակ:

Կուրբատովը ցանկություն զգաց ձեռքերի մեջ առնել անձրևից թրջված այդ գլուխը, որի մեջ այդպիսի խիզախ մտքեր էին թաքնված, սեղմել իր կրծքին և համբուրել:

— Ի՞նչ է պատահել, Ստելլա Մարտինովնա:

Ֆրոյլայն Ռիզեմանը դանդաղորեն նստեց բազմոցին և ձեռքով նշան արեց, որ Անդրեյ Պետրովիչը նորից նստի իր ճամպրուկին, որ և նա կատարեց:

— Ամենից առաջ ուզում եմ ձեզ հայտնեմ, որ ես այլևս հարսնացու չեմ: Ես ազատ եմ: Մի՛ շնորհավորեք ինձ, ես առանց այդ էլ երջանիկ եմ...

— Դուք այլևս չե՞ք սիրում ձեր փեսացուին:

— Ես նրան երբեք չեմ սիրել:

— Եվ այդ հասկացել եք...

— Եվ ես այդ հասկացել եմ միայն այսօր, երբ նա խոսեց ինձ հետ, երբ ես ճանաչեցի նրան...

— Իսկ ձեր ծնողնե՞րը:

— Ծնողներիս հետ էլ ես ամեն ինչ պարզել եմ: Նրանցից ես սպասելիք չունեմ: Ես մենակ եմ աշխարհում, և այդ ինձ այնպիսի համարձակություն է տալիս... Անդրեյ Պետրովիչ, այսօր ես առաջին անգամ զգում եմ, որ չափահաս մարդ եմ: Եվ այդ զգացմունքն ինձ այնպիսի ուժ է տալիս... ինձ թվում է ես կարող եմ երկաթն էլ փշրել:

Անդրեյ Պետրովիչը չէր կարողանում հայացքը կտրել Ստելլայի դեմքից: Նա առաջին անգամն էր աղջկան տեսնում այդպես: Նրա հայացքում, նրա խոսքի մեջ, նրա ամբողջ էության մեջ այսօր մի ինչ-որ նոր բան էր երևան եկել:

— Եվ էլի ահա թե ինչ եմ ուզում ասել ձեզ,— շարունակեց Ստելլա Ռիզեմանը:— Ինձ համար պարզվել է մի ուրիշ բան ևս: Իմ նախկին փեսացուն կշտամբում էր ինձ, թե ես սիրում եմ ձեզ, Անդրեյ Պետրովիչ: Ես մտածեցի դրա մասին և համոզվեցի, որ նրա կշտամբանքն իրավացի է: Ես սիրում եմ ձեզ, Անդրեյ Պետրովիչ:

Անդրեյ Պետրովիչը մի րոպե անշարժ մնաց: Նա միայն նայում էր աղջկան, նայում էր սևեռուն, աչքերն անթարթ, զարմանքից կաշկանդված: Հետո... Հետո նա սկսեց ժպտալ: Նայում էր նրան ու ժպտում... ժպտում էր, մինչև որ նրա աչքերում արցունքներ երևացին: Եվ այդ արցունքներն ավելի ու ավելի առատանալով շողշողուն կաթիլներ դարձած գլորվում էին նրա այտերով, մորուքի վրայով, թափվում բանվորական հագուստի նմանող վերնաշապկի վրա:

Նա կարիք չուներ պատասխանելու Ստելլա Ռիզեմանին, որևէ բան խոստովանելու նրան. Ստելլա Ռիզեմանն այդ արցունքներից կազմեց նրա և՛ պատասխանը, և՛ խոստովանությունը, այդ շողշողուն տառերն էլ այնքա՜ն հասկանալի էին, այնպե՜ս հեշտ էր կարդալ դրանք...

Եվ երբ աղջիկը հրաբորբ աչքերով կարդաց այդ պատասխանը, մոտեցավ Կուրբատովին, երկու ձեռքով գրկեց նրա գլուխը և համբուրեց նրա մազերը, համբուրեց նրա աչքերը, որոնք շրջանակված էին մուգ շրջաններով, որոնցով ճանաչում են գործարանային բանվորներին: Եվ գործարանատեր Ռիզեմանի դուստրը իր մետաքսյա խշխշուն հագուստով նստեց ճամպրուկի վրա, այդ մարդու կողքին, որի հագին բանվորական հագուստ էր, և տղան դեպի իրեն քաշեց աղջկան ու նրա շուրթերին սեղմեց ծարավից պապակած իր շուրթերը...

Դարսված ու կապկպված ճամպրուկի վրա նստել էին մարդ ու կին, որոնք պատրաստվում էին հեռավոր ճամփորդության, նստել էին երկու աշխատավոր մարդ, որոնք գնում էին աշխատանք որոնելու...

Նրանք երկար ժամանակ ոչ մի խոսք չէին ասում, միայն նայում էին միմյանց աչքերի և լուռ հարցնում ու հասկանում, թե ինչպես է իրենց բաժին ընկել այն երջանկությունը, որ հիմա ունեն իրենց ձեռքին, երջանկություն, որի արժեքն ու խորությունը հազիվ էին համարձակվում չափել:

Եվ մինչ նրանք այդ հարցնում էին իրար, պատուհանից դուրս սկսեց լուսանալ:

Առավոտյան արշալույսի ժամին նրանք գտան իրենց հարցի պատասխանը:

Երջանկությունը նրանց բերել էր ինքը՝ արշալույսը:

Արշալույսի ոսկեշող վահանին շողշողուն ճառագայթներով գծված էին երջանկության գրերը:

Այնտեղ ծիրանագույն, արծաթաշող ու ոսկեշող վահանին հրաշեկ նշաններով բոցկլտում էին՝ աշխատանք և սեր բառերը:

Այժմ նրանք ամեն ինչ գիտեին:

Այժմ նրանք հասկացան, թե որքան մեծ է իրենց երջանկությունը:

Եվ նրանք հասկացան կյանքի ամբողջ արժեքը:

10

Երբ Ստելլա Ռիզեմանը վերադարձավ ննջարան, Ռիտան արթնացավ և հարցրեց.

— Որտե՞ղ էիր:

Ստելլան պատասխանեց.

— Հյուր էի գնացել արշալույսին:

Եվ որովհետև Ռիտան չհասկացավ, Ստելլան քրոջը դարձրեց իր ժպտուն դեմքը, որի վրա բոցկլտում էին արշալույսի ցոլքերը և ավելացրեց.

— Ես իմ ամուսնու մոտ էի:

Ռիտայի դեմքը խոժոռացավ, որովհետև նա չէր հանդուրժում, որ իր հետ կատակներ էին անում, շուռ եկավ մյուս կողքի վրա և նորից քուն մտավ:

Իսկ Ստելլան բաց արեց իր մահճակալի մոտի երկու լուսամուտները, որպեսզի այստեղ, սենյակ ևս կարողանա մտնել լուսաբացը, իսկ նրա ետևից էլ՝ նրա ավագ եղբայրը՝ արևը:

Եվ ահա նրանք եկան:

Հենց նոր էր աղջիկն անկողին մտել, արշալույսն արդեն ազդարարեց իր գալուստը: Վերմակի վրա ընկավ արշալույսի ու ոսկեշող ծաղիկների պես բոցակարմիր, ձյունաճերմակ ցողաթաթախ մի փնջիկ... իսկ հետո արշալույսն ինքն սկսեց ծփալով շառագունել սենյակի ներսը և ապա երևաց նաև արևը՝ շուրջն ամեն ինչ լցնելով փայլով ու շողով: Արշալույսի ու արևի գրկում, ծաղիկները կրծքին՝ աղջիկը քուն մտավ և քնեց այնքան ժամանակ, մինչև որ նրան արթնացրեց պատուհանից լսվող սայլակի չխկչխկոցը:

Այդ պարոն Ռիզեմանն էր քաղաք գնում:

Ստելլան սկսեց արագ հագնվել, որովհետև մի կես ժամից հետո էլ կառապանն Անդրեյ Պետրովիչին պիտի տաներ կայարան, իսկ ինքը ցանկանում էր մի անգամ էլ տեսնել մեկնողին:

Աղջիկն արդեն բոլորովին հագնված էր, երբ սենյակ մտավ մայրը:

Տիկին Ռիզեմանը նախ համբուրեց Ռիտային, որ դեռ պառկած էր անկողնում: Ռիտան որպես պատասխան հորանջեց՝ աչքերը տրորելով ու բարձերի մեջ ձգվելով: Հետո մայրը համբուրեց Ստելլայի այտը:

— Հայրիկը պատվիրել է քեզ ասել, Ստելլա, որ դու չհամարձակվես գնալ Կուրբատովին հրաժեշտ տալու, քեզանից հո կարելի է սպասել այդպիսի հիմարություն:

— Ա՛յ թե ինչ: Իսկ եթե պարոն Կուրբատովը գա ինձ հրաժեշտ տալո՞ւ,— հարցրեց Ստելլան ծիծաղելով:

— Դու պետք է խույս տաս դրանից, ինչպես և մենք բոլորս: Այս է հորդ խստագույն պատվերը,— ասաց տիկին Ռիզեմանը՝ ջանալով որքան կարելի է ավելի շատ խստություն տալ իր լալագին նվացող ձայնին:

— Իսկ դու ինքդ, մայրիկ, ինչպե՞ս ես պատվիրում:

— Ես էլ նույնն եմ պատվիրում:

— Ի՜նչ սրտահույզ միաբանություն քո և հորս միջև,— ուրախ գոչեց Ստելլան:— Բայց ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ ես պիտի թաքնվեմ պարոն Կուրբատովից: Ի՜նչ է, կծելո՞ւ է ինձ:

— Բայց դու հո գիտե՞ս, թե հայրդ ինչու է ժամանակից շուտ հեռացնում նրան:

— Ոչ, չգիտեմ:

— *Քո պատճառո՞վ*:

— Իմ պատճառո՞վ: Բայց այդ դեպքում մեղավորը ես եմ, և ոչ թե պարոն Կուրբատովը, որին դուք պատժում եք: Եթե Ռիզեման ամուսինների աղջիկը խելառ է, նրա փոխարեն մի ուրի՞շը պիտի տուժի... Տեսնո՞ւմ ես, մայրիկ, այդպես չի կարելի: Ես պետք է աշխատեմ հարթել այդ անարդարությունը, որ կատարվել է իմ պատճառով: Գոնե հրաժեշտ պիտի տամ նրան:

Ստելլան ծիծաղելով դուրս վազեց սենյակից: Մոր նախազգուշացնող ճիչը բախվեց շրխկոցով փակվող դռանը:

Միջանցքում ֆրոյլայն Ռիզեմանը հանդիպեց պարոն Կուրբատովին, որն արդեն ճանապարհորդական հագուստի մեջ էր:

— Դու գնում ես հրաժեշտ տալո՞ւ, Անդրեյ:

— Այո:

— Մի գնա: Հայրս արդեն գնացել է, իսկ մայրիկիս փոխարեն ես եմ եկել հրաժեշտ տալու:

Ստելլան թևանցուկ արեց Անդրեյ Պետրովիչի հետ, և նրանք միասին ուղղվեցին դեպի սայլակը, որ սպասում էր այգու դարպասի մոտ:

Իսկ տիկին Ռիզեմանն ու Ռիտան ձեռքները սեղմած կանգնել էին բաց լուսամուտի առաջ և ոչինչ չէին կարող անել: Մյուս լուսամուտներից ու սանդուղքի վրայից քմծիծաղ տալով նայում էին ծառաները և ոչինչ *չէին ուզում* անել...

Այդ ժամանակ որտեղից որտեղ լույս ընկավ նաև Էբերհարդն ամբողջովին արտասվաթոր, փաթաթվեց մեկնող բարեկամի ու ընկերոջ վզովը և սկսեց համբուրել նրան, և սա էլ տղային համբուրեց: Տղայի դեմքից երևում էր, որ նա դրանից առաջ էլ անջատման վիշտ էր ապրել. չէ՞ որ հոր մեկնելուց հետո նա ամբողջ ժամանակ եղել էր Կուրբատովի սենյակում:

Երբ Անդրեյ Պետրովիչը սայլակ նստեց, Ստելլան մի անգամ ևս սեղմեց նրա ձեռքը, և սպասուհիներից մեկին թվաց, թե իբր օրիորդն ասաց. «Մինչև շուտափույթ տեսություն»: Օրիորդն ու պատանին թաշկինակներն էին թափահարում մեկնողի ետևից: Իսկ ննջարանում լուսամուտի առաջ կանգնել էին տիրուհին ու օրիորդ Ռիտան, ձեռքները կրծքներին խաչած և ոչինչ չէին կարող անել...

Բայց հայրը ևս ոչինչ չէր կարող անել, երբ ճաշից հետո տուն եկավ և իմացավ տեղի ունեցածը: Ճիշտ է, նա սկսեց աղջկանը նախատել, բայց նրանից այնպիսի պատասխան լսեց, որ մնում էր միայն խրատները թողնել ու մահակը որոնել: Եվ նա այդպես էլ արեց. սկսեց մահակը որոնել, բայց և այնպես ձեռքը չառավ այն, դրա համար նա բավական քաջություն չունեցավ: Ժամանակին նրա գլխում մի միտք ծագեց. իսկ ի՞նչ կասեն հարևանները, եթե իմանան, որ գործարանատեր Ռիզեմանը մահակով ծեծել է իր չափահաս աղջկան: Բացի դրանից հայրը վախենում էր, թե աղջիկը կարող է խիստ ըմբոստ ընդունել իր փեսացուին, երբ երեկոյան նա կգա աղջկա ներողությունը լսելու: Մահակի ժամանակ միշտ էլ կարելի է գտնել: Հենց իսկը տեղին կլինի մահակը ձեռքն առնել, եթե, ասենք, աղջիկը չուզենա ներողություն խնդրել իր փեսացուից: Ռիզեմանը չմոռացավ հիմա էլ աղջկան հիշեցնել իր նախորդ սպառնալիքները:

Բայց մի՞թե սպառնալիքներով կարելի է կոտրել այդպիսի մի աղջկա, եթե նա արդեն բոլորովին ձեռքից դուրս է եկել:

Պարոն Օսվալդ Գեբլերը ներկայացավ: Բայց և գնաց այնպես, ինչպես եկել էր:

Սկզբում նա շատ լավ սկսեց. տխուր էր, գունատ, ընկճված: Մեղմ էր, քաղաքավարի ու զիջող: Խոսում էր հաշտության մասին, ներողություն խնդրել չէր պահանջում:

Ստելլա Ռիզեմանը նույնպես պատրաստ էր հաշտվելու: Նա խոստացավ, որ ոչ մի ոխ չի պահի պարոն Գեբլերի դեմ: Բայց ի՞նչ օգուտ դրանից, եթե իսկույն էլ ավելացրեց, որ ինքն այլևս պարոն Գեբլերի հարսնացուն չէ, որ իրենց նշանադրությունը լուծված է ընդմիշտ, որ նրանք կարող են լինել միայն լավ ծանոթներ, իսկ եթե պարոն Գեբլերը ցանկանում է, կարող են և լավ բարեկամներ լինել:

— Բայց ինչո՞ւ,— հուզված գոչեց պարոն Գեբլերը:

Բանն այն է, որ նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչպես կարող է այսպիսի մերժում լինել հարսնացուից, ինչպե՞ս կարող է որևէ աղջիկ քամահրել իրեն՝ պարոն Գեբլերին: Նա աստված գիտե, թե ինչպիսի մեծ գումար կզոհաբերեր, միայն թե գործն այնպես շուռ տար, որ ինքը խաղա նշանադրությունը լուծողի դերը:

— Բայց ինչո՞ւ,— ամբողջ մարմնով դողալով կրկնում էր պարոն Գեբլերը, թեպետև այդ հարցի պատասխանն արդեն ստացել էր իրենց անցյալ խոսակցության ժամանակ:

— Որովհետև մենք իրար չենք սիրում,— համբերությամբ բացատրում էր Ստելլան:

— Բայց ես սիրում եմ քեզ:

— Ո՛չ այնքան ուժեղ, որքան ես կուզենայի: Եվ, որ մեր երկուսիս համար միանման կարևոր է, ես չեմ սիրում քեզ:

«Բայց դա լինել չի կարող»,— քիչ էր մնում դուրս թռչել պարոն Գեբլերի բերանից: Սակայն նա սկսում էր ավելի պարզ գիտակցել, որ այնուամենայնիվ, դա հնարավոր բան է, ուստիև ավելի տղամարդություն համարեց նահանջել. նա ձեռքը մեկնեց աղջկան՝ հրաժեշտ տալու:

Ստելլան մոտեցավ նրան, ձեռքը դրեց ուսին, ջերմ ու բարեկամաբար նայեց նրա աչքերին ու ասաց.

— Ես կուզենայի, որ դու շուտ մոռանաս քո այս դառնությունը: Մնացած ամեն ինչի համար ես միանգամայն հանգիստ եմ: Վաղ թե ուշ դու քեզ համար կին կգտնես, որի հետ երջանիկ կլինես, որովհետև կհասկանաս նրան: Այն ժամանակ դու փառք կտաս աստծուն, որ ինձնից բաժանվել ես: Ես չեմ կարող այնպիսի կին լինել, որ քեզ է հարկավոր: Հաջողություն քեզ, Օսվալդ:

Իսկ երբ պարոն Գեբլերն արդեն մոտեցել էր դռանը, նրա նախկին հարսնացուն ավելացրեց.

— Եվ էլի, այ թե ինչ, սիրելի բարեկամս: Դու կարող ես ամեն տեղ ասել, որ մեր նշանադրությունը լուծվել է *քո ցանկությամբ*: Ես էլ նույնը կասեմ, կարող ես հավատացած լինել: Հասարակության մեջ քո ունեցած դիրքն այդ է պահանջում, իսկ ինձ համար դա նշանակություն չունի... Լա՞վ, Օսվալդ:

Աղջկա խոսքերի մեջ ոչ մի կծու բան չկար, ուստի Օսվալդը դուրս գնալիս միայն գլխով արեց: Սակայն անհայտ մնաց՝ համաձայնե՞ց նա այդ առաջարկությանը, թե՞ մերժեց այն:

Առաջին մարդը, որին պարոն Գեբլերը հանդիպեց հարևան սենյակներում, նրա նախկին «ապագա աներն» էր: Նա ընդառաջ եկավ երիտասարդին, ըստ որում պարոն Ռիզեմանի դեմքը իրենից ներկայացնում էր մի խոշոր հարցական նշան: Բայց պարոն Գեբլերի խռիվ մազերն ու կախ ընկած բեղերը ոչ մի լավ բան չէին գուշակում:

— Պարոն Ռիզեման,— ասաց երիտասարդ Գեբլերը, և նրա դողդոջուն ձայնի մեջ հնչեց հազիվ զսպված ցավը:— Երեկ դուք ինձ խոսք տվիք, որ ձեր աղջիկը ետ կկենա իր խելառ մտադրությունից և ներողություն կխնդրի ինձ հասցրած վիրավորանքի համար: Դուք ձեր խոստումը չկատարեցիք:

— Ինչպե՞ս: Մի՞թե նա համարձակվել է...

Երիտասարդ Գեբլերը միայն ուսերը թոթվեց և ձևացրեց, թե իր գլխարկն է որոնում:

Պարոն Ռիզեմանն իր ամբողջ լայն իրանով առաջ անցավ և փակեց պարոն Գեբլերի ճանապարհը:

— Երևում է, դեռ շատ վաղ է,— թոթվեց նա հաշտարար տոնով, իսկ նրա մանրիկ աչքերում մի չարության կայծ շողաց. նա զայրացել էր աղջկա վրա:— Ես դեռ չեմ հասցրել ինչպես պետք է կոտրել նրան, և մեկ էլ... մեկ էլ... գայթակղիչը միայն այսօր առավոտյան է գնացել... Բայց... Ես քեզ խոսք եմ տալիս, սիրելի զավակս...

— Ձեր խոսքին ես այլևս չեմ հավատում:

— ...Բայց և այնպես ես քեզ խոսք եմ տալիս, որ երեք... դե, ասենք մի հինգ օրից հետո... ամենաշատը հինգ-վեց օրից հետո... չէ՞ որ ես եմ այս ընտանիքի գլխավորը...

— Այս տանը ընտանիքի գլխավոր չկա՛:

— Լավ, սպասիր մի քիչ... Զավակս, ո՞վ է այդպես միանգամից հարցը լուծում... Օ՜հ, հիմիկվա այս երիտասարդները, մի գրոշի համբերություն էլ չունեն:

Բայց այս կշտամբանքով Ռիզեմանն ամեն ինչ փչացրեց: Երիտասարդ Գեբլերը՝ գլուխը վեր տնկեց, քայլեց դեպի դուռը և գոչեց.

— Օսվալդ Գեբլերին համբերություն հարկավոր չէ, երբ նա արժանի է համարում նշանվել մի հասարակ կաթսայագործի աղջկա հետ: Օսվալդ Գեբլերը քարշ չի գա կաթսայագործի աղջկա ետևից, այս լավ հիշեցեք, պարո՛ն Ռիզեման:

Եվ գլխարկը վերցնելով անհայտացավ:

Ռիզեմանն ասես կաթվածահար եղած նայում էր շրխկոցով փակված դռանը: Նայում էր ակնապիշ ու անշարժ, մինչև որ մոտերքն ինչ-որ մի տեղից լսվող բարձր հեծկլտանքը նրան ստիպեց մի քանի մատնաչափ շուռ տալ իր գլուխը:

Այնտեղ ձեռքերը քունքերին սեղմած կանգնած լալիս էր տիկին Ռիզեմանը: Նրա դեմքն արտահայտում էր մորթելու դատապարտված զոհի հուսահատություն:

— Մարտի՛ն, նա հայհոյեց քեզ, կաթսայագո՞րծ անվանեց:

— Այո, նա հայհոյեց ինձ, կաթսայագործ անվանեց:

— Բայց չէ՞ որ դու գործարանատեր ես:

— Ես գործարանատեր եմ,— կրկնեց պարոն Ռիզեմանը, մեքենաբար, որովհետև նրա գլուխը դեռ ի վիճակի չէր բան հասկանալու. նրա աչքերի առաջ ամեն ինչ պտույտ էր գալիս գործարանի հսկա թափանիվի նման:

Նրա ողորմելի, շշմած տեսքը տիկին Ռիզեմանի սիրտը լցրեց խոր կարեկցանքով: Նա վազեց ամուսնու մոտ, կախվեց նրա պարանոցից և թնկթնկաց.

— Մարտի՛ն, մենք խայտառակվեցի՛նք: Խայտառակվեցի՛նք ամբողջ աշխարհի առաջ:

Մարտինն ինքն էլ հասկանում էր այդ և հազիվ էր մի քիչ ուշքի եկել, նրա կրծքի տակ մի զարհուրելի զայրույթ փոթորկեց նրանց դեմ, ովքեր այդ խայտառակության մեղավորն էին:

Խայտառակության մեղավորներից մեկը՝ տղան այլևս ձեռք չէր ընկնի, բայց մյուսը՝ աղջիկը ձեռքի տակ էր:

— Ես կսպանե՛մ նրան: Ես փոշի՛ կդարձնեմ նրան,— մռնչաց նախկին հասարակ կաթսայագործը, կնոջը մի փունջ խծուծի պես դեն նետեց իր պարանոցից և բռունցքները բարձրացնելով վազեց դեպի աղջիկների զարդասենյակը, որտեղից մի քանի րոպե առաջ դուրս էր եկել երիտասարդ Գեբլերը:

Պարոն Ռիզեմանը դուռը հրեց ավելի շուտ ոտքով, քան ձեռքով և զարհուրելի հայհոյանքներով ներխուժեց սենյակ:

Բայց կոկիկ զարդասենյակը դատարկ էր:

Խայտառակության մեղավոր աղջկան ոչ մի տեղ գտնել չհաջողվեց:

Ստելլան անտառից վերադարձավ միայն մի քանի ժամ հետո, երբ հոր ցասումն արդեն իջել էր:

11

Ռիզեման ամուսինների համար, իրոք, շատ ցավալի բան էր, որ իրենց դստեր նշանադրությունը երիտասարդ Գեբլերի հետ լուծվել էր: Հայր և որդի Գեբլերները միասին ունեին մի առևտրական ձեռնարկություն, որի ժառանգորդն էր դառնալու Օսվալդը: Նրանք ոչ միայն ամենահարուստ վաճառականներն էին մի քանի գավառի սահմաններում, այլև բարձր հասարակության մեջ շատ հարգված մարդիկ էին: Զբաղված լինելով գյուղատնտեսական մեքենաների ու երկաթի, գործիքների, պարարտանյութերի, սերմացուի, աղի, տառեխի, նավթի, որսորդական իրերի և այլ ապրանքների առևտուրով՝ Գեբլերները շատ գնորդներ ունեին կալվածատերերի մեջ, իսկ նրանցից մի քանիսի հետ էլ հանդիպում էին հասարակության մեջ, մանավանդ որ երկուսն էլ, և՛ հայրը, և՛ որդին սպորտսմեններ էին. ձիարշավների ժամանակ նրանց ձիերն աչքի էին ընկնում, բացի դրանից Գեբլերները կալվածատերերից ընդարձակ հողամասեր էին կապալով վերցնում որսի համար: Ռիզեմանների վաղուցվա բաղձանքն էր նույնպես ընկնել բարձր հասարակության

մեջ, որտեղ նրանք կարող կլինեին սեղան նստել ազնվական տոհմի անձանց հետ միասին, և այդ բաղձանքը հիանալիորեն պիտի իրականանար աղջկա այդ ամուսնության շնորհիվ: Իսկ այժմ ամեն ինչ փուլ եկավ: Դա շատ ցավալի ու դառն բան էր նրանց համար:

Սակայն պարոն Ռիզեմանի սիրտը դառնացած էր մի ուրիշ պատճառով ևս: Այն վիրավորանքը, որ նետել էր երիտասարդ Գեբլերը, խորապես խոցել էր պարոն Ռիզեմանի սիրտը, և դա լիովին հասկանալի էր: Բայց հիմա նրա սիրտը կրծում էր մի ուրիշ միտք ևս. նա այդպես էլ ոչ մի պատասխան չտվեց: Այնինչ եթե չլիներ այն հիմար շփոթմունքը, ինքը կարող էր այնպես պատասխանել, որ կխոցեր մինչև նրա լերդութոքը: Եվ այդպիսի պատասխանն անհրաժեշտ էր. չէ՞ որ միևնույն է, ամեն ինչ վերջացած է: Նա, Մարտին Ռիզեմանը կարող էր...ո՞չ, նա *պարտավոր* էր Գեբլերի երեսին գոռալ. «Իսկ կաթսայագործի աղջիկը առավել ևս չի՛ վազի Սիյիմ-տառեխակերի ետևից: Կաթսայագործի աղջիկը հենց նոր Սիյիմ-տառեխակերին ցույց տվեց մեր տան դուռը»:

Բանն այն է, որ վաղուց, շա՛տ վաղուց, երբ դեռ ոչ ոք իր անուն-ազգանունը չէր փոխում, Օսվալդ Գեբլերի պապը քաղաքի ծայրին, խճուղու մոտ գյուղացիական զանազան ապրանքների մի խանութ ուներ և որպես նուրբ խորտիկ վաճառում էր նաև արտասովոր համեղ մի տեսակ տառեխ: Քանի որ նրա խանութի ճակատին, հասկանալի է, ցուցանակ չկար, ապա մարդիկ նրա հարգարժան անվանն ավելացրել էին «տառեխակեր» մականունը: Եկեղեցական մատյաններով ավագ Սիյիմ-տառեխակերի ազգանունն էր Կաբլի: Թե ինչպես էր ժամանակի ընթացքում այդ ազգանունը փոխվել «Գեբլեր»-ի, այդ հայտնի է միայն աստծուն և մեկ էլ Սիյիմ-տառեխակերի որդուն: Պատմությունը դրա մասին լռում է:

Բայց ինչո՞ւ այս բանը պիտի լռության մատներ Մարտին Ռիզեմանը, որն իր անվանը կցել է միայն մի փոքրիկ «ին» մասնիկ: Ինչո՞ւ պետք է ինքը լռեր մանավանդ այժմ, երբ այդպես ծանրորեն անարգվել էր:

Եվ Ռիզեման հայրը այրող ափսոսանքից մորմոքվելով ծոծրակն էր քորում: Այդպիսի մի շրխկան պատասխան կար, և հանկարծ այն դեղնակտուց լպիրշին հաջողվեց խույս տալ դրանից: Ռիզեմանին մեծապես վրդովել էր և այն, որ երիտասարդ Գեբլերը շատ նրբանկատ հարցում էլ կարողացել էր իր առաջն ընկնել:

Հետևելով Ստելլա Ռիզեմանի խորհրդին և պաշտպանելով իր տղամարդկային արժանապատվությունն ու բարի անունը՝ պարոն Օսվալդ Գեբլերն անհապաղ սկսեց քաղաքում լուր տարածել, թե ինքն է լքել իր հարսնացուին: Ռիզեմանը խիստ շատ էր ուշացել իր վերսիայով, որն ասում էր, թե հարսնացուն է լքել Գեբլերին: Նրան լսողները միայն տարակուսանքով ուսերն էին թոթվում: Չօգնեց և այն, որ Ռիզեմանն աշխատում էր այդ պատմությանն ավելի շատ ճշմարտանմանություն տալ, նկարագրում էր, թե ինչպես ինքը դուռը ցույց տվեց բոլորովին լկտիացած երիտասարդ Գեբլերին, վրան գոռալով. «Գործարանատեր Ռիզեմանի աղջկան այդպիսի Սիյիմ-տառեխակեր հարկավոր չէ՞: Գործարանատեր Ռիզեմանի դուստրը վաղուց արդեն ուզում էր, որ Սիյիմ-տառեխակերն իր ետևից քարշ չգա»:

Մի քանի անգամ էլ Ռիզեմանն այնպես դաժանորեն բռնվեցիր պատմության ստի մեջ, որ չէր իմանում ուր չքվի: Նրան պատասխանում էին. «Բայց այդպիսի բան լինել չի կարող, պարոն Ռիզեման. ձեր աղջիկն ինքն է ինձ ասել, որ նշանադրությունը լուծված է պարոն Գեբլերի ցանկությամբ»:

Եվ երբ պարոն Ռիզեմանն աղջկան հարցրեց, թե որևէ մեկին ասե՞լ է այդպիսի բան, Ստելլան պատասխանեց. այո, ասել եմ:

Պատասխանեց ամենայն հանգստությամբ:

Բայց ինչո՞ւ այդպես ասել մարդկանց:

Պատասխան. որպեսզի դա փոխհատուցում լինի պարոն Գեբլերին: Հատուցում լինի հարսնացուին կորցնելու համար: Չէ՞ որ վնասը նրան է հասել.

Ա՛խ, ա՛խ, ա՛խ, այդպիսի աղջկա հետ ինչպե՞ս կարող ես վարվել... Քար պիտի կախել նրա վզից և ջրի ամենախոր տեղը գցել...

Հայրական տան մեջ Ստելլայի համար կյանքը դժոխք դարձավ:

Նա երևի ծեծի համն էլ կտեսներ, եթե չկարողանար զգուշանալ դրանից: Ամեն անգամ, հենց որ հայրը զայրույթով էր բռնվում, նա անհայտանում էր: Երբ հոր ցասումը մի քիչ մեղմանում էր, նորից լույս էր ընկնում:

Բայց ահա հասավ այն օրը, երբ նա անհայտացավ և այլևս չերևաց:

Օ՜, այդ օրը: Ռիզեմանների տանը հասած սոսկալի, անմոռանալի խայտառակության օրը:

Մի օր, երբ գործարանատեր Ռիզեմանն ստիպված էր խոստովանել, որ ինքը պարտություն կրեց, որ ինքը ջարդված, ջախջախված է...

Էբերհարդը հաջողությամբ հանձնեց իր վերաքննությունները:

Գոնե սա մի փոքր մխիթարություն էր հայրական ընկճված սրտի համար այս ծանր ժամանակին:

Վերջին քննության հաջորդը օրը, որ կիրակի էր, Ստելլան առավոտյան գնաց քաղաք և երեկոյան չվերադարձավ: Երկուշաբթի օրը հայրը նրան չգտավ նաև քաղաքի բնակարանում, ամբողջ օրվա ընթացքում էլ այնտեղ չերևաց, իսկ երեկոյան էլ ամառանոցում նույնպես չկար ու չկար: Անհապաղ սկսվեցին որոնումներ և հարցուփորձ: Հետևյալ օրը ծնողները հանգեցին մի ցնցող հետևության. նրանց դուստրը փախել էր հայրական տնից...

Ոստիկանատնից անձնագիր էր ստացել, խնայողական դրամարկղից մի քանի հարյուր ռուբլի գումարով տոկոսներ էր վերցրել, քաղաքի բնակարանից հագուստն էր տարել… Բացի սրանցից ծանոթներից մեկը կիրակի օրը երեկոյան Ստելլային քաղաքային կայարանում տեսել էր Պետերբուրգ գնացող գնացքը նստելիս...

Երբ Ռիզեմանն այս տեղեկությունները հավաքելով տուն վերադարձավ, բոլորովին շշված էր: Նա ոչ մի բառ չարտասանեց, երբ կինը ձեռքերը երկինք մեկնելով սկսեց ողբալ. «Նա փախել է իր ռուսի՜ մոտ»: Այստեղ Ռիտան էլ հիշեց, որ Կուրբատովի մեկնումի նախօրյակի գիշերը Ստելլան բակից եկավ և ասաց. «Ես իմ ամուսնու մոտ էի...»: Հանկարծ Ռիզեմանն ուշքի եկավ: Նա այնպես վեր թռավ, ասես ոտքերի տակ հատակը բոցավառվել էր: Այնպիսի կատաղություն էր համակել նրան, որ շրթունքներին փրփուր երևաց, և նա սկսեց մոլեգնած խելագարի պես աղմկել:

Մահակը վերցնելով նա սկսեց փշրել ամեն բան, ինչ կար դահլիճում աղջիկների զարդասենյակում՝ լամպերը, ծաղկամանները, հայելիները, բոլոր այն իրերը, որոնք փշրվում են զրնգոցով...

Կնոջն ու աղջկան մեծ դժվարությամբ միայն հաջողվեց հանգստացնել նրան և մահակը ձեռքից առնել:

Ամբողջովին քրտնամխած և ուժասպառ՝ խեղճն ընկավ բազկաթոռին, երեսը ծածկեց ձեռքերով և սկսեց հեկեկալ:

Նա ողբում էր իր հպարտությունը, որին այդպիսի ծանր հարված էր տրված:

Վերջապես ուշքի գալով՝ թշվառը գոչեց.

— Գործարանատեր Ռիզեմանն ավագ դուստր չունի: Թող ոչ ոք նույնիսկ նրա անունը չտա այս տան մեջ:

Մի օր հետո Ստելլայից նամակ եկավ, որով նա ծնողներին խնդրում էր իր մասին չանհանգստանալ և հաղորդում էր, որ մայրաքաղաքում բժշկական գիտություն է սովորելու:

Բայց քանի որ Ռիզեմանն այլևս ավագ դուստր չուներ, ապա հայրը հազար պատառ արեց այդ նամակը և ընտանիքին խիստ պատվեր տվեց այդպիսի նամակներ չընդունել:

12

Եվ այնուամենայնիվ Ռիզեմանը երկու աղջիկ ուներ:

Այդպես էր ասում նրա հայրական սիրտը, նրա վիրավորված հպարտությունը, որ հատուցում էր պահանջում:

Եվ, վերջապես, հո արցունքների մեջ չէր խեղդելու իր կնոջը:

Մի գեղեցիկ օր Պետերբուրգյան կողմի Բոլշայա Մոնետնայա փողոցի N 47 տան չորրորդ հարկի սանդղահարթակի դռան առաջ, որի վրա կողք կողքի սպիտակին էին տալիս երկու այցետոմս, կանգնել էր մի հաստամարմին տարեց մարդ: Ֆուլյարե մեծ թաշկինակով երեսի քրտինքը սրբելով՝ հաստամարմին մարդը ծանր փնչում էր ու հևում. դիք սանդուղքով այդքան բարձրանալը նրա թոքերի համար բավական դժվար բան էր եղել: Նրա աչքերը սանդղավանդակի կիսախավարին չէին վարժվել, ուստի լուցկի վառեց և նրա լույսով նայեց դռանն ամրացված այցետոմսերին: Նույն վայրկյանին լուցկին ընկավ հատակին, և տարեց մարդու կրծքից մի ծանր հառաչանք դուրս թռավ:

— Այդպես էլ կա՛,— մրմնջաց նա ատամների արանքից, ասես ցավը զսպելով:— Օ՜հ, այդպես էլ կա: Արծաթե գլխիկով հաստ գավազանն աջ ձեռքում ավելի ամուր սեղմելով՝ նա ձախ ձեռքով արագ ու կտրուկ սեղմեց զանգի կոճակը:

«Ես նրան ցույց կտամ: Նա դեռ ինձ կճանաչի»,— մտածեց պարոն Ռիզեմանը, և մի ջերմ ալիք հորդեց դեպի նրա գլուխը, ականջները խշշացին, աչքերը շաղվեցին:

Դուռը բացվեց, և պարոն Ռիզեմանն արագ քայլով սենյակ մտավ:

Ի զարմանս նրա՝ իր առաջ կանգնած էր մի սպա: Ռիզեմանը, ճիշտ է, չնայած սպայական համազգեստին, իսկույն ճանաչեց Անդրեյ Պետրովիչին, բայց մի ինչ-որ շփոթմունք մի վայրկյան կաշկանդեց գործարանատիրոջը. նա միշտ էլ մի առանձին ակնածանք էր զգում զինվորական համազգեստի վերաբերմամբ:

Անդրեյ Պետրովիչն առանձին սիրով չէր հագնում զինվորական համազգեստը, որ սահմանված էր ռազմա-բժշկական ճեմարանի ունկնդիրների համար, դրա համար էլ ամառը Ռիզեմանների տանն ապրելիս կամ սովորական քաղաքացիական զգեստ էր հագնում, կամ ուսանողական բաճկոն, որ մնացել էր իրավաբանական ֆակուլտետում սովորելու ժամանակներից: Իսկ այժմ, քանի որ հաճախում էր դասախոսությունների, հասկանալի է, նորից սպայական համազգեստ էր հագնում, որին պարոն Ռիզեմանն ամենևին չէր սպասում:

Ուշքի գալով իր ապշանքից՝ ծերունի պարոնն առանց բարևելու կարճ ու կտրուկ հարցրեց.

— Որտե՞ղ է իմ դուստրը:

Անդրեյ Պետրովիչը շուռ եկավ դեպի հարևան սենյակը տանող դուռը և ձայն տվեց.

— Ստելլա, այստեղ արի, հայրդ ուզում է քեզ տեսնել:

Եվ իսկույն դռան մեջ երևաց Ռիզեմանի դուստրը: Նա մի քանի քայլ արեց դեպի հայրը, բայց տեսնելով նրա կարմրատակած դեմքն ու շողարձակ հայացքը՝ կանգ առավ:

— Ա՛յ թե ինչ: Ուրեմն դուք միասի՜ն եք ապրում,— գոռաց Ռիզեմանը, և նրա ձայնի մեջ լսվեց վերահաս փոթորկի որոտը:

— Այո, մենք միասին ենք ապրում,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը:

— Ինչո՞ւ:

— Այսպես ավելի էժան է նստում, և մենք իրար հետ ընկերություն ենք անում:

Անդրեյ Պետրովիչի հանգստությունը, որ Ռիզեմանը լկտիություն էր համարում, գործարանատիրոջը զրկեց ինքնատիրապետումից:

— Սրիկա՛, անպատկա՛ռ,— մռնչաց նա առյուծի բամբ ձայնով և գավազանով պիտի հարձակվեր Անդրեյ Պետրովիչի վրա, եթե Ստելլան չշտապեր նրանց միջև ընկնել:

Աղջիկն իր բոլոր ուժերը ժողովելով բռնեց հոր ձեռքը, ետ քաշեց այն և մեղմ, հաշտարար տոնով ասաց.

— Հայրիկ, մի՛ անիր այնպիսի բան, որի համար հետո պիտի ափսոսաս: Դու Անդրեյ Պետրովիչին նախատելու իրավունք չունես: Նա ամենևին մեղավոր չէ, որ ես այստեղ եմ: Եթե դրա մասին խոսել ես ուզում, խոսիր միայն ինձ հետ:

Բայց Ռիզեմանը կոպտորեն մի կողմ հրեց աղջկան, ցատկեց Կուրբատովի մոտ և նրա երեսին շպրտեց.

— Դավաճա՛ն, գայթակղի՛չ, գրպանահատ:

— Բարի եղեք, պարոն Ռիզեման, նստեցեք,— ասաց Անդրեյ Պետրովիչը, ցույց տալով բազմոցը և իր համար էլ մի աթոռ քաշելով նրա մոտ:

Եվ պարոն Ռիզեմանն իրոք նստեց բազմոցին, ասես իր դեմքին հառած այդ խորաթափանց, հանգիստ հայացքը կախարդեց նրան և նրա մեջ զսպեց գիշատչին:

— Պարոն Ռիզեման,— սկսեց Անդրեյ Պետրովիչը, երբ նրանք նստեցին իրար դիմաց:— Եթե նեղություն եք քաշել գալ Պետերբուրգ, անտարակույս դուք այդ արել եք մի որոշ նպատակով: Երևի այստեղ եք եկել ո՛չ միայն ինձ նախատելու համար: Ի՞նչն է ձեր գալու նպատակը: Ասացեք ինձ, և մենք արագորեն հարկավոր որոշման կհանգենք:

— Ես պահանջում եմ, որ դուք վերադարձնեք իմ դստեր պատիվը,— գոչեց պարոն Ռիզեմանը:

— Բայց ես չեմ հափշտակել ձեր դստեր պատիվը:

— Ա՛խ, այդպե՛ս: Իսկ մի՞ թե նա ձեր ետևից չի եկել այստեղ: Մի՞թե ես հիմա ձեզ երկուսիդ միևնույն բնակարանում չգտա:

— Ձեր դուստրը Պետերբուրգ է եկել բժշկական դասընթացներում սովորելու, և քանի որ մենք սիրում ենք իրար և փող քիչ ունենք, ապրում ենք մեկ բնակարանում: Դրանից ձեր դստեր պատիվը չի տուժել, որովհետև ո՛չ ես, ո՛չ նա, մեզանից ոչ մեկը ոչ մի վատ բան չի արել:

— Այդպես մտածում են միայն կորած մարդիկ:

— Մենք մեզ կորած մարդկանց շարքը դասել չենք կարող, որովհետև մեր կյանքն անբասիր է... Բայց ի՞նչ ձևով ես կարող եմ վերականգնել ձեր դստեր պատիվը, ինչպես պահանջում եք դուք:

— Դուք պետք է նրան դարձնեք ձեր օրինական կինը:

— Նա հենց հիմա էլ իմ օրինական կինն է:

— Առանց ծնողների թույլտվությա՞ն, առանց եկեղեցում պսակվելո՞ւ:

— Այո, որովհետև մենք սիրում ենք իրար:

Ստելլայի հայրը Կուրբատովի վրա այնպիսի մի հայացք գցեց, ասես կասկածում էր՝ խելքը տե՞ղն է արդյոք կամ կատակ չի՞ անում նա: Հետո հայրը նայեց իր աղջկան, ասես սպասելով, թե նա կբողոքի կամ ամոթից կկարմրի:

Բայց Ռիզեմանի դուստրը չկարմրեց, նա հոր առաջ կանգնել էր ձիգ, նրա աչքերը փայլում էին:

— Պարոն, դուք պետք է պսակվեք իմ աղջկա հետ,— գոչեց Ռիզեմանը ցասումի մի նոր պոռթկումով: Նրա դեմքը կապտել էր:

— Եթե դա անհրաժեշտ է և եթե իմ կինը համաձայն է, ես պատրաստ եմ,— պատասխանեց Անդրեյ Պետրովիչը:

Ստելլան մոտեցավ հորը, ձեռքը դրեց նրա ուսին և ասաց.

— Հայրիկ, ես դեմքիցդ տեսնում եմ, որ դու վշտացել ես իմ պատճառով: Մայրիկն է՞լ է վշտացել:

— Ավելի լավ է հարցրու՝ կենդանի՞ է նա,— դժվարությամբ արտասանեց Ռիզեմանը, և նրա մորուքը դողդողաց: Իսկ այդ մորուքը վերջին ժամանակներս սպիտակել էր ձյունի պես:

— Այդ դեպքում արի շուտ պսակվենք, Անդրեյ,— ասաց Ստելլան, և հորը թողնելով, արագ մոտեցավ ամուսնուն, որպեսզի ձեռքը մեղմորեն ու հաշտարար ձևով նրա ուսին էլ դնի:

— Ես պատրաստ եմ,— կարճ պատասխանեց Անդրեյ Պետրովիչը:

Ռիզեմանը ճակատի պաղ քրտինքը սրբեց և արդեն հանդարտվող որոտի նմանվող ձայնով ասաց.

— Պսակից առաջ դեռ պետք է նշանադրությունը կայանա: Ես Պետերբուրգից չեմ գնա, մինչև ձեր նշանադրությունն ազդարարող տոմսերն իմ գրպանում չլինեն: Հիմա ես կգնամ դրանք պատվիրելու:

Անդրեյը և Ստելլան չէին ծիծաղում. նրանք խղճում էին ծերունի պարոնին, որին այդպիսի ծանր հոգսեր էին կեղեքում: Նրանք արգելք չեղան, որ նա գլխարկն ու գավազանը վերցնի և անհապաղ գնա պատվիրելու նշանադրության ծանուցագրերը, առանց որոնց նա Պետերբուրգից գնալ չէր ուզում: Եվ նա երիտասարդների մոտ վերադարձավ միայն այն ժամանակ, երբ տոմսերն արդեն գրպանումն էին:

Եվ միայն այժմ, որ մի քիչ էլ հակասում էր սովորական կարգին, նա տվեց իր հայրական օրհնությունը:

Նա այդ արեց հակիրճ ու պաղ, խոսում էր դժկամորեն: Բայց և այնպես օրհնությունը տրված էր: Բացի դրանից, չսպասելով Ստելլայի հարցին, Ռիզեմանն ավելացրեց, որ աղջկանը թույլատրում է սովորել և բժիշկ դառնալ:

Բայց նրան անհանգստացնում էր մի ուրիշ հարց ևս, որ վերաբերում էր արտաքին պատշաճության:

Նա պահանջեց, որ փեսացուն ու հարսնացուն մինչև պսակվելն անջատ ապրեն: Հարսնացուն պետք է իսկույն փոխադրվի մի ուրիշ բնակարան: Բայց այս հարցում պարոն Ռիզեմանը հաջողություն չունեցավ. երիտասարդները եռանդով դիմադրում էին նրա պահանջին և կարողացան ապացուցել, որ դրանից ոչինչ չի ստացվի, ինչ եղել է, եղել է: Եվ հայրը դժկամությամբ զիջեց:

Բայց ես չեմ ուզում, որ Ռիզեմանի դուստրն ապրի այսպիսի մի բնի մեջ,— ասաց նա քիթը վեր տնկելով և մի հայացք գցելով երիտասարդ զույգի աղքատիկ բնակարանին:

Եվ նա գրպանից հանեց կաշվե մեծ քսակը, սեղանի եզրին շարեց ոսկե դրամների մի քանի սյունիկ: Երիտասարդ զույգը չհակառակվեց դրան, որպեսզի նրա տրամադրությունը չփչացնի:

Հետո գործարանատեր Ռիզեմանը շտապ հեռացավ այդ մեղքի բնից, որտեղ իր համար ապաստան էր գտել այդքան մեծ ու անաղարտ երջանկությունը:

Մերձբալթյան քաղաքում մի թաս սուրճի կամ մի գավաթ գարեջրի առաջ նստած դեռ էլի մի ամբողջ տարի շարունակում էին հոլովել Ստելլա Ռիզեմանի պատմությունը:

Վերջապես տեղի էր ունեցել մի դեպք, որն իսկական սենսացիա էր առաջացրել, ուժեղ շարժման մեջ էր դրել մտքերն ու լեզուները:

Եվ ինչպիսի՜ ազդեցությամբ էին համազարկերը հաջորդում իրար: Հազիվ էին հասցնում քննարկել մի դեպքը, երբ արդեն նրան փոխարինում էր մի ուրիշը:

Ամենից առաջ օրիորդ Ռիզեմանի և երիտասարդ Գեբլերին ջանադրության լուծումը:

Հետո աղջկա փախուստը մայրաքաղաք, «սիրեկանի մոտ»:

Այնուհետև աղջկա հոր պահանջով նրա նշանադրությունն ու ամուսնությունը սիրեկանի հետ:

Եվ, վերջապես, ջահել կնոջ ընդունվելը բժշկական դասընթացներում...

Քանի որ այդ աղջիկն ընդունակ է այդպիսի խելառությունների, նշանակում է նա պակասամիտ է. ի՜նչ կասկած կարող է լինել: Եվ ավելի քան մեկ տարի խոսակցության նյութը հենց միայն «խելագար Ստելլա Ռիզեմանն» էր: Եվ երբ մյուս մանրամասնություններն արդեն մի քիչ մոռացվել էին, «խելագար Ստելլայի» բժշկական դասընթացներում լինելու մասին դեռ էլի շարունակում էին խոսել գլուխներն օրորելով ու հայացքները երկինք գցելով և կարեկցելով «դժբախտ Ռիզեմաններին»:

Որովհետև ինչպե՞ս կարող էր **կինը**, կարգին ընտանիքի և հարուստ ծնողների աղջիկը, ինչպե՞ս կարող էր **ուսանողուհի** դառնալ:

Խե՜ղճ մերձբալթյան քաղքենիներ. նրանք ի վիճակի չէին այս բանը ո՛չ հասկանալու, ո՛չ էլ մոռանալու:

Ճիշտ այնպես, ինչպես խեղճ տիկին Ռիզեմանը ի վիճակի չէր մոռանալու, որ իր աղջիկն ամուսնացել է... ա՛յլ դավանանքի մարդու հետ:

Միայն պարոն Ռիզեմանը համեմատաբար հեշտ դիմացավ այն դժբախտությանը, որ հասել էր իրեն, իր տանը և հասարակությանը: Չէ՞ որ նա առևտուրի մարդ էր և կարողանում էր հարմարվել ամեն մի հանգամանքի:

Եթե որևէ մեկը նրա աղջկա մասին նրա հետ խոսք էր բացում ցավակցությամբ կամ ծաղրաբար, Ռիզեմանն աչքերը չռում էր, զարմանքով ուսերը թոթվում և իսկական առաջադեմ մարդու տոնով գոչում էր.

— Ես ձեզ չեմ հասկանում: Ինչո՞ւ պիտի կինը բարձրագույն կրթություն չստանա, մասնագետ չդառնա: Չէ՞ որ մենք ապրում ենք քսաներորդ դարում: Ես պարծենում եմ իմ աղջկանով. կգա ժամանակ, երբ նրա այցետոմսը կզարդարի բժշկի պատվավոր կոչումը... Իսկ դուք, դուք բոլորդ ողորմելի, հետադեմ մարդիկ եք, չեք հասկանում ժամանակի ոգին և նոր հոսանքները:

Այսպես էր ասում գործարանատեր Մարտին Ռիզեմանը:

Եվ անհամբեր սպասում էր, թե վերջապես ե՞րբ իր աղջկա այցետոմսը կզարդարի բժշկի պատվավոր կոչումը:

1904